

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության և Եվրահանձնաժողովի միջև
"Եվրոպական հարեւանության քաղաքականության" շրջանակներում
կնքված Գործողությունների ծրագրով տարածաշրջանային
համագործակցության, միգրացիայի, կայուն զարգացման և
բնապահպանության ոլորտներում նախատեսված միջոցառումների
մոնիթորինգի վերաբերյալ

*Ուսումնասիրությունը կատարվել է 2007 թ. նոյեմբեր – 2008 թ. մարտ ամիսներին
"Հայաստանում ԵՀՔ Գործողությունների Ծրագրի մոնիթորինգ" ծրագրի
շրջանակներում Միջազգային զարգացման գործակալության հայաստանյան
գրասենյակի (DFID-Armenia) օժանդակությամբ:*

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն

*"Տարածաշրջանային խնդիրները, ինչպիսիք են սառեցված
հակամարտությունները (Քաշմիրում, Կորեական թերակղզում կամ ԵՄ
սահմաններին առավել մոտ գտնվող տարածքներում), վտանգում են
տարածաշրջանային կայունությունը, կործանում են կյանքեր,
հասարակական ենթակառուցվածքներ: Դրանք սպառնալիք են ազգային
փոքրամասնությունների, մարդու հիմնարար ազատությունների և
իրավունքների պաշտպանությանը: Հակամարտությունը ծնում է
ծայրահեղականություն, ահաբեկչություն, նպաստում է պետության
փլուզմանը՝ լայն հնարավորություններ ստեղծելով կազմակերպված
հանցավորության աճի համար: ...Ձինված հակամարտության մեջ
ներգրավված հարեւանները, թույլ պետությունները, որտեղ ծաղկում է
ապրում կազմակերպված հանցավորությունը, ապաֆունկցիոնալ
հասարակությունները և պայթյունավտանգ մարդկային զանգվաի աճը
Եվրոպայի սահմանների մոտ վերջինիս համար խնդիրներ են:»¹
Եվրոպական անվտանգության ռազմավարություն
Բրյուսել, 12.12.2003*

Այս, ինչպես և Եվրոպական անվտանգության պահանջներից բխող մյուս խնդիրների հաղթահարման նպատակով Եվրոպական Հանձնաժողովը (այսուհետ՝ ԵՀ) մշակում է Եվրոպական Հարեւանության Քաղաքականությունը (ԵՀՔ) (իրապարակվել է 2004թ. մայիսին): Փաստաթուղթը հստակեցում է հարեւան երկրների հետ ԵՄ համագործակցության պայմանները: 2006-ի դեկտեմբերին ԵՀ-ն հանդես է գալիս ԵՀՔ իրականացման հետագա որոշակի քայլերի առաջարկներով:

ԵՄ-ն իր հարեւաններին արտոնված հարաբերություններ է առաջարկում, որոնք պետք է կառուցվեն ընդհանուր արժեքներին (ժողովրդավարություն և մարդու իրավունքներ, օրենքի գերակայություն, լավ կառավարում, շուկայական տնտեսության սկզբունքներ և կայուն զարգացում) փոխադարձ նվիրվածության վրա²:

¹ «Եվրոպական Հարեւանության Քաղաքականությունը (ԵՄ – համառոտ ակնարկ և փաստաթղթերի ժողովածու)», Երևան 2006, էջ 50

² Տ՛ես http://ec.europa.eu/world/enp/policy_en.htm

ԵՀՔ-ն իրագործվում է երկկողմ Գործողությունների ծրագրերով (ԳԾ), որ կնքվում են ԵՄ եւ յուրաքանչյուր գործընկերոջ միջեւ: Ծրագիրը սահմանում է քաղաքական եւ տնտեսական բարեփոխումների օրակարգը, կարճաժամկետ եւ միջին ժամկետի առաջնահերթությունները:

ՀՀ եւ ԵՀ միջեւ ԵՀՔ ԳԾ-ն կնքվել է 2006թ. նոյեմբերի 14-ին: ԵՄ-ՀՀ ԵՀՔ Ծ հավելվածի 3.8 (Գործողությունների առաջնայնությունները) բաժնում Հայաստանը համաձայնում է. «Ավելացնել ջանքերը տարածաշրջանային համագործակցության բնագավառում:

(հետեւյալ հատուկ գործողությունների միջոցով)

Հատուկ գործողություններ.

շարունակել ջանքերը հարևան երկրների հետ համագործակցությամբ տարածաշրջանային և այլ հարակից խնդիրների կարգավորման ուղղությամբ, ինչպես նաև խթանել հաշտեցումը, ընդլայնել մասնակցությունը Հարավային Կովկասի տարածաշրջանային համագործակցության նախաձեռնություններում, օրինակ՝ շրջակա միջավայրի, ջրային ռեսուրսների կառավարման, էներգետիկայի, կրթության, սահմանների կառավարման, տրանսպորտի և տրանսպորտային հաղորդակցության, ինչպես նաև խորհրդարանական կապերի ոլորտներում՝ աջակցելու նշված բնագավառներում համագործակցությանը,

շարունակել համագործակցությունն էներգետիկայի և տրանսպորտի բնագավառում՝ ԵՄ/Սևծովյան/Կասպյան ավազանների երկրների և դրանց հարևանների նախաձեռնության շրջանակներում,

ամրապնդել Հայաստանի մասնակցությունը Հարավային Կովկասում տարածաշրջանային իրավապահպանության բնագավառի համագործակցության նախաձեռնություններում, ներառյալ ԵՄ կողմից ֆինանսավորվող աջակցության նախաձեռնություններում, ինչպիսին է օրինակ SCAD-ը (Հարավային Կովկասի թմրանյութերի վերաբերյալ գործողությունների ծրագիր),

աջակցել Բնապահպանության կովկասյան տարածաշրջանային կենտրոնին՝ տարածաշրջանի կառավարական և հասարակական կազմակերպությունների համագործակցության զարգացման գործում, ինչպես նաև ակտիվացնել մասնակցությունը կենտրոնի աշխատանքներում,

ընդլայնել երկկողմ և բազմակողմ համագործակցությունը Սևծովյան տարածաշրջանում, որը կներառի ՄՕՏՀ-ի հետ շարունակական հարաբերման միջոցով խորացված տարածաշրջանային տնտեսական համագործակցություն, և Սևծովյան և Բալթյան տարածաշրջանների միջև,

ընդլայնել հարավկովկասյան երեք երկրների միջև երիտասարդների փոխանակումը և համագործակցությունը, ներառյալ հատկապես ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագրերի և նախաձեռնությունների միջոցով:»

Նույն փաստաթղթի 4.1.3 կետը (Տարածաշրջանային համագործակցություն) սահմանում է Հայաստանի մասնակցությունը տարածաշրջանային համագործակցության հետեւյալ նախաձեռնություններում.

- «խորացնել Հարավային Կովկասում համագործակցությունը և ուրվագծել նոր բնագավառներ, այդ թվում ԵՄ կողմից ֆինանսավորվող աջակցության նախաձեռնությունների միջոցով, որոնք մանրամասն ներկայացված են տվյալ Գործողությունների ծրագրի համապատասխան մասերում. օր. բնապահպանություն, ջրային ռեսուրսների կառավարում, էներգետիկա, տրանսպորտ, կրթություն, սահմանների կառավարում, ինչպես նաև խորհրդարանական համագործակցություն,
- զարգացնել համագործակցությունը Հարավային Կովկասում քաղաքացիական արտակարգ իրավիճակների կառավարման, ինչպես նաև սեյսմիկ պաշտպանության տարբեր բնագավառներում՝ փորձի և տեղեկատվության փոխանակման նպատակով,
- շարունակել մասնակցել Հարավային Կովկասի խորհրդարանական նախաձեռնությանը, նպատակ ունենալով ձևավորել լիարժեք Հարավկովկասյան խորհրդարանական գործընթաց,
- խրախուսել և աջակցել բոլոր մակարդակներով մարդկային շփումները:
- ուսումնասիրել Հարավային Կովկասում «Եվրոռեգիոն» համագործակցության մոդելի կիրառման հնարավորությունը:»

ԵՀՔ հնգամյա Գործողությունների Ծրագիրն իրականացվում է տարեկան միջոցառումների ծրագրի շնորհիվ: ՀՀ կառավարությունը 2007թ. հուլիսի 19-ին N 927-Ն որոշմամբ հաստատել է այդ նույն թվականի հունիսի 26-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի եւ ԵՀՔ իրականացման շրջանակներում ՀՀ - ԵՄ գործողությունների ծրագրով նախատեսված՝ 2007 թվականին իրականացվելի առաջնայնությունների եւ միջոցառումների ցանկը:

Փաստաթղթի 28-րդ կետը (Տարածաշրջանային համագործակցություն) սահմանում է առաջիկա տարվա ընթացքում նշված ոլորտում կառավարության պարտավորություններն ու համապատասխան գործողությունների համար պատասխանատու գերատեսչությունները.

- «**28.1.** հարևան երկրների հետ համագործակցելով շարունակել ջանքերն՝ ուղղված տարածաշրջանային և այլ հարակից խնդիրների լուծմանը, և խթանել հաշտեցման գործընթացը
 ՀՀ արտաքին գործերի նախարարություն
- 28.2.** ապահովել համագործակցություն Հարավային Կովկասի տարածաշրջանում բնապահպանության, ջրային ռեսուրսների կառավարման, էներգետիկայի, կրթության, սահմանների կառավարման, տրանսպորտի և տրանսպորտային հաղորդակցության, ինչպես նաև խորհրդարանական կապերի ոլորտներում
 ՀՀ տարածքային կառավարման նախարարության
 ՀՀ բնապահպանության նախարարություն
 ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն
 ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն
- 28.3.** խորացնել համագործակցությունը Բնապահպանության տարածաշրջանային կենտրոնի (REC) շրջանակներում, մասնակցել ԵՄ-ի ջրային նախաձեռնություն EECOA աշխատանքային խմբի հանդիպումներին և շարունակել երկխոսությունը՝ ուղղված ԵՄ-ի ջրային նախաձեռնության ներքո ազգային քաղաքականության մշակմանը
 ՀՀ արտաքին գործերի նախարարություն
- 28.4.** շարունակել համագործակցությունն էներգետիկայի և տրանսպորտի բնագավառներում՝ ԵՄ/սևծովյան/կասպյան ավազանների երկրների և դրանց հարևանների նախաձեռնության շրջանակներում
 ՀՀ էներգետիկայի նախարարություն
 ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
 ՀՀ արտաքին գործերի նախարարություն
- 28.5.** հանրային օգտագործման ճանապարհները պատշաճ վիճակում պահելու համար ստեղծել ճանապարհների ֆինանսավորման երկարաժամկետ և թափանցիկ համակարգ
 ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
- 28.6.** շարունակել համագործակցությունը ԵՄ-Սև և Կասպից ծովերի ավազանի տրանսպորտի նախարարների համաժողովին հաջորդող միջոցառումների համատեքստում, համաեվրոպական միջանցքների և շրջանների զարգացման (մասնավորապես՝ Բարձր մակարդակի աշխատանքային խմբի միջոցով), ինչպես նաև ՏՐԱՍԵԿԱ ծրագրի շրջանակներում
 ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
 ՀՀ արտաքին գործերի նախարարություն
- 28.7.** բարելավել երկաթուղային ծառայությունների անվտանգությունը, արագությունը և արդյունավետությունը (փոխգործողունակությունը) և շարունակել բարեփոխումներն օպերատիվ և ֆինանսական կառավարման ասպարեզում
 ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
- 28.8.** ընդլայնել Հայաստանի մասնակցությունը Հարավային Կովկասում իրավապահ մարմինների տարածաշրջանային համագործակցության շրջանակներում իրականացվող նախաձեռնություններին
 ՀՀ արտաքին գործերի նախարարություն
 ՀՀ կառավարությանն առընթեր
 ՀՀ ոստիկանություն
- 28.9.** ընդլայնել երկկողմ և բազմակողմ համագործակցությունը սևծովյան տարածաշրջանում
 ՀՀ արտաքին գործերի նախարարություն
 ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն
- 28.10.** շարունակել ներգրավվածությունը ՄՕՏՀ-ի կազմակերպությունում, մասնավորապես՝ գիտական և տեխնոլոգիական համագործակցության ոլորտներում
 ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն
 ՀՀ արտաքին գործերի նախարարություն
 ՀՀ կրթության և գիտության նախարարություն
- 28.11.** ընդլայնել հարավկովկասյան երեք երկրների միջև երիտասարդների փոխանակումը և համագործակցությունը ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերի և նախաձեռնությունների միջոցով
 ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
- 28.12.** ապահովել 2005 թ. UNESCO-ի , Մշակութային արտահայտման բազմազանության պաշտպանության և խրախուսման մասին կոնվենցիայի իրականացումը
 ՀՀ մշակույթի նախարարություն
 ՀՀ արտաքին գործերի նախարարություն
- 28.13.** ԵՄ-ի հետ համատեղ աշխատանքներ տանել Երևանում Եվրոպական տեղեկատվական կենտրոնի ստեղծման ուղղությամբ
 ՀՀ արտաքին գործերի նախարարություն»

Սույն հաշվետվության նպատակն է նախ պարզել, թե ԵՀՔ ՊԾ շրջանակներում ՀՀ կառավարության N 927-Ն որոշմամբ սահմանված միջոցառումներն ինչ ծավալով են արտահայտում բուն ԵՀՔ ՊԾ-ում սահմանված առաջնայնություններն ու նպատակները, որքանով են հատվում ՀՀ Անվտանգության հայեցակարգով սահմանված նպատակներին եւ ինչ մակարդակում է միջոցառումների իրականացումը:

2. ԵՄ-Հայաստան ԵՀՔ ՊԾ-ի շրջանակներում 2007թ. միջոցառումների ցանկով սահմանված միջոցառումների իրականացման վիճակը

I. Մեթոդաբանական նկատառումներ

Սույն հաշվետվության առարկան (տարածաշրջանային համագործակցության ոլորտում ԵՀՔ ՊԾ շրջանակում 2007-ի միջոցառումների ցանկով նախատեսված քայլերի իրականացումը) յուրահատուկ է այն պարզ պատճառով, որ տարածաշրջանային ծրագրերի մշակումն են իրականացման համար կողմերից միայն մեկի բարի կամքն ու պատրաստակամությունն անբավարար են, տարածաշրջանային համագործակցության նախաձեռնությունները հնարավոր են միայն երկկողմ եւ բազմակողմ համաձայնության դեպքում, մինչդեռ ՀՀ արտաքին կապերը տարածաշրջանում խիստ անհամաչափ են: Մյուս կողմից, ԵՀՔ ՊԾ-ն հարավկովկասյան տարածաշրջանի երկրներից յուրաքանչյուրի հետ Եվրահանձնաժողովի անհատական պայմանավորվածության արդյունք է: Միաժամանակ Անդրկովկասի երկու հարեւաններից բացի, որոնք եւս ԵՀՔ անդամ երկրներ են, Հայաստանն ընդհանուր սահմաններ ունի նաեւ Թուրքիայի եւ Իրանի հետ, որոնցից առաջինը ԵՄ հետ ինտեգրման առավել բարձր մակարդակի վրա է (ԵՄ անդամակցության թեկնածու է), երկրորդի հարաբերություններն Արեւմուտքի հետ նույնիսկ լարված բնույթ են կրում: Հայաստանի արտաքին կապերի այս անհամաչափությունը տարածաշրջանային մակարդակով չէր կարող անդրադարձ չունենալ տարածաշրջանային համագործակցության ոլորտում ԵՀՔ ՊԾ-ի մշակման, դրա շրջանակում ներդրման գործիքի ծրագրման, ինչպես եւ համապատասխան միջոցառումների իրականացման ընթացքի վրա: Ուստի գնահատելով նշված ոլորտում ԵՀՔ ՊԾ 2007-ի միջոցառումների իրականացման մակարդակը՝ անհրաժեշտ է առաջնորդվել հետեւյալ նկատառումներով.

ա) ՀՀ հարեւաններին տարանջատել, ըստ Հայաստանի հետ ունեցած քաղաքական հարաբերությունների մակարդակի

բ) անդրադարձ տարածաշրջանային համագործակցության այն բաղադրիչին, որը պայմանավորված է ԵՀՔ-ին անմիջական առնչություն չունեցող երկրի՝ Իրանի հետ ՀՀ համագործակցությամբ

գ) անդրադարձ տարածաշրջանային կազմակերպություններում եւ ծրագրերում ՀՀ եւ ԵՀՔ անդամ չհանդիսացող, սակայն Եվրաինտեգրման ուղին որդեգրած հարեւանի՝ Թուրքիայի հետ համատեղ մասնակցությամբ

դ) անդրադարձ ԵՀՔ անդամ հյուսիսային հարեւանի հետ ՀՀ համագործակցությամբ, ԵՀՔ շրջանակում երկկողմ առավել արդյունավետ գործընկերական հարաբերությունների մշակման ուղիների դիտարկում

ե) տարածաշրջանում ԵՀՔ անդամ երրորդ կողմի՝ Ադրբեջանի հետ ՀՀ երկկողմ կապերի բացակայության պայմաններում, դիտարկվող ծրագրի շրջանակում համագործակցության տարբեր ձեւաչափերի դիտարկում

զ) անդրադարձ տարածաշրջանային խնդիրներին ԵՀՔ ՊԾ-ի պրիզմայով, առկա խնդիրների օբյեկտիվ եւ սուբյեկտիվ հիմքերի հստակեցում

է) ԵՀՔ ՊԾ-ի առավել արդյունավետ իրականացման հեռանկարների դիտարկում

II. Ոլորտի հիմնախնդիրները

«ԵՄ մեծապես շագրգիռ է Հարավային Կովկասում կայության հաստատմամբ եւ տարածաշրջանի զարգացմամբ: ԵՄ ցանկանում է իրական, կայուն եւ շարունակական նվիրվածություն տեսնել ժողովրդավարությանը, օրենքի գերակայությանը, մարդու իրավունքների պահպանմանը, առաջընթաց արձանագրել շուկայական տնտեսության զարգացման գործում: Այս ընդհանուր արժեքներին Հայաստանի, Վրաստանի եւ Ադրբեջանի նվիրվածության մասին է վկայում այդ երկրների անդամակցությունը ԵՄ-ին եւ ԵԱՀԿ-ին:

Անհրաժեշտ է ավելացնել ջանքերը տարածաշրջանային հակամարտությունների կարգավորման հարցում եւ բարիդրացիական հարաբերություններ զարգացնել: »¹

Եվրոպական Հարեւանության Քաղաքականություն
Ռազմավարական փաստաթուղթ
Բրյուսել, 12.05.2004

Ինչպես ակնհայտ է վերը նշվածից, տարածաշրջանում կայունության հաստատումն ու բարիդրացիական հարաբերությունները տարածաշրջանի, հետեւաբար նաեւ դրա առանձին բաղկացուցիչների զարգացման ու բարօրության գրավական են: Այս մոտեցումն ամրագրված է Եվրոպական Հանձնաժողովի ընդունած փաստաթղթում, մինչդեռ կողմերին իրական ակտիվ գործակցության կարող է դրել, որպես զարգացման գրավական՝ տարածաշրջանային համագորակցության անհրաժեշտության սեփական գիտակցումը:

«IV. Արտաքին անվտանգության ռազմավարություն 2. Տարածաշրջանային

Հայաստանը մշտապես հանդես է գալիս տարածաշրջանային համագործակցության միջավայրի ձևավորման, անվտանգության համակարգի ստեղծման, հարևան պետությունների միջև կառուցողական հարաբերությունների հաստատման օգտին: Տարածաշրջանում առկա են չկարգավորված հակամարտություններ, տարածայնություններ հարևանների հետ: Չեն ձևավորվել կայունության, անվտանգության, հաղորդակցության ուղիների և տնտեսական համագործակցության համընդհանուր ու միասնական համակարգեր:

Երկխոսության և համագործակցության ճանապարհով է հնարավոր լուծել տարածաշրջանային հակամարտությունները, հարթել հակասություններն ու պատմական կնճիռները, կանխել տարածաշրջանում բաժանարար գծերի առաջացումը և դրանց բացասական հետևանքները:

Հայաստանի անվտանգության ապահովման տարածաշրջանային ռազմավարությունը նպատակաուղղված է.

- տարածաշրջանային կայունության ամրապնդմանը, երկկողմ և բազմակողմ փոխշահավետ համագործակցության զարգացմանն ու ծավալմանը,
- Վրաստանի և Իրանի հետ բարիդրացիական հարաբերությունների հետագա զարգացմանը և համագործակցության բազմաբնույթ ծրագրերի կենսագործմանը,
- դարաբաղյան հակամարտության հանգուցալուծմանը, Ադրբեջանի հետ հարաբերությունների կարգավորմանը,
- Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորմանը,
- տարածաշրջանում ժողովրդավարական արժեքների տարածմանն ու առավել խորացմանը,
- տարածաշրջանում իրականացվող միջազգային տնտեսական ծրագրերին Հայաստանի մասնակցության ապահովմանը: »²

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

(Հավանության է արժանացել ՀՀ Նախագահին առընթեր ազգային անվտանգության խորհրդի 2007թ. հունվարի 26-ի նիստում)

Թեև տարածաշրջանային համագործակցությունը վերնշված փաստաթղթով հռչակվում է ՀՀ ազգային անվտանգության ապահովման գրավական, այնուամենայնիվ տարածաշրջանում առակա մի շարք օբյեկտիվ եւ սուբյեկտիվ խնդիրներ խոչընդոտ են արդյունավետ համագործակցության ճանապարհին:

1. Համագործակցությունը ՀՀ-ի՝ ԵՀՔ անմիջական առնչություն չունեցող հարեւան Իրանի հետ. Իրանի Իսլամական Հանրապետությունը ՀՀ այն երկու հարեւաններից է, որոնց հետ մեր երկիրն ունի դիվանագիտական հարաբերություններ եւ բաց սահմաններ: Պետական գործիչներն ընդգծում են Թեհրան-Երեւան քաղաքական հարաբերությունների բարձր մակարդակը՝ հիմնված պատմական ընդհանուր անցյալի

¹ Տե՛ս http://ec.europa.eu/world/enp/pdf/strategy/strategy_paper_en.pdf

² Տե՛ս <http://www.mil.am/arm/index.php?page=49>

վրա: «Իրանը Հայաստանի համար եղել է մնում է կարելու երկիր, որի հետ համագործակցությունն ու բարեկամությունը պատմական խորն արմատներ են հարուստ ավանդույթներ ունեն», - հայտարարել է ՀՀ վարչապետ Սերժ Սարգսյանը 2008 փետրվարի 13-ին Հայաստանում Իրանի նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Սեյեդ Ալի Սազախանի հետ հանդիպման ժամանակ:¹ Կողմերն ընդգծել են, որ Հայաստան-Իրան հարաբերությունները դինամիկ զարգանում են հատկապես էներգետիկ եւ տրանսպորտային ոլորտներում, համագործակցությունը զարգացնելու հնարավորություն կա գիտական, կրթական եւ մշակութային դաշտերում: Թեեւ երկկողմ տնտեսական համագործակցությունը համարվում է բավարար, այնուամենայնիվ պետական գործիչների հավաստմամբ, երկու երկրների միջեւ ապրանքաշրջանառությունը չի համապատասխանում քաղաքական հարաբերություններ մակարդակին եւ առկա ներուժին: ՀՀ Վիճակագրության ազգային ծառայության տվյալներով 2007 թվականին Հայաստան-Իրան ապրանքաշրջանառությունը \$180,3 մլն. է կազմել (2006-ի համեմատությամբ աճել է 25,1%-ով), ընդ որում, Հայաստանից Իրան արատահանումը կազմել է \$38,6 մլն. (աճել է 30,3%-ով), ներմուծումը՝ \$141,6 մլն. (աճել է 23,8%-ով):² Առաջիկայում խնդիր է դրված ապրանքաշրջանառությունը մինչեւ \$1 միլիարդի հասցնել:

Անկախ նշված խնդիրներից, Իրանը՝ Հայաստանի արտաքին առևտրի ծավալով երկրորդ երկիրն է Ռուսաստանից հետո: Սակայն տարածաշրջանում ստեղծված իրադրությունը՝ Իրանի միջուկային ծրագրի պատճառով Արեւմուտքի սպառնալիքները, խոչընդոտ են Երեւան-Թեհրան տնտեսական համագործակցությունը ընդլայնելու ճանապարհին: 2008-ի մարտի 3-ի ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ընդունած թիվ 1803 բանաձեւը նոր պատժամիջոցներ է սահմանում Իրանի նկատմամբ: Հետեւելով փաստաթղթի պահանջին՝ եվրոպական բանկերն արդեն սահմանափակել են ֆինանսական հոսքը Իրան: Բանաձեւի ընդունումից հետո ԱՄՆ ֆինանսների փոխնախարար Ռոբերտ Քիմիթն այցելել է Իսպանիա, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա եւ Բելգիա: Պաշտոնյայի հավաստմամբ, այս երկրների իշխանություններն «աշխատում են լարված»՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի նոր բանաձեւի իրականացումն ապահովելու նպատակով: Նշված երկրների ֆինանսական ընկերությունները գիտակցում են Իրանի միջուկային ծրագրի հնարավոր ֆինանսավորումը կանխելու իրենց պարտավորությունը:³

Իրանի Իսլամական հանրապետության իշխանությունները պատժամիջոցներն անվանել են զուտ խորհրդանշական, այնուամենայնիվ այս հայտարարությունը կարելի է գնահատել որպես քաղաքական: Պատժամիջոցների հետեւանքով Իրանի տնտեսությանը հասցված հարվածը չի կարող չանդրադարձալ հայ-իրանական տնտեսական համագործակցության վրա:

Մյուս կողմից, առկա է նաեւ Իրանի միջուկային խնդրի «ուժային կարգավորման» հնարավորությունը: Թեեւ ՄԱԿ-ի Ան թիվ 1803 բանաձեւը բացառում է Իրանի նկատմամբ ուժի կիրառումը, միջազգային պրակտիկայում ՄԱԿ-ի Ան որոշումը շրջանցելով ուժի կիրառման նախադեպ արդեն կա (2003թ. մարտին ԱՄՆ ներխուժումն Իրաք): Այս հարցում վճռորոշ կլինեն ԱՄՆ նախագահական ընտրությունների արդյունքները. դեմոկրատական թեւի հաղթանակի դեպքում Վաշինգտոնն, ամենայն հավանականությամբ, ձեռնպահ կմնա Իրանում զինված գործողություններից, սակայն հանրապետական թեկնածուի հաղթանակի դեպքում վտանգն առկա կլինի առաջիկա չորս տարիների համար:

Դեպքերի առավել հոռետեսական զարգացման դեպքում արտաքին աշխարհի հետ Հայաստանի կապի հնարավորությունն առավել կսահմանափակվի. այլեւս հնարավորություն կունենանք օգտագործել միայն հյուսիսային սահմանը:

2. ՀՀ հարաբերությունները ԵՄ անդակցության թեկնածու հարեւանի՝ Թուրքիայի հետ:

Թուրքիան ՀՀ անկախությունը ճանաչել է դեռեւս 1991թ. դեկտեմբերի 24-ին, ինչից հետո 1992թ. ՀՀ արտգործնախարարությունը երկու անգամ դիմել է Թուրքիային՝ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու առաջարկով: Անակրան, սակայն, դիվանագիտական հարաբերություններ հաստատելու եւ հայթորքական սահմանը բացելու համար մի շարք նախապայմաններ է առաջադրում, դրանք են. կարգավորել ԼՂ հակամարտությունը՝ երկրամասը ճանաչելով Ադրբեջանի տարածքի անբաժանելի մաս, հրաժարվել հայոց Ցեղասպանությունը ճանաչելու պահանջից, ընդունել Թուրքիայի ներկա սահմանները:

¹ Տե՛ս <http://www.newsarmenia.net/news2910.htm>

² Տե՛ս <http://www.arka.am/rus/economy/2008/02/13/8041.html>

³ Տե՛ս <http://www.vz.ru/news/2008/3/7/150733.html>

«Թուրքիան ճանաչել է ՀՀ-ն 1991թ. դեկտեմբերի 16-ին: Չնայած՝ Հայաստանը չի սահմանակցում Սեւ ծովին՝ Թուրքիան հրավիրել է ՀՀ-ին միանալ ՄՕՏՀԿ-ը: Դրան հակառակ ի հայտ եկան Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը խոչընդոտող մի շարք խնդիրներ: Կարծում են, Թուրքիան չէ, որ պատասխանատու է ստեղծված իրավիճակի համար: Իրադրության պատճառը, մի կողմից, Հայաստանի թշնամական վերաբերմունքն է հարեւան Թուրքիայի նկատմամբ, մյուս կողմից՝ հարեւան Ադրբեջանի տարածքը բռնազավթված պահելը: Քանի դեռ Հայաստանը շարունակում է այլ երկրների խորհրդարաններում 1915թ. դեպքերի որակավորման քաղաքականություն իրականացնել, հարաբերությունների կարգավորման հարցում որեւէ զարգացում սպասել պետք չէ»,-հայտարարել է Թուրքիայի նախագահ Աբդուլա Գյուլը 2007թ. նոյեմբերին Բաքու այցի ժամանակ:

ՀՀ-ը գիտակցելով Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման եւ սահմանի բացման հետեւանքով ակնկալվող օգուտը՝ չի կարող բավարարել է այս նախապայմանները, որոնց իրականացումը սպառնալիք է ՀՀ ազգային անվտանգությանը, եւ որոնք զուրկ են իրավական որեւէ հիմքից:

«Ինչ վերաբերում է ԼՂ հակամարտությունը, ապա սա խնդիր է Ղարաբաղի եւ Ադրբեջանի, հայերի եւ ադրբեջանցիների միջեւ: Չնայած ադրբեջանցիների հանդեպ Թուրքիայի համակրանքին, չի կարող հակամարտության կողմ դառնալ՝ փակելով սահմանը հարեւանի հետ: Միջազգային տեսանկյունից սա ընդունված քայլ չէ: Նման նախադեպ ստեղծել է ինքը՝ Թուրքիան, թուրք-հունական հարաբերություններում, կիպրոսյան խնդրի հետ կապված»,- 2007թ. դեկտեմբերի 19-ին ՀՀ ԱԺ-ում հայ-թուրքական հարաբերությունների խնդիրներին նվիրված լուսնների ժամանակ հայտարարել է արտգործնախարար Վարդան Օսկանյանը:¹ Մյուս կողմից, ինչպես նշում է ՀՀ ԱԺ նախագահ Տիգրան Թորոսյանը հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումն ինքնին կարող է նպաստել ղարաբաղյան հակամարտության հաղթահարմանը:²

Ինչ վերաբերում է հայոց Ցեղասպանության ճանաչման պահանջից հրաժարելու նախապայմանին, ապա ինչպես 2007թ. դեկտեմբերի 19-ին «Հայ-թուրքական հարաբերությունները. խնդիրներ եւ հեռանկարներ» լուսնների ընթացքում հայտարարել է ԱԺ նախագահ Տ. Թորոսյանը, Թուրքիան ինքն է այդ ոճիրը դատապարտել իր դատարաններում՝ մահապատժի վճիռ կայացնելով կազմակերպիչների համար: Թուրքերն «ասում են. ստիպեք լռել Հայաստանից դուրս բնակվող ձեր հայրենակիցներին, որոնք, ի դեպ, հայրենիքից դուրս են բնակվում այդ նույն ողբերգական իրադարձությունների պատճառով: ... Հայաստանը ոչ միայն բարոյական իրավունք, այլեւ ցանկություն չունի ստիպել լռել իր հայրենակիցներին: Մեր հայրենակիցներից շատերը Եւ տարբեր երկրների քաղաքացիներ են եւ հավասար իրաբովորում են մասնակցել այդ երկրներում տեղի ունեցող քննարկումներին, ինչպես եւ մյուս քաղաքացիներն՝ անկախ ծագումից:»³

ՀՀ արտգործնաժարար Վարդան Օսկանյանի հավաստմամբ, անհիմն է նաեւ Թուրքիայի պետական սահմանները ճանաչելու մասին պահանջը: «Թուրքիան նույնիսկ իրավունք չունի նման հարց բարձրացնելու, քանի որ դեռեւս ուժի մեջ են Կարսի եւ Մոսկվայի պայմանագրերը: Մենք դրանք որդեգրել ենք խորհրդային ժամանակաշրջանից: Մեր օրենսդրությունն այդ հարցում բավականին հստակ է. եթե խորհրդային Միությունից ժառանգված պայմանագրերը մերժված կան փոխարինված չեն նորով, ապա դրանք ուժի մեջ են»,-նշել է Վ. Օսկանյանը:⁴

Այսպիսով, Թուրքիան, առանց իրավական հիմքի, քաղաքական դաշտում շահարկում է սահմանի բացումը՝ Հայաստանին իր կենսական շահերից հրաժարվել ստիպելու ցանկությամբ: Թերեւս պատճառն այն է, որ Անկարայում եւս, ինչպես եւ Երեւանում, գիտակցում են Հայաստանի տնտեսական զարգացման հարցում հայ-թուրքական հարաբերությունների հաստատման նշանակությունը:

2007թ. հուլիսի 13-ին Տնտեսական քաղաքականության եւ իրավունքի հայ-եվրոպական խորհրդատվական կենտրոնը (AEPLAC) հայ հասարակական շրջանակներին ներկայացրել է «Հայաստանի համար հայ-թուրքական սահմանի բացման տնտեսական հետեւանքները: Ենթադրություններ արտաքին առեւտրի առնչությամբ» ուսումնասիրությունը: AEPLAC-ի փորձագետների գնահատմամբ, սահմանի բացման դեպքում տրանսպորտային ծախսերի

¹ Տե՛ս

http://ux1.parliament.am/news.php?do=view&ID=2614&cat_id=2&day=19&month=12&year=2007&lang=rus

² Ibid.

³ Ibid.

⁴ Տե՛ս

http://ux1.parliament.am/news.php?do=view&ID=2614&cat_id=2&day=19&month=12&year=2007&lang=rus

կրճատման եւ առեւտրի հոսքի հետեւանքով կարճաժամկետ եւ միջնաժամկետ հեռանկարում կծեւավորվի հետեւյալ պատկերը.

- Հայաստանի ՀՆԱ-ն կարճաժամկետ հեռանկարում կաճի 10,65 միլիարդ դրամով (միջնաժամկետ հեռանկարում՝ 43 միլիարդ դրամով)
- զբաղվածության աճ - 1573 մարդ (4808)
- ընդհանուր արտահանման աճ - 5,23% (17,73%)
- ընդհանուր ներմուծման աճ - 4,71% (12,95%)
- պետքույշե ստացվող գումարների աճ - 1,16% (3,46%)¹

Ինչ վերաբերում է սահմանի վերաբացման հետեւանքով Թուրքիայի շահին, ապա AEPLAC-ի երեւանյան գրասենյակի տնօրեն Տիգրան Ջրբաշյանի խոսքով, Անկարայի համար հիմնական օգուտը Կարս-Գյումրի երկաթգծի շահարկումն ու Հայաստանի տարանցիկ ուղիների օգտագործումը կլինի: Բացի այդ, կաճի Հայաստանի հետ առեւտրի ծավալը, Թուրքիան ԵՄ անդամակցության բանակցություններում առավել բարենպաստ դիրք կարող է զբաղեցնել, կգարգանան Թուրքիայի արտելյան գավառները:²

Թե որքանով է Թուրքիան շահագրգիռ երկրի արտելյան քրդաբնակ գավառների զարգացմամբ, դեռ քննարկման խնդիր է. համեմատելով սահմանի վերաբացման հարցում կողմերի շահագրգռվածության մակարդակը՝ ակնհայտ է, որ Հայաստանի համար պատճառներն առավել շատ են: Ուստի սահմանի վերաբացման հարցում Հայաստանին նախապայմաններ առաջադրելով՝ Անկարան պետությունների ճանաչման միջազգային կարգում վերջնագրի միջոցով գործելու նախադեպ է ստեղծում:

3. ՀՀ հարաբերությունները ԵՀՔ անդամ, հյուսիսային հարեւանի՝ Կրաստանի հետ:

Կրաստանը 1999թ. դուրս է եկել ԱՊՀ Հավաքական անվտանգության պայմանագրից (ինչպես նաեւ Ադրբեջանը) պայմանագիրը ստորագրվել էր 1992թ. մայիսի 12-ին՝ Ռուսաստանի, Հայաստանի, Ղազախստանի, Ղրղզստանի, Տաջիկստանի եւ Ուզբեկստանի ղեկավարների մասնակցությամբ (այնուհետեւ միացել էին Ադրբեջանը, Կրաստանը, Բելառուսը): 2002թ. Հավաքական անվտանգության պայմանագիրը վերածվում է միջազգային կառույցի, ստորագրվում է Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության կանոնադրությունը: Կառույցից Կրաստանի հեռանալը պայմանավորված էր Հյուսիսատլանտյան դաշինքի հետ այս երկրի հարաբերությունների սերտացմամբ: Հարավկովկասյան երկրներից Կրաստանըն առաջինն է, որ ՆԱՏՕ-ի հետ Անհատական գործողությունների ծրագիր է ստորագրել՝ կառույցին անդամակցելու հեռանկարով: (Կրաստանում ՆԱՏՕ-ի անդամակցության հարցի շուրջ 2007թ. հունվարի 5-ի հանրաքվեում դաշինքին անդամակցելու օգին քվեարկել էր ընտրողների 72,2 %-ը: Արդյունքը ռուսական զորակազմի դուրսբերումն էր վրաստանի տարածքից: 2007-ի հուլիսի 27-ին ստորագրված ակտով ռուսական կողմը Կրաստանի պաշտպանության նախարարությանն է փոխանցում Ախալքալակի թիվ 62 ռազմակայանի օբյեկտները, նոյնքերի 13-ին՝ Բաթումի ռուսական ռազմակայանի օբյեկտները: Կրաստանի վերահսկողության տակ գտնվող տարածքներում ռուսական զինված ստորաբաժանումներն այլեւս չկան: Ռուս խաղաղապահներն իրենց առաքելությունն են շարունակում Աբխազիայի եւ Հարավային Օսիայի հակամարտության գոտիներում: Կրաստանի տարածքից դուրս բերված ռուսական զինված ստորաբաժանումները տեղակայվել են Հայաստանում՝ Գյումրիի թիվ 102 ռուսական ռազմակայանում:

Մի կողմից Հայաստանի եւ Կրաստանի, մյուս կողմից Կրաստանի եւ ռուսաստանի ներգրավվածությունը ռազմական տարբեր դաշինքներում, արդյունքում նաեւ վրաց-ռուսական հարաբերությունների լարվածությունը մի շարք խնդիրներ են առաջացնում Հայաստանի համար:

ՆԱՏՕ-ին Կրաստանի ինտեգրման գործընթացը Թբիլիսիին դաշնակցային հարաբերությունների է մղում կառույցի առաջատար երկրներից մեկի՝ հարեւան Թուրքիայի հետ: Երեւանում այժմ մտահոգված են Կարս-Ախալքալաք երկաթգծի կառուցմամբ՝ Կարս-Գյումրի-Թբիլիսի երկաթուղու գոյության պայմաններում:

Դեռեւս 2006 թվականից Կրաստանը Ջավախում թուրք-մենսխեթինցիների, սվանների եւ մեգրելների վերաբնակեցման լայնածավալ ծրագիր է սկսել: Ընդհանուր առմամբ, թուրք-մենսխեթինցիների վերադարձը Կրաստանի պարտավորությունն է ԵԽ առջեւ, սակայն, վերլուծաբանները համակարծիք են, որ այս քայլը ռեւերանս է Թուրքիայի կողմ:

Մյուս կողմից, Կրաստանի տարածքում սառեցված հակամարտությունների առկայությունը խոչընդոտներ է ստեղծում հայաստանի ռազմավարական դաշնակից Ռուսաստանի հետ մեր երկրի կապերում. Աբխազիայի հակամարտության հետեւանքով

¹ Տե՛ս <http://www.regnum.ru/news/483879.html>

² Ibid.

Հայաստանը գրկված է Անդրկովկասյան մագիստրալն օգտագործելու հնարավորությունից, որը Սուխումի միջոցով մեր երկիրը կապում է Ռուսաստանին եւ վերջինի հետ երկաթուղային կապի միակ միջոցն է, քանի դեռ Կասպից ծովի միջինասիական ափամերձ շրջանով՝ Իրանի տարածքով Ռուսաստանն ու Հայաստանը կապող տրանսպորտային միջանցք կառուցելու ծրագրերն ապագայի խնդիր են:

Ռուսաստան-Վրաստան հարաբերությունների լարվածությունն ու պարբերական սրացումներն անմիջականորեն առնչվում են նաեւ հայերին. 2006թ. հուլիսի 7-ին Ռուսաստանը պկանային վերակառուցման պատրվակով ամբողջովին փակել էր Վերին Լարսի ստուգիչ անցակետը, որը Վրաստանի հետ ցամաքային կապի միակ ուղին է: Արդյունքում տասնյակ հայեր (նաեւ վրացիներ), որոնք ստիպված էին եղել Հայաստան վերադառնալու համար ռուս-վրացական սահմանը հասել Հարավային Օսիայի տարածքով, դատապարտվել էին մինչեւ 4 տարվա ազատազրկման:

Անմիջականորեն հայ-վրացական հարաբերությունների խնդիրներից է ջավախահայության՝ որպես ազգային փոքրամասնության, իրավունքների պաշտպանությունը, որտեղ կարելի է Հայաստանի դիրքորոշումը: «Ջավախքի հարցում հայկական կողմը չի սպառել միջպետական հարաբերությունների ոլորտում առկա հնարավորությունների 10% անգամ: Բացի այդ հայկական կողմից հաճախ ոչ հստակ, ամորֆ հայտարարություններ են հնչում, այն դեպքում, երբ հայերի իրավունքների կոպիտ խախտումներ են տեղ գտել: Հստակ դիրքորոշում չունեն նաեւ Ջավախքի տեղական ինքնակառավարման մարմինները, որոնք չեն օգտագործում տեղական ինքնակառավարման ոլորտում միջազգային փորձի հետեւանքով առաջացած հսկա ռեսուրսները»,- REGNUM տեղեկատվական գործակալությանը տված հարցազրույցում հայտարարել է ՀՀ ԱԺ «Ժառանգություն» խմբակցության անդամ, մարդու իրավունքների նախկին պաշտպան Լարիսա Ալավերդյանը:

1999թ. Վրաստանն, անդամակցելով ԵՄ-ին, ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության հարցում մի շարք պարտավորություններ է ստանձնել: 2005թ. Վրաստանի խորհրդարանը վավերացրել է «Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիան»: Ինչպես արձանագրում է Ջոն Հոփկինսի համալսարանին կից (ԱՄՆ, Վաշինգտոն) Կոնտրոնական Ասիայի եւ Կովկասի ինստիտուտի՝ «Ազգային փոքրամասնությունները եւ պետությունները Հարավային Կովկասում» վերտառությամբ զեկույցը, «թեւ Վրաստանի իշխանությունները զգալի քայլեր են ձեռնարկել ընդհանուր առմամբ իրավապաշտպան մեխանիզմների կատարելագործման հարցում, ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մեխանիզմները դեռեւս հետհեղափոխական տարիների ընթացքում դեռեւս թույլ են եւ անարդյունավետ»:¹

Ինչ վերաբերում է երկկողմ տնտեսական հարաբերություններին, այստեղ եւս մասնագետները նշում են զարգացման հեռանկարները: ՀՀ Վիճակագրության ազգային ծառայության տվյալներով, 2007թ. հունվար-նոյեմբեր ամիսների ընթացքում Վրաստանի հետ Հայաստանի արտաքին առեւտրի շրջանառությունն աճել է 48,2%-ով՝ հասնելով \$118,8 մլն. -ի: հայաստանից Վրաստան արտահանման ծավալը կազմել է \$79,8 մլն. (2006թ. հունվար-նոյեմբեր ամիսների համեմատ աճել է 63,2%-ով), Հայաստան ներմուծված վրացական արտադրության ապրանքների ծավալը՝ \$39 (ավելացել է 24,7%-ով), Վրաստանի տարածքից Հայաստան ներմուծման ընդհանուր ծավալը՝ \$116,4 մլն. (աճել է 1,76 անգամ):² Հայ-վրացական տնտեսական հարաբերությունների առկա խնդիրներն ու զարգացման հեռանկարները մեկնաբանել է ՀՀ առեւտրի եւ տնտեսական զարգացման փոխնախարար Վահե Դանիելյանը. «Մեր տարածաշրջանի երեք պետություններն էլ պայքարում են աղքատության կրճատման, ՀՆԱ-ի ծավալի բարձրացման, արժանի տնտեսական աճ ունենալու համար, այսինքն երեքն էլ ներդրումների խթանման, արտադրողականության բարձրացման քաղաքականություն են վարում, եւ ասել, թե Հայաստանը Վրաստանում պետք է մեծ ներդրումներ ունենա կամ հակառակը, սխալ է, որովհետեւ երեքս էլ փորձում ենք արտաքին աշխարհից ներդրողներ բերել: Եվ այս պարագայում ԵՄ գործիքներն ուղղակիորեն կարող ենք օգտագործել մեզ համար՝ որպես արդյունավետ զարգացման հնարավորություն, օրինակ՝ այժմ Հայաստանը ԵՄ հետ աշխատում է Ազատ առեւտրի համաձայնագրի ստորագրման շուրջ, որտեղ տարածաշրջանային առեւտրի համաձայնագրերի առումով շատ արդյունավետ հնարավորություն կա, որն անվանվում է «ծագման երկրի անկյունագծային սկզբունք»։ Սկզբունքը հետեւյալն է, որ ԵՄ-ն համաձայնագիրը ստորագրում է պայմանով, որ ապրանքը բավարար վերամշակված պետք է լինի, օրինակ, Հայաստանում, այսինքն՝ Հայաստանը չի

¹ St'u Йоханна Попжаневски: Национальные меньшинства и государство на Южном Кавказе: оценка защиты национальных меньшинств в Грузии и Азербайджане. Доклад Института Центральной Азии и Кавказа и Исследовательская программа "Шелковый путь" Университет Джонса-Хопкинса (Вашингтон, США) и Университета г. Упсала (Швеция). Сентябрь 2006.

² St'u <http://www.arka.am/rus/economy/2008/01/09/7639.html>

կարող որեւէ այլ երկրից մշակված (պատրաստի) ապրանք վերցնել եւ առանց առեւտրային նախապայմանի եվրոպական շուկա արտահանի, քանի որ այդ արտոնությունը տրվում է Հայաստանին միայն իր երկրում ստեղծված ապրանքի համար: Իսկ տարածաշրջանային «անկյունագծային սկզբունքն» այն է, որ մենք կարող ենք Կրաստանի հետ համատեղ ապրանք մշակել այն դեպքում, երբ ԵՄ-ն երկու պետություններիս հետ էլ Ազատ առեւտրի համաձայնագրեր ստորագրի:»¹

4. Հարավային Կովկասում ԵՀՔ երրորդ կողմը՝ Ադրբեջան:

Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ 1994թ. մայիսի 12-ի հրադադարի կնքումից հետո կողմերի միջեւ հաշտություն դեռեւս ձեռք չի բերվել, ինչով եւ պայմանավորված է հարաբերությունների բացակայությունը բոլոր ոլորտներում:

Ղարաբաղյան հակամարտությունը տարածաշրջանային համագործակցության թերեւս ամենալուրջ խոչընդոտն է ինչպես Հայաստանի, այնպես էլ Ադրբեջանի համար: Սակայն իրադրությունը Հայաստանի համար բարդանում է նրանով, որ ԼՂ խնդիրը շահարկվում է նաեւ Թուրքիան՝ շարունակելով փակ պահել հայ-թուրքական սահմանը:

Հայաստանի լիարժեք մասնակցությունը տարածաշրջանային ծրագրերում, այսպիսով, հնարավոր է միայն ԼՂ կարգավորման դեպքում: Այս հարցում, սակայն, 2007թ. ընթացքում, կարելի է ասել, նույնիսկ հետընթաց է արձանագրվել: Ի հեճուկս ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների կանխատեսումների, թե հակամարտությունը հնարավոր կլինի կարգավորել մինչեւ 2008 թ. Հայաստանում եւ Ադրբեջանում նախանշված նախագահական ընտրությունները, պաշտոնական բաքում այս խնդիրը սկեց շահարկել ներքաղաքական ասպարեզում՝ սպառնալով ԼՂ հարցը կարգավորել ուժով:

Իլիհամ Ալիևը հոկտեմբերի 30-ին՝ Պաշտպանության պետական հատուկ ծառայության ուսումնական կենտրոնի բացման ժամանակ, երկրի ուժային կառույցներին կոչ է արել յուրաքանչյուր ընդհանուր պատրաստ լինել Հայաստանի դեմ պատերազմի: Նախագահը հայտարարել է նաեւ, թե Ադրբեջանը մտադիր է ռազմաարդյունաբերական ուժեղ համալիր կառուցել: Ադրբեջանի նախագահը ԼՂ հարցն ուժի միջոցով կարգավորելու՝ Բաքվի մտադրության մասին հայտարարել էր դեռեւս 2007թ. հուլիսի 2-ին՝ նշելով, թե Ադրբեջանը երբեք չի համակերպվի տարածքների կորստի հետ եւ անհրաժեշտության դեպքում դրանք հետ կնվաճի ուժով:

Այս բոլոր հայտարարությունները ոչ միայն չեն նպաստում հակամարտության կարգավորմանն, այլեւ էլ ավելի են սրում իրադրությունը: Այսպիսով Ադրբեջանը խախտում է միջազգային իրավունքի մի շարք սկզբունքներ՝ մասնավորապես ուժի եւ ուժի սպառնալիքի կիրառումից ձեռնպահ մնալու սկզբունքը, սպառնում է խախտել միջազգային վեճերը խաղաղ ձանապարհով կարգավորելու սկզբունքը:

3. Տարածաշրջանային հիմնախնդիրների արտացոլվածությունը ԵՄ-Հայաստան ԵՀՔ ԳԾ-ում

Տարածաշրջանային համագործակցության խնդիրներ արտացոլված են ԵՄ-Հայաստան ԵՀՔ ԳԾ-ի «3.Գործողությունների առաջնություններ»-ի 8-րդ ոլորտում եւ «4.Ընդհանուր նպատակներ եւ գործողություններ» բաժնի 4.1.3 Տարածաշրջանային համագործակցություն կետում:

Մասնավորապես 3.8 կետով նախատեսվում է *ավելացնել ջանքերը տարածաշրջանային համագործակցության բնագավառում*: Հատուկ գործողությունների շարքում նախատեսվում է.

շարունակել ջանքերը հարեւան երկրների հետ համագործակցությամբ տարածաշրջանային եւ այլ հարակից խնդիրների կարգավորման ուղղությամբ, ինչպես եւ խթանել հաշտեցումը:

Ինչպես նշվեց տարածաշրջանային սառեցված հակամարտությունները, մասնավորապես ԼՂ հարցը Հայաստանի համար, տարածաշրջանային ինտեգրման ձանապարհին հիմնական խոչընդոտներից է: Թերեւս այս է պատճառը, որ ԼՂ հակամարտության խաղաղ կարգավորումը ԵՄ-Հայաստան ԵՀՔ ԳԾ-ում ներկայացված է առանձին կետով: Ուստի կարելի է ենթադրել, «*հաշտեցումը խթանելու*» պարտավորությունն այստեղ կարող է վերաբերել տարածաշրջանային մյուս հակամարտությունների՝ Աբխազիայի եւ Հարավային Օսիայի խնդիրների կարգավորմանը:

¹ Տե՛ս www.amedia.am

Ընդլայնել մասնակցությունը Հարավային Կովկասի տարածաշրջանային համագործակցության նախաձեռնություններում, օրինակ՝ շրջակա միջավայրի, ջրային ռեսուրսների կառավարման, էներգետիկայի, կրթության, սահմանների կառավարման, տրանսպորտի և տրանսպորտային հաղորդակցության, ինչպես նաև խորհրդարանական կապերի ոլորտներում՝ աջակցելու նշված բնագավառներում համագործակցությանը:

Հայաստան-Ադրբեջան դիվանագիտական հարաբերությունների բացակայության պայմաններում, խորհրդարանական համագործակցությունը նախ պետական մարմինների շփման որոշակի մակարդակ կարող է ապահովել, մյուս կողմից ԵՀՔ ՊԾ շրջանակում հարավկովկասյան երեք հանրապետություններն էլ օրենսդրական մի շարք բարեփոխումների պարտավորություններ են ստանձնել, այս հարցում կարելու է անդրկովկասյան երեք երկրների օրենսդիր մարմինների միջև համագործակցությունը՝ փորձի փոխանակման տեսանկյունից: Հարավային Կովկասում իրական ժողովրդավարական, իրավական պետությունների կայացումը տարածաշրջանում ԵՄ նպատակներից է:

Չնայած տարածաշրջանում առկա քաղաքական խնդիրներին, այնուամենայնիվ, հարավկովկասյան երեք երկրներն էլ կհսում են ընդհանուր բնական, ջրային ռեսուրսները, որոնց պահպանության եւ կառավարման պատասխանատվությունը եւս պետք է ընդհանուր լինի: Սահմանների կառավարման, տրանսպորտի եւ տրանսպորտային հաղորդակցության բնագավառում համագործակցությունը կոչված է նպաստել տարածաշրջանային ինտեգրմանը:

Կրթական ոլորտում համագործակցությունը կնպաստի հարավկովկասյան երկրների երիտասարդ ակիվիստների միջև կապերի ձեւավորմանը՝ հետագայում ապահովելով երեք երկրների համագործակցության կայացումը հասարակական, ինչպես եւ պետական տարբեր մակարդակներում:

Շարունակել համագործակցությունն էներգետիկայի և տրանսպորտի բնագավառում՝ ԵՄ/Սևծովյան/Կասպյան ավազանների երկրների և դրանց հարևանների նախաձեռնության շրջանակներում:

«Տարածաշրջանային համագործակցությունը պետք է զարգանա նաեւ էներգետիկ ոլորտում, քանի որ Հարավային Կովկասը կարելու տարածաշրջան է ինչպես էներգիայի արտադրման (Կասպյան ավազան), այնպես էլ փոխադրման առումով», - նշված է ԵՀՔ Ռազմավարական փաստաթղթում (Բոլոսել, 12.05.2004):¹ Այսինքն ԵՄ համար հարավկովկասյան տարածաշրջանն էներգետիկ աղբյուրների դեվերսիֆիկացման եւս մեկ ուղղություն է: Իսկ Հայաստանին այս դրույթը հնարավորություն է տալիս մասնակցություն ունենալ տարածաշրջանային էներգետիկ նախաձեռնությունների:

Ամրապնդել Հայաստանի մասնակցությունը Հարավային Կովկասում տարածաշրջանային իրավապահպանության բնագավառի համագործակցության նախաձեռնություններում, ներառյալ ԵՄ կողմից ֆինանսավորվող աջակցության նախաձեռնություններում, ինչպիսին է օրինակ SCAD-ը (Հարավային Կովկասի՝ թմրանյութերի վերաբերյալ գործողությունների ծրագիր):

Ժամանակակից աշխարհի մարտահրավերների դեմ պայքարում, որոնց շարքում կարելի է նշել նաեւ թմրանյութերի տարածման, կազմակերպված հանցավորության դեմ պայքարը, երբեմն հնարավոր չէ պայքարել միայնակ: Այս առումով, հարեւանների ապահովագրումը նշված վտանգներից սեփական ավտանգությունը համապատասխան մարտահրավերներից զերծ պահելու միջոց է, ուստի իրավապահ մարմինների համագործակցությունը միջազգայնորեն ընդունված պրակտիկա է:

Աջակցել Բնապահպանության կովկասյան տարածաշրջանային կենտրոնին՝ տարածաշրջանի կառավարական և հասարակական կազմակերպությունների համագործակցության զարգացման գործում, ինչպես նաև ակտիվացնել մասնակցությունը կենտրոնի աշխատանքներում:

Անկախ քաղաքական հարաբերությունների մակարդակից, բնապահպանական խնդիրները վերաբերում են տարածաշրջանի բոլոր բաղկացուցիչներին եւ դրանց հաղթահարման ուղղությամբ համատեղ ջանքերը կարելու են հարավկովկասյան երեք երկրների ազգային անվտանգության ապահովման տեսանկյունից:

Ընդլայնել երկկողմ և բազմակողմ համագործակցությունը Սևծովյան տարածաշրջանում, որը կներառի ՄՕՏՀ-ի հետ շարունակական հարաբերման միջոցով խորացված տարածաշրջանային տնտեսական համագործակցություն, և Սևծովյան և Բալթյան տարածաշրջանների միջև:

¹ Տե՛ս http://ec.europa.eu/world/enp/index_en.htm

ՀՀ անդամակցությունը ՄԾՏՀԿ-ին մեր երկրին հնարավորություն է ընձեռում երկու հարեւանների՝ Թուրքիայի եւ Ադրբեջանի հետ անմիջական կապերի բացակայության պայմաններում մասնակցել տարածաշրջանային մի շարք տնտեսական, գիտական ծրագրերի իրագործմանը:

Ընդլայնել հարավկովկասյան երեք երկրների միջև երիտասարդների փոխանակումը և համագործակցությունը, ներառյալ հատկապես ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագրերի և նախաձեռնությունների միջոցով:

Ինչպես արդեն նշվեց, երիտասարդների փոխանակումը հասարակական կապերի ձեւավորման եւ ինչպես եւ երկարաժամկետ հեռանկարում պետական տարբեր մակարդակի կապերի ապահովման երաշխիք է:

Հայաստան-ԵՄ ԵՀՔ ԳԾ «3.Գործողությունների առաջնայնություններ»-ում նշված այս քայլերը լրացվում են 4.Ընդհանուր նպատակներ եւ գործողությունների բաժնի 4.1.3 Տարածաշրջանային համագործակցություն կետով, որը նախատեսում է.

խորացնել Հարավային Կովկասում համագործակցությունը և ուրվագծել նոր բնագավառներ, այդ թվում ԵՄ կողմից ֆինանսավորվող աջակցության նախաձեռնությունների միջոցով, որոնք մանրամասն ներկայացված են տվյալ Գործողությունների ծրագրի համապատասխան մասերում. օր. բնապահպանություն, ջրային ռեսուրսների կառավարում, էներգետիկա, տրանսպորտ, կրթություն, սահմանների կառավարում, ինչպես նաև խորհրդարանական համագործակցություն:

Նկատի ունենալով, որ ԵՀՔ ԳԾ-ն ստորագրված է հնգամյա ժամկետով, ակնկալվում է, որ առաջիկայում տարածաշրջանային համագործակցության խորացման եւ տարածաշրջանում քաղաքական իրադրության հնարավոր փոփոխման հետեւանքով նոր հեռանկարներ ձեւակերպելու անհրաժեշտություն կառաջանա, որոնց իրականացմանն էլ նվիրված պետք է լինի հայաստան-ԵՄ ԵՀՔ Գործողությունների հաջորդ ծրագիրը:

Ջարգացնել համագործակցությունը Հարավային Կովկասում քաղաքացիական արտակարգ իրավիճակների կառավարման, ինչպես նաև սեյսմիկ պաշտպանության տարբեր բնագավառներում՝ փորձի և տեղեկատվության փոխանակման նպատակով:

Ինչպես եւ բնապահպանական խնդիրների կարգավորման հարցում, այս դեպքում եւս անհրաժեշտ է տարածաշրջանի բոլոր երկրների մասնակցությունը սեյսմիկ պաշտպանության, արտակարգ իրադրությունների դեմ պայքարում, ասանկախ քաղաքական հարաբերությունների մակարդակից:

Շարունակել մասնակցել Հարավային Կովկասի խորհրդարանական նախաձեռնությանը, նպատակ ունենալով ձևավորել լիարժեք Հարավկովկասյան խորհրդարանական գործընթաց:

Ինչպես արդեն նշվեց, խորհրդարանական համագործակցությունը կարելի է նշանակություն ունի հարավկովկասյան երեք երկրներում եվրոպական իրավական համակարգի մոտարկման հարցում՝ հաշվի առնելով տարածաշրջանի երկրների ընդհանուր պատմական անցյալն ու զարգացման ուղին:

Խրախուսել և աջակցել բոլոր մակարդակներով մարդկային շփումները:

Դժվար է գերազնահատել հասարակական կապերի նշանակությունը տարածաշրջանային ինտեգրման հարցում:

Ուսումնասիրել Հարավային Կովկասում «Եվրոռեգիոն» համագործակցության մոդելի կիրառման հնարավորությունը:

Ինչպես կարելի է եզրակացնել նշվածից, հայաստան-Եմ ԵՀՔ ԳԾ-ում տարածաշրջանային համագործակցության քաղաքական խնդիրները ներկայացված են բավականին սահմանափակ եւ մակերեսային, հիմնականում նախատեսված չեն դրանց հաղթահարման կոնկրետ մեխանիզմներ: Սակայն, մյուս կողմից, փաստաթղթում նշված տնտեսական, էներգետիկ, բնապահպանական, տրանսպորտային, հասարակական, կրթական, մշակութային համագործակցության դրույթները նպատակ ունեն խթանել տարածաշրջանային ինտեգրումը նշված ոլորտներում, ինչն էլ իր հերթին հեռանկարում քաղաքական խնդիրները լուծելու հիմքեր պետք է ապահովի՝ առավել անցավ եւ դյուրին դարձնելով դրանց հաղթահարումը: Այս ճանապարհով են անցել նույն եվրոպական երկրներն ինտեգրման գործընթացում, սա է «Եվրոպական» մոդելը: պատահական չէ, որ 4.1.3 Տարածաշրջանային համագործակցություն կետի վերջին դրույթը նախատեսում է ուսումնասիրել Հարավային Կովկասում «Եվրոռեգիոն» համագործակցության մոդելի կիրառման հնարավորությունը:

4. ՀՀ քաղաքական առաջատար ուժերի ծրագրերում տարածաշրջանային համագործակցության խնդիրը

(Մույն գլուխը կազմելիս հիմք են ծառայել 2008թ. ՀՀ նախագահական ընտրություններում թեկնածուների նախընտրական ծրագրերը)

1. Հանրապետական կուսակցություն – Սերժ Սարգսյան

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

«2. Արտաքին հարաբերություններ եւ անվտանգություն

2.1. Արագ փոփոխվող աշխարհը՝ արդի մարտահրավերներին զուգահեռ, Հայաստանի համար բացում է նոր հնարավորությունների պատուհան:

Մեր երկրի արտաքին քաղաքականությունը պետք է դառնա ավելի ակտիվ եւ նախաձեռնող՝ ապահովելով Հայաստանի ազդեցիկ մասնակցությունը միջազգային եւ հատկապես տարածաշրջանային գործընթացներին, որի համար անհրաժեշտ է.

բազմակողմ եւ միջպետական երկկողմ հարաբերությունների ընդլայնում ու խորացում, դրանց ներդաշնակ համադրում, ինչը բարենպաստ պայմաններ կստեղծի այլ երկրների հետ քաղաքական, տնտեսական կապերի զարգացման, ապրանքաշրջանառության աճի, մշակութային համագործակցության խթանման համար:

...Մենք պետք է կառուցենք բնականոն հարաբերություններ մեր հարեւան պետությունների հետ: Մենք պատրաստակամ ենք լինելու Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման ու սահմանների բացման հարցում՝ համարելով, որ դրա հիմքում չեն կարող ընկած լինել ո՛չ Հայոց ցեղասպանության ճանաչման անհրաժեշտությունից հրաժարվելու, ո՛չ ԼՂ հակամարտության հետ կապված եւ ոչ էլ այլ նախապայմաններ:

2.2. Մեր տարածաշրջանը գտնվում է տարբեր աշխարհաքաղաքական ուժերի շահերի կենտրոնում, եւ հակասություններն անխուսափելի են:

Ազգային անվտանգության ռազմավարությունն ուղղվելու է մեր երկրի ու տարածաշրջանի կայունության ապահովմանը եւ հակասությունների հաղթահարմանը, ինչն առաջին հերթին նշանակում է՝ անկախություն, պետության եւ ժողովրդի պաշտպանվածություն, խաղաղություն եւ միջազգային համագործակցություն, հայապահպանություն ու բարեկեցություն:

Տարածաշրջանի աշխարհաքաղաքական իրավիճակը թելադրում է կարգաբերված, արդյունավետ պաշտպանության եւ անվտանգության համակարգ ունենալու անհրաժեշտություն: Այդ համակարգի գլխավոր, բայց ոչ միակ օղակը բանակն է:

Առաջիկա տարիներին անվտանգության հիմնական խնդիրն է պետական կառավարման մարմինների մասնակցությամբ ազգային անվտանգության միասնական, բազմաստիճան համակարգի կառուցումը: Մենք պետք է պատրաստ լինենք հակազդելու բոլոր սպառնալիքներին եւ վտանգներին:»

2. «Օրինաց երկիր» կուսակցություն - Արթուր Բաղդասարյան

«ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության համար, որը փոքր երկիր է, գտնվում է խիստ բարդ տարածաշրջանում եւ պետք է հայանպաստ լուծում տա Լեռնային Ղարաբաղի խնդրին, ակտիվ, դիմամիկ եւ նախաձեռնողական ձկուն արտաքին քաղաքականությունն ուղղակի հրամայական է: Սակայն մեր երկիրը հիմնականում պարզապես արձագանքում է Հայաստանին առնչվող այս կամ այն իրադարձությանը: Նման քաղաքականությունն արդեն չի ընկալվում Հայաստանի արտաքին քաղաքակա գործընկերների շրջանում, որոնք ակնկալում են հստակ դիրքորոշումներ: Այս ամենի հետեւանքով մենք հայտնվել ենք տարածաշրջանային մեկուսացման մեջ՝ դուրս մնալով, քիչ, թե շատ կարելի է բոլոր ծրագրերից (Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղ, Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղ, Կարս-Ախալքալակ-Թբիլիսի-Բաքու երկաթգծի կառուցում, ինչի շինարարության պայմանագիրն արդեն ստորագրվել է):

Մեր արտաքին քաղաքականությունը պետք է որդեգրի հետեւյալ մոտեցումները.

... -խորհրդարանական եւ հասարակական դիվանագիտության ակտիվացումը կարող է ծառայել երկրի շահերին,

հայ-թուրքական հարաբերությունների հաստատումը՝ առանց նախապայմանների եւ սահմանի բացումը, Կարս-Գյումրի երկաթուղու վերագործարկումը կարելի է ինչպես երկու երկրների, այնպես էլ՝ տարածաշրջանի համար,

Եվրոպական միության հետ իրականացվող նոր հարեւանության ծրագիրը, ինչպես նաև Եվրոատլանտյան դաշինքի հետ հարաբերությունների խորացումը, համաձայնեցված անհատական գործընկերության գործողությունների ծրագիրը կարելի է նշանակություն ունի Հայաստանի տնտեսության քաղաքական համակարգի զարգացման, անվտանգության մեխանիզմների արդիականացման եւ ժողովրդավարության կառուցման համար: Ժողովրդավարության կայացումը Հայաստանում կամրապնդի մեր դիրքերը միջազգային հարաբերություններում եւ Լեռնային Ղարաբաղի շուրջ ընթացող բանակցություններում:»

3. «Ազգային ժողովրդավարական միություն» կուսակցություն - Վազգեն Մանուկյան

«ՌՎ պետք է կառավարի, եւ ի՞նչ է պետք անել Գ/ Արտաքին հարաբերություններ

2.Եվրամիությանն անդամակցելը պետք է դիտվի ՀՀ-ի արտաքին (նաև ներքին) քաղաքականության հիմնական ուղղություններից մեկը: Անհրաժեշտ է լիարժեք իրականացնել ինչպես ԵՄ-ի առջև ՀՀ-ի ստանձնած պարտավորությունները, այնպես էլ ԵՄ-ՀՀ Եվրոպական հարեւանության գործողությունների ծրագրով նախատեսված բարեփոխումները՝ հավատարիմ մնալով դրանց բովանդակությանը:

4.ՀՀ-ն պետք է ակտիվ արտաքին քաղաքականություն վարի՝ նպաստելով տարածաշրջանային ինտեգրացիային, նաև խորացնելով բազմաբնույթ հարաբերությունները Արևելքի մեր հարեւանների՝ հատկապես Իրանի եւ Արաբական երկրների հետ:

6.Անհրաժեշտ է խորացնել Վրաստանի հետ փոխշահավետ եւ գործընկերային հարաբերությունները: ՀՀ-ն մշտապես պետք է ուշադրության կենտրոնում պահի վիրահայության խնդիրները: Միջազգային իրավական նորմերը հաշվի առնելով՝ պետք է Վրաստանի հետ բանակցությունների միջոցով փորձել լուծում տալ Ջավախքում հայոց լեզվի տարածաշրջանային կարգավիճակի հարցին: Վրաստանի հետ կնքվելիք մեծ միջպետական պայմանագրի շրջանակում խորացնել ՀՀ-Ջավախք կապերը գիտական, կրթական եւ մշակութային ոլորտներում:

7.Բարելավել հայ-թուրքական հարաբերությունները՝ հասնելով սահմանների բացմանը: Այդ խնդրի լուծումը, սակայն, չպետք է իրականացվի ազգային խնդիրների եւ արժանապատվության ոտնահարման գնով:»

4. ՀՅԴ - Վահան Հովհաննեսյան

«ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Թուրքիայի հետ հարաբերությունները մնում են չկարգավորված, քանի որ այս պետությունը շարունակում է Հայաստանի նկատմամբ իր թշնամական քաղաքականությունը եւ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու, հայ-թուրքական սահմանը բացելու դիմաց նախապայմաններ է ներկայացնում: Երկկողմ հարաբերություններ կառուցելու նման ոճը անընդունելի է: Հայաստանը պետք է բարձրացնի Թուրքիայի թշնամական վերաբերմունքի, հայ-թուրքական սահմանի եւ Հայոց Ցեղասպանության համար Թուրքիայի պատասխանատվության հարցերը միջազգային ատյաններում: Հայաստանի եւ Սփյուռքի համատեղ ջանքերով Հայոց Ցեղասպանության ճանաչման հարցում վերջին տարիներին ձեռք բերված արդյունքները հիմք են տալիս այս ուղղությամբ աշխատանք կատարել նաև թուրք հասարակության հետ:

Մեր անմիջական հարեւանների՝ Վրաստանի եւ Իրանի հետ համագործակցության խորացումն ու ընդլայնումը ռազմավարական նշանակություն ունի Հայաստանի համար: Վրաստանի հետ բարիդրացիական հարաբերությունների ձեւավորումը լավ հնարավորություններ կստեղծի Հայաստանի համար մի շարք առաջնային խնդիրների լուծման համար: Հայ-վրացական հարաբերությունները կարելի է ինչպես տարածաշրջանում անվտանգության ապահովման եւ կայունության պահպանման, հարավկովկասյան երկրների եվրոինտեգրման գործընթացների խորացման, այնպես էլ երկկողմ փոխշահավետ համագործակցության եւ Ջավախքի հայության իրավունքների պաշտպանության տեսանկյունից: Հաշվի առնելով Ջավախքի առանձնահատուկ պայմանները եւ նման հարցերում միջազգային փորձը՝ Հայաստանը պետք է ջանք գործադրի հարեւան Վրաստանի հետ երկկողմ համաձայնագրեր կնքելու՝ Ջավախքի եւ հարակից շրջաններում ավանդաբար ապրող հայությանը տնտեսական, սոցիալական, քաղաքական եւ մշակութային կյանքի բոլոր բնագավառներում աջակցելու համար:

իրանի հիվանական Հանրապետությունը տարածաշրջանի ծանրակշիռ դերակատարներից է: Այս երկրի հավասարակշռված քաղաքականությունը նպաստում է Հարավային Կովկասում կայունության պահպանմանը: Հայաստան-իրան հարաբերություններում էներգետիկ, առեւտրատնտեսական, տրանսպորտային հաղորդակցության բնագավառներում համագործակցության զարգացման լայն հնարավորություններ կան, որոնք թույլ են տալիս մշակել եւ իրականացնել ռազմավարական ծրագրեր:»

5. Լեւոն Տեր-Պետրոսյան

« ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ ԿԱՄ ՀԱՆԴԱՐՏ ԽՈՂԵՐ

2. Արտաքին քաղաքականության ոլորտում Հայաստանի նոր իշխանությունների առջեւ կանգնած խնդիրների շարքում իրենց կարեւորությամբ առանձնանում են.

Բարիդրացիական հարաբերությունների ամրապնդումն ու խորացումը անմիջական հարեւանների՝ Ռուսաստանի, Վրաստանի, Իրանի հետ, կառուցողական ջանքերի գործադրումը Թուրքիայի եւ Ադրբեջանի հետ հարաբերությունների կարգավորման ուղղությամբ.

Հայաստանի քաղաքական եւ տնտեսական մեկուսացման հաղթահարումը, միջազգային եւ տարածաշրջանային տնտեսական համակարգերում երկրի ներգրավվածության աստիճանի բարձրացումը:»

5. ԵՀՔ ԳԾ-ով նախատեսված 2007թ. ընթացքում իրականացվելիք առաջնայնությունների ու միջոցառումների կատարման վիճակը

ՀՀ-ԵՄ ԳԾ-ով նախատեսված՝ 2007թ. իրականացվելիք առաջնությունների եւ միջոցառումների ցանկի 28-րդ՝ **Տտարածաշրջանային համագործակցություն** բաժնի 1-ին կետը նախատեսում է. «*հարևան երկրների հետ համագործակցելով շարունակել ջանքերն՝ ուղղված տարածաշրջանային և այլ հարակից խնդիրների լուծմանը, և խթանել հաշտեցման գործընթացը*»: Բավկանին ընդհանրական այս ձեւակերպումը թույլ չի տալիս միանշանակորեն գնահատել սույն կետով ստանձնած պարտավորությունների իրականացման վիճակը: Այնուամենայնիվ, «տարածաշրջանային խնդիրների լուծմանն» ու «հաշտեցման գործընթացի խթանմանն» ուղղված քայլերի շարքում կարելի է նշել 2007-ի հունիսին Սանկտ-Պետերբուրգում ԱՊՀ գագաթաժողովի շրջանակում ՀՀ եւ Ադրբեջանի նախագահներ Ռոբերտ Քոչարյանի եւ Իլհամ Ալիևի հանդիպումը:

Կրկին 2007-ի հունիսին Ստեփանակերտում, Երեւանում եւ Բաքվում կազմակերպվել են հայ եւ ադրբեջանցի ինտելեկտուալկների հանդիպումներ, ինչը կարող է որակվել որպես հասարակական շփումների միջոցով հակամարտության հաղթահարմանը նպաստող քայլ:

«28.2. ապահովել համագործակցություն Հարավային Կովկասի տարածաշրջանում բնապահպանության, ջրային ռեսուրսների կառավարման, էներգետիկայի, կրթության, սահմանների կառավարման, տրանսպորտի և տրանսպորտային հաղորդակցության, ինչպես նաև խորհրդարանական կապերի ոլորտներում:»

2007-ի ընթացքում ՀՀ բնապահպանության նախարարությունը շարունակել է մասնակցությունը ՄԱԶԾ/ԳԵՀ «Քուռ-Արաքս անդրսահմանային դեգրադացիայի նվազեցման» ծրագրին: Ծրագրի նպատակն է ապահովել, որպեսզի Քուռ-Արաքս գետային համակարգի ջրի որակը և քանակը բավարարեն էկոհամակարգի օպտիմալ գործունեության կարճաժամկետ և երկարաժամկետ պահանջները, ինչպես նաև գետն օգտագործող համայնքների կարիքները: Օժանդակ նպատակներից է՝ կրճատել աղտոտիչների հոսքը գետավազանում և բարելավել ջրի որակը:

2007 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ միջոցառումները՝ 2007թ. փետրվարի 20-21-ին Թբիլիսիում կայացել է «Քուռ-Արաքս գետավազանում անդրսահմանային ստորերկրյա ջրային ռեսուրսների կառավարում» հանդիպում, որի արդյունքում ձեռք է բերվել համաձայնություն Հայաստան-Վրաստան և Վրաստան-Ադրբեջան կողմերի միջև ստորերկրյա ջրային ռեսուրսների պահպանության համապարփակ մոդելների մշակման վերաբերյալ:

Իրականացվել է ֆինանսական աջակցություն 2007թ.-ի հունիսի 20-ին ԻԻՀ-ի Նորդուզ քաղաքում կայացած ՀՀ և ԻԻՀ ներկայացուցիչների միջև Արաքս սահմանային գետի աղտոտվածության խնդիրներին նվիրված աշխատանքային խմբի հինգերորդ նիստը անցկացնելու համար, ինչպես նաև ծրագրի ֆինանսական աջակցությամբ 2007թ.-ի

սեպտեմբերի 3-6-ը Իրանի Թավրիզ քաղաքում տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության ներկայացուցիչների միջև Արաքս սահմանային գետի երկու երկրների համատեղ սահմանի աղտոտվածության յոթերորդ նիստը:

Խորհրդարանական կապերի բնագավառում 2007թ. «հոկտեմբերի 30-ին Սանկտ Պետերբուրգում ԱՊՀ ՄԽՎ շրջանակներում տեղի է ունեցել իրավական, ագրարային, բնական ռեսուրսների եւ բնապահպանության, պաշտպանության եւ անվտանգության հարցերի, քաղաքական եւ միջազգային համագործակցության, սոցիալ-տնտեսական եւ իրավական հարցերով հանձնաժողովների նիստերը, որոնք ամփոփվեցել են ԱՊՀ ՄԽՎ խորհրդի նիստով:

ՀՀ ԱԺ նախագահ, ԱՊՀ ՄԽՎ-ում ԱԺ պատվիրակության ղեկավար Տիգրան Թորոսյանի եւ ՌԴ ԴԺ ԴԽ նախագահ, ԱՊՀ ՄԽՎ խորհրդի նախագահ Սերգեյ Միրոնովի հետ հանդիպման ընթացքում քննարկվեցել են միջխորհրդարանական համագործակցության խորացման հարցերը:»¹

«28.3. խորացնել համագործակցությունը Բնապահպանության տարածաշրջանային կենտրոնի (REC) շրջանակներում, մասնակցել ԵՄ-ի ջրային նախաձեռնություն EECOA աշխատանքային խմբի հանդիպումներին և շարունակել երկխոսությունը՝ ուղղված ԵՄ-ի ջրային նախաձեռնության ներքո ազգային քաղաքականության մշակմանը»

ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ պարոն Հ. Մաթիսյանի հավաստմամբ, Հայաստանը ակտիվ մասնակցություն է ունեցել Ջրային Նախաձեռնության շրջանակներում համագործակցությանը (հանդիպումներ Մոսկվայում 2003թ մարտին, 2004թ. փետրվարին), որոնց արդյունքում առաջարկվել են 11 ծրագրեր, որոնց նպատակն է Հազարամյակի զարգացման նպատակներին հասնելը: Միաժամանակ 2007թ.-ի ընթացքում Եվրամիության Ջրային նախաձեռնությունը «Ազգային Քաղաքականության Երկխոսության» շրջանակներում աջակցել է Ջրային տնտեսության պետական կոմիտեին՝ Հայաստանի գյուղական համայնքներում ջրամատակարարման և ջրահեռացման տնտեսության ֆինանսական ռազմավարության մշակման աշխատանքներին և ՀՀ բնապահպանության նախարարությանը՝ ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման սկզբունքների ներդրման աշխատանքներին: 2007թ.-ի վերջին իր ավարտման փուլին էր հասել Ջրային տնտեսության պետական կոմիտեի ծրագիրը, և միաժամանակ սկսվել են Հայաստանում գետավազանային կառավարման պլանի մոդելի մշակման նախապատրաստական աշխատանքները՝ Մարմարիկ գետի օրինակով: Կատարվել են ջրհավաք ավազանի նախնական գնահատման աշխատանքներ և կազմվել է տեխնիկական առաջադրանք: Ստեղծվել է «Ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման ուղեցույցի մշակումը Մարմարիկ գետի օրինակի վրա» պիլոտային ծրագրի մշակման աշխատանքներին օժանդակող խորհրդատվական միջգերատեսչական հանձնաժողով:

«28.4. շարունակել համագործակցությունն էներգետիկայի և տրանսպորտի բնագավառներում՝ ԵՄ/սևծովյան/կասպյան ավազանների երկրների և դրանց հարևանների նախաձեռնության շրջանակներում»

Էներգետիկ ոլորտում ԵՀԲ ԳԾ-ով Հայաստանի ստանձնած պարտավորությունների շրջանակում ՀՀ կառավարությունը 2007-ի նոյեմբերի 1-ին ընդունել է «ՀՀ ազգային անվտանգության դրույթներով մնախատեսված ՀՀ էներգետիկայի նախարարության գործունեության ծրագիրը»: Ծրագրի 4-րդ՝ «Էներգառեսուրսների մատակարարման տարատեսակնացում եւ տարածաշրջանային ինտեգրացում» բաժնի 26, 27 կետերում, մասնավորապես նշվում է, որ Եվրահանձնաժողովի նախաձեռնությամբ 2004 թ. նոյեմբերին Բաքվում կայացած Նախարարների խորհրդակցության կողմից հիմնադրվել և ներկայումս իր զարգացումն է ստանում Եվրամիության, Կասպից ծովի տարածաշրջանի պետությունների և նրանց հարևան երկրների միջև համագործակցությունը էներգետիկայի ոլորտում: Վերջինիս հիմնական խնդիրն է նշված տարածաշրջաններից վառելիքէներգետիկ պաշարների (հիմնականում՝ նավթ ու բնական գազ) անարգել և բոլոր ներգրավված երկրների համար շահավետ մեխանիզմների կիրառմամբ տարանցման ապահովումը դեպի Եվրամիություն:» Թեև «Հայաստանը տվյալ Համագործակցության շրջանակներում չի դիտարկվում որպես վառելիքէներգետիկ պաշարներ արտահանող երկիր: Սակայն, մենք անպայմանորեն պետք է օգտագործենք նման պաշարների տարանցման համար մեր աշխարհագրական նպաստավոր դիրքը, ներկայումս գործող ու ընդլայնման հնարավորություն ունեցող ստորգետնյա գազապահեստարանի առկայությունը և ապահովենք նման տարանցումների իրականացման երաշխիք հանդիսացող Գործընկերության և Համագործակցության Համաձայնագրով

¹Տե՛ս http://www.parliament.am/news.php?do=view&ID=2536&cat_id=1&day=30&month=10&year=2007&lang=arm

նախատեսված օրենսդրական, քաղաքականության և ինստիտուցիոնալ համապատասխանեցման գործընթացի շուտափույթ իրականացումը: Վերջինս կնպաստի Հայաստանի էներգահամակարգի ներուժի առավելագույնս օգտագործմանը Կասպիան տարածաշրջանի, այդ թվում նաև Իրանի՝ վառելիքէներգետիկ պաշարների դեպի Եվրոպա տարանցման հարցում և հնարավորություն կընձեռի Եվրահանձնաժողովի կողմից այդ նպատակով նախատեսվող ներդրումների ներգրավմանը:»

Այսինքն՝ ԵՄ/սևծովյան/կասպյան ավազանների երկրների և դրանց հարևանների նախաձեռնությանը Հայաստանի մասնակցության ջանքերը տարածաշրջանում առկա խնդիրների պատճառով դեռևս ծրագրային բնույթ են կրում միայն:

«28.5. հանրային օգտագործման ճանապարհները պատշաճ վիճակում պահելու համար ստեղծել ճանապարհների ֆինանսավորման երկարաժամկետ և թափանցիկ համակարգ

28.6. շարունակել համագործակցությունը ԵՄ-Սև և Կասպից ծովերի ավազանի տրանսպորտի նախարարների համաժողովին հաջորդող միջոցառումների համատեքստում, համաեվրոպական միջանցքների և շրջանների զարգացման (մասնավորապես՝ Բարձր մակարդակի աշխատանքային խմբի միջոցով), ինչպես նաև ՏՐԱՍԵԿԱ ծրագրի շրջանակներում»

«Հայաստանը մասնակցում է ՏՐԱՍԵԿԱ ծրագրի շրջանակներում իրականացվող բոլոր կարևոր միջոցառումներին, աջակցում է տարածաշրջանային նախագծերին, որոնց նպատակն է ապահովել հետագա համագործակցությունը և տնտեսական զարգացումն՝ ուղղված ավտոմոբիլային ճանապարհների և երկաթուղային կապակցումների զարգացմանը տարածաշրջանում:

...Հայաստանը ներառված է ավելի քան 18 տեխնիկական աջակցության ծրագրերում, որոնցից 4-ը ընթացքի մեջ են. դրանք են՝ «ՏՐԱՍԵԿԱ համակարգող խումբ», «Սահմանամերձ գոտիներում ընթացակարգի ներդաշնակում», «Տարանցիկ փոխադրումների համար ընդհանուր իրավաբանական բազայի ստեղծում»:¹

Հայաստանը շարունակում է նաև մասնակցել **Կասպի բնագավառում տարածաշրջանային համագործակցություն (ԿՏՀ), Տրանսպորտի նախարարների եվրոպական կոնֆերանս (ՏՆԵԿ / ECMT)** աշխատանքներին:

«28.7. բարելավել երկաթուղային ծառայությունների անվտանգությունը, արագությունը և արդյունավետությունը (փոխգործողունակությունը) և շարունակել բարեփոխումներն օպերատիվ և ֆինանսական կառավարման ասպարեզում

28.8. ընդլայնել Հայաստանի մասնակցությունը Հարավային Կովկասում իրավապահ մարմինների տարածաշրջանային համագործակցության շրջանակներում իրականացվող նախաձեռնություններին»

2007-ի մայիսի 29-ին պաշտոնական այցով Հայաստան է ժամանել Լեհաստանի արդարադատության եւ ներքին գործերի նախարար Յանուշ Կաչմարեկի գլխավորած պատվիրակությունը: ՀՀ ոստիկանության պետի հետ տեղի ունեցած հանդիպման ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել մշակել եւ ստորագրել Համաձայնագիր՝ «ԼՀ արդարադատության եւ ներքին գործերի նախարարության ու ՀՀ ոստիկանության միջեւ համագործակցության մասին»:

2007թ. սեպտեմբերին ՀՀ ոստիկանության պետ գեներալ-գնդապետ Հայկ հարությունյանի գլխավորած պատվիրակությունը Բաքվում մասնակցել է ԱԳՀ երկրների ՆԳՆ Խորհրդի նիստին, որի ընթացքում քննարկվել եւ ընդունվել են հանցավորության դեմ պայքարի տարբեր ոլորտներում համագործակցության բարելավման ուղղությամբ համապատասխան որոշումներ:

2007-ի դեկտեմբերի 3-ին ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակում մեկնարկել է ԵՄ ֆինանսավորմամբ, ՄԱԿ-ի Ջարգացման ծրագրի կողմից իրականացվող «հարավային Կովկասում թմրամիջոցների հյամազդման ծրագրի» (ՀԿԹՀՇ) 5-րդ փուլը: Այն նախատեսված է 2007-09թթ. համար, տարածաշրջանի երեք երկրներում՝ Հայաստանում, Վրաստանում, Ադրբեջանում, ծրագրի ընդհանուր բյուջեն 2 մլն 90 հազար եվրո է կազմում, որից 631 հազ եվրոն տրամադրվել է մեր երկրին: Ծրագրի շրջանակում նախատեսված է մշակել եւ ընդունել թմրամիջոցների ոլորտը կարգավորող ազգային ռազմավարական փաստաթղթեր, հստակեցնել թմրամիջոցների հսկման ազգային օրենսդրական դաշտը, հիմնել թմրամիջոցներին առնչվող տեղեկատվություն տրամադրող պետական կառույց, բուժվերականգնողական ծառայություններ մատակարարել:

¹ Տե՛ս <http://www.mtc.am/?p=100&ln=hy&newsid=121&highlight=7>

«28.9. ընդլայնել երկկողմ և բազմակողմ համագործակցությունը սևծովյան տարածաշրջանում»

Սևծովյան տարածաշրջանում Հայաստանը հագործակցություն է ծավալել ՄՕՏՀ կազմակերպությանն իր մշտական աշխատանքի միջոցով: Մասնավորապես 2007-ի հունիսին հայկական պատվիրակությունը Ստամբուլում մասնակցել է կազմակերպության հոբելյանական գագաթաժողովին, որում քննարկվել են էներգետիկայի, առևտրի, տրասպորտային, շրջակա միջավայրի պահպանման եւ կազմակերպված հանցավորության դեմ պայքարի ոլորտներում համագործակցության խնդիրներ:

«28.10. շարունակել ներգրավվածությունը ՄՕՏՀ-ի կազմակերպությունում, մասնավորապես՝ գիտական և տեխնոլոգիական համագործակցության ոլորտներում»

Այժմ մշակվում է համատեղ ծրագիր ՄՕՏՀ կազմակերպության շրջանակում ՀՀ Գիտության պետական կոմիտեի եւ Գիտությունների ազգային ակադեմիայի մասնակցությամբ՝ նվիրված գիտական մեներջման խնդիրներին:

«28.11. ընդլայնել հարավկովկասյան երեք երկրների միջև երիտասարդների փոխանակումը և համագործակցությունը ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերի և նախաձեռնությունների միջոցով»

2007թ. հունվարի 1-ից ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարությունը երիտասարդական մի շարք կազմակերպությունների հետ միասին ԵՄ ֆինանսավորմամբ իրականացնում է «Երիտասարդների կրիթման եւ դաստիարակություն, ինտելեկտուալ երկխոսության խթանում» նախագիծը (այն կշարունակվի մինչեւ 2011թ. դեկտեմբերի 31-ը, ընդհանուր բյուջեն 3 138 000 եվրո է կազմում): Նախագծի նպատակներ են հռչակված, masnav8apes, երիտասարդության հարցերի բնագավառում Հայաստան-ԵՄ հարաբերությունների ամրապնդումը, Եւ ծրագրերին հայ երիտասարդության մասնակցության խթանումը, Եվրոպական երիտասարդական քաղաքականության, կառույցների եւ ծրագրերի վերաբերյալ նրանց տեղեկացվածության մակարդակի բարձրացումը; տարածաշրջանային համագործակցության զարգացումը, համատեղ ծրագրերի միջոցով տարածաշրջանում կայունության հաստատումը եւ հասարակական կապերի ամրապնդումը:

«28.12. ապահովել 2005 թ. UNESCO-ի «Մշակութային արտահայտման բազմազանության պաշտպանության և խրախուսման նասինե կոնվենցիայի իրականացումը»

Դեռեւս 2006թ. Հայաստանը վավերացրել է «Մշակութային ինքնարտահայտման ձեւերի բազմազանության պաշտպանության եւ խախուսման նասինե կոնվենցիան, որով մասնակիցները վերահաստատում են իրենց մշակութային քաղաքականությունը ձեւավորելու եւ օրականացնելու, մշակութային ինքնարտահայտման ձեւերի բազմազանությունը պաշտպանելու եւ խրախուսելու նշված նպատակների իրականացման համար միջազգային համագործակցությունն ամրապնդելու իրենց ինքնիշխան իրավունքը, պարտավորվում են սեփական երկրի տարածքում համապատասխան նորմեր ընդունելիս առաջնորդվել կոնվենցիայի դրույթներով: Մասնավորապես կոնվենցիայի մասնակիցները պետք է ձգտեն իրենց տարածքում ձեւավորել այնպիսի միջավայր, որն առանձին անհատների եւ խմբերի պետք է օգնի մշակութային ինքնարտահայտման իրենց ձեւերի ստեղծման, տարածման, բաշխման հարցում; ինչպես երկրի տարածքում, այնպես էլ դրանից դուրս մշակութային ինքնարտահայտման տարբեր ձեւերից օգտվելու հնարավորություն ունենալ:

Հաշվի առնելով, որ նշված փաստաթուղթը մեր երկրի համար 2007-ի ընթացքում որեւէ կոնկրետ պարտավորություն չի նախատեսում (ինչը չէր էլ կարող անել), մյուս կողմից՝ միջազգային բոլոր պայմանագրերի (ինչպիսին է նաեւ միջազգային կոնվենցիան) պահպանումը մեր երկրի ուղղակի պարտավորությունն է, կարելի է եզրակացնել, որ Հայաստանն իրականացրել է նաեւ ԵՀԲ ԳԾ-ի 2007թ. միջոցառումների ցանկով նախատեսված այս պարտավորությունը եւս:

«28.13. ԵՄ-ի հետ համատեղ աշխատանքներ տանել Երևանում Եվրոպական տեղեկատվական կենտրոնի ստեղծման ուղղությամբ»

2007թ. նոյեմբերի 20-ին ՀՀ-ում Եվրահանձնաժողովի պատվիրակության ու Եվրոպական իրավունքի եւ ինտեգրման կենտրոնի (ԵԻԿ) միջեւ ստորագրվել է պայմանագիր, համաձայն որի կենտրոնում բացվել է EUI՝ Եվրոպական տեղեկատվական կենտրոն:

6. Եզրակացություն

Համեմատելով ԵՀԳ ԳԾ 2007-ի միջոցառումների ցանկում տեղ գտած ձեւակերպումներին իրականացված քայլերի համապատասխանելիությունը՝ կարելի է հավաստել, որ դրանք հիմնականում իրականացվել են:

Միաժամանակ տարածաշրջանային համագործակցության ամրապնդման բնագավառում Եվրահանձնաժողովը՝ «2007-ին ԵՀԲ իրականացման» Հայաստանում առաջընթացի մասին զեկույցում (Brussels, 3 April, SEC(2008)392) մասնավորապես նշում է, որ «ԵՀԲԳ Օժանդակության ծրագրի շրջանակում խթանվել է Հարավային Կովկասում տարածաշրջանային սահմանների վերահսկման ծրագրի իրականացումը (2008-2009): 2007-ի հոկտեմբերին Բրյուսելում նախարարների մակարդակով հանդիպման ընթացքում մասնակիցները պայմանավորվել են միջոցառումներն իրականացնել երկկողմ սկզբունքով (Հայաստան-Վրաստան, Վրաստան-Ադրբեջան):

Հայաստանը Կովկասյան տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի (REC) համահիմնադիրներից է (Ադրբեջանի, Վրաստանի ու Եվրահանձնաժողովի հետ): ...Հայաստանը ստորագրել է կենտրոնի նոր կանոնադրությունը»¹:

Այսպիսով, տարածաշրջանային համագործակցության ոլորտում ԵՀԳ ԳԾ-ով Հայաստանի ստանձնած պարտավորությունների իրականացման հարցում Եվրահանձնաժողովը անդրադառնում է երկու ոլորտի միայն: Մինչդեռ ԵՀԲ ԳԾ 2007-ի միջոցառումների ցանկի՝ տարածաշրջանային համագործակցություն ոլորտում նախատեսված քայլերի ձեւակերպումները հնարավորություն են ստեղծում այնպիսի ստանձնած պարտավորությունների իրականացումը՝ ըստ էության, նշված գործողությունների համար պատասխանատու հռչակված գերատեսչություններին հնարավորություն ընձեռելով շարունակել նախանշված գործունեությունը դեռևս մինչև 2007թ. կնքված պայմանագրերի շրջանակում: Այլ կերպ ասած, 2007-ի միջոցառումների ցանկը հարմարեցվել է մինչև այդ հաստատված ՀՀ կառավարության գործողությունների ծրագրին:

Մյուս կողմից ԵՀԲ ԳԾ 2007-ի միջոցառումների ձեւակերպումները խիստ անհամաչափ են. հստակ եւ որոշակի պարտավորությունների շարքում կարելի է հանդիպել բավականին ընդհանրական ձեւակերպումներ, որոնք դժվարացնում են ստանձնած պարտավորությունների իրականացման գնահատումը:

Միաժամանակ, միջոցառումներն առավել ուղղորդված են տարածաշրջանային առկա խնդիրների շրջանցմանը, առավել քիչ՝ դրանց հաղթահարմանը:

Ուստի, ընդհանրացնելով նշվածը, կարելի է հավաստել, որ տարածաշրջանային համագործակցության բնագավառում 2007թ. ընթացքում ՀՀ-ԵՄ ԵՀԲ ԳԾ-ի իրականացման խնդիրը ոչ թե նախատեսված միջոցառումների կատարումը, այլ համապատասխան միջոցառումների նշակումն ու ձեւակերպումն է:

*Աննա Մկրտչյան
փորձագետ
"Եվրոպական ինտեգրացիա" ՀԿ*

¹ COMMISSION STAFF WORKING DOCUMENT, 'Implementation of the European Neighbourhood Policy in 2007', Progress Report Armenia, Brussels, 3 April SEC(2008)392

ՄԻԳՐԱՑԻԱ

Օգտագործված հասկացումներ և համառոտագրություններ

ԱԳՄ համակարգ - արդյունավետության գնահատման ու մոնիթորինգի համակարգ

ԱՄՆ - Ամերիկայի Միացյալ Նահանգներ

ԳԾ - գործողությունների ծրագիր

ԵՀ - Եվրոպական համայնք

ԵՀՔ - Եվրոպական հարեւանության քաղաքականություն

ԵՄ - Եվրոպական Միություն

ԽՍՀՄ - Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն

ՀՀ - Հայաստանի Հանրապետություն

ՄԾ - միջոցառումների ծրագիր

ՏԿՆ ՄԳ - ՀՀ Տարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալություն

ՄԱԿ ՓԳՀ - Միավորված ազգերի կազմակերպության փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակ

ՄՄԿ- Միգրացիայի միջազգային կազմակերպություն

ՌԴ - Ռուսաստանի Դաշնություն

1. Ներածություն

2006թ. նոյեմբերի 14-ին Եվրոպական հանձնաժողովը (այսուհետ՝ ԵՀ) Հայաստանի Հանրապետության հետ կնքել է Եվրոպական հարեւանության քաղաքականության (ԵՀՔ) շրջանակներում գործողությունների ծրագիր (ԳԾ), որի հիման վրա հետագայում մշակվեց տարեկան միջոցառումների ծրագիր:

ՀՀ կառավարությունը 2007թ. հուլիսի 19-ին N 927-Ն որոշմամբ հաստատել է այդ նույն թվականի հունիսի 26-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի և Եվրոպական հարեւանության քաղաքականության իրականացման շրջանակներում Հայաստանի Հանրապետություն - Եվրոպական Միություն գործողությունների ծրագրով նախատեսված՝ 2007 թվականի ընթացքում իրականացվելիք առաջնայնությունների և միջոցառումների ցանկը: Փաստացի 2007թ. միջոցառումների ծրագրով (ՄԾ) էլ սկսվել է ԵՀՔ ԳԾ իրականացումը:

ԵՄ-ՀՀ ԵՀՔ ԳԾ հավելվածի 4.5.1. (Համագործակցություն սահմանների կառավարման գործում) և 4.5.2 Միգրացիայի խնդիրներ (օրինական և անօրինական միգրացիա, ռեադմիսիա, վիզա, ապաստան) բաժիններում սահմանված են միգրացիայի ոլորտում լուծելիք խնդիրները, մասնավորապես՝

1. **Հայաստանի, ԵՄ անդամ պետությունների և հարեւան երկրների միջև անդրսահմանային համագործակցությունն** ակտիվացնելու նպատակով նախատեսել Հարավային Կովկասում *BOMCA* տիպի տեխնիկական աջակցության ծրագիր՝ համապատասխան օրինապահ մարմինների

միջև տարածաշրջանային համագործակցություն զարգացնելու նպատակով (պատասխանատուներ՝ ՀՀ Պետական սահմանային ծառայություն, ՀՀ կառավարությանն առընթեր Ոստիկանություն, ՀՀ Տարածքային կառավարման նախարարության Միգրացիայի ծառայություն եւ ՀՀ Մաքսային կոմիտե),

2. **միգրացիոն խնդիրների շուրջ համագործակցության** նպատակով իրականացնել հետեւյալ գործողությունները՝

- մշակել եւ սկսել կիրառել համապարփակ, ամբողջական եւ հավասարակշռված ազգային գործողությունների ծրագիր միգրացիայի ու ապաստանի խնդիրների վերաբերյալ,
- օժանդակել աշխատանքային միգրացիայի կազմակերպման գործում,
- տեղեկատվության փոխանակում եւ հնարավոր համագործակցություն տարանցիկ միգրացիայի հարցերում,
- ստեղծել տվյալների էլեկտրոնային բազա՝ միգրացիոն հոսքերը վերահսկելու համար,
- հնարավորինս օգտագործել ԵՀ առկա համայնքային ծրագրերը, ներառյալ *AENEAS*-ը եւ դրա հաջորդները՝ ապաստանին եւ միգրացիային առնչվող գործողությունները սատարելու նպատակով,

3. **միգրացիոն խնդիրների, այդ թվում անօրինական միգրացիայի կանխարգելման եւ վերահսկման, սեփական քաղաքացիների, ապատրիդների եւ երրորդ երկրների քաղաքացիների ռեադմիսիայի շուրջ ընդլայնված երկխոսություն ծավալելու** նպատակով իրականացնել հետեւյալ գործողությունները՝

- տեղեկատվության եւ լավագույն փորձի փոխանակում միգրացիային եւ ապաստանին առնչվող խնդիրների (մուտք երկիր, կեցություն, ինտեգրում, ժամանակավոր պաշտպանություն, *EURODAC* համակարգ, ապաստան հայցողների ընդունման պայմաններ, անօրինական միգրանտների կալանավորում) եւ անօրինական միգրացիայի վերաբերյալ համակարգ,
- ռեադմիսիոն հարցերի շուրջ երկխոսություն նախաձեռնել ԵՄ-ի մակարդակով, ինչը կարող է հանգեցնել ԵՀ-Հայաստան ռեադմիսիայի համաձայնագրի կնքմանը. փորձի եւ փորձաքննության փոխանակում նմանատիպ համաձայնագրի գործնական հետեւանքների վերաբերյալ: Մինչեւ ռեադմիսիայի մասին ԵՀ համաձայնագրի բանակցությունների ավարտը ընդլայնել գործնական համագործակցությունը ԵՄ անդամ պետությունների հետ,
- զարգացնել համագործակցությունը միջազգային կազմակերպությունների ու ծագման, տրանզիտի եւ վերջնակետի հիմնական երկրների համապատասխան գործակալությունների հետ՝ միգրացիոն գործընթացները կառավարելու համար,
- մշակել եւ իրականացնել վերադարձած/հայրենադարձած անձանց ռեինտեգրացիայի աջակցությանն ուղղված միջոցառումներ,

4. **օրենսդրությամբ սահմանված չափանիշներին համապատասխանող անձանց համար միջազգային չափանիշներին համապատասխանող,**

փախստականների եւ ներքին տեղահանված անձանց պաշտպանության ինքնաբավ, ինտեգրացիայի հնարավորություններ առաջարկող ազգային համակարգերի արդիականացման նպատակով իրականացնել հետեւյալ գործողությունները՝

- 1951թ. Ժնեւի Կոնվենցիայի եւ 1967թ. Արձանագրության սկզբունքների կիրառում, ապաստանի ու փախստականների վերաբերյալ ազգային օրենսդրության բարելավում՝ միջազգային եւ ԵՄ չափանիշներին համապատասխան,
- կիրառել ապաստանի հայցերի վերաբերյալ ստանդարտ հայեցակարգեր՝ միջազգային եւ ԵՄ չափանիշներին համապատասխան,
- ամրապնդել Տարածքային կառավարման նախարարության Միգրացիոն գործակալության վարչական կարողությունները,
- բարելավել փախստականների եւ ներքին տեղահանված անձանց պաշտպանությունն ու ցուցաբերվող աջակցությունը, մասնավորապես նրանց ինքնաբավարարությունը եւ ինտեգրումն ապահովելու համար (հավանաբար կենտրոնանալով գյուղական շրջաններում գտնվող առավել խոցելի փախստականների եւ ժամանակավոր կացարաններում բնակվող անձանց վրա). հնարավոր գործողությունները՝ ինքնազբաղվածության եւ փոքր բիզնեսի քաջալերում, ժամանակավոր կացարաններում գտնվող անձանց բնակարանային պայմանների բարելավում,

5. **Անձանց տեղաշարժի հեշտացման** նպատակով իրականացնել հետեւյալ գործողությունները՝

- տեղեկատվության փոխանակում վիզաների վերաբերյալ,
- համագործակցություն ճամփորդական փաստաթղթերի եւ վիզաների անվտանգությունը բարելավելու հարցում՝ միջազգային ստանդարտներին համապատասխան, ներառյալ կենսաչափական հատկանիշների ներդրում անձնագրերում,
- ԳՀՀ-ի գործող մեխանիզմների շրջանակներում երկխոսություն հաստատել միգրացիոն հարցերի շուրջ, ներառյալ անօրինական միգրացիայի կանխումը եւ դրա դեմ պայքարը, սեփական, երրորդ երկրի քաղաքացիների ու քաղաքացիություն չունեցող անձանց ռեադմիսիան եւ վիզային հարցերը:
- Եվրոպական հարեւանության քաղաքականության շրջանակներում Հայաստանի Հանրապետություն - Եվրոպական Միություն գործողությունների ծրագրով նախատեսված՝ 2007 թվականի ընթացքում իրականացվելիք առաջնայությունների եւ միջոցառումների ցանկի 7-րդ՝ **Միգրացիայի եւ ներքին գործերի ոլորտներում համագործակցության ամրապնդում** բաժնում ներկայացված են այն միջոցառումները, որոնք 2007թ. ընթացքում ԵՀՔ ԳԾ շրջանակներում պետք է իրականացվեին ՀՀ կառավարության կողմից: Այդ միջոցառումներն են՝
7.1. մշակել միգրացիայի եւ ապաստանի խնդիրների ազգային գործողությունների ծրագիր (պատասխանատու՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարություն),
7.2. ստեղծել տվյալների էլեկտրոնային բազա՝ միգրացիոն հոսքերը

վերահսկելու նպատակով (պատասխանատուներ՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարություն եւ ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն),

7.3. բարելավել ապաստանին եւ փախստականներին առնչվող ազգային օրենսդրությունն ու ապահովել վերջինիս պատշաճ իրականացումը (պատասխանատու՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարություն),

7.4. նախաձեռնել համագործակցություն բիոմետրիկ անձնագրերի ներդրման ուղղությամբ (պատասխանատու՝ ՀՀ կառավարությանն առընթեր Ոստիկանություն),

7.5. իրականացնել շարունակական համագործակցություն մուտքի վիզաների անվտանգության ապահովման ուղղությամբ (պատասխանատու՝ ՀՀ կառավարությանն առընթեր Ոստիկանություն),

7.6. նախաձեռնել թրաֆիքինգի գոհերի պաշտպանության, օգնության եւ վերականգնողական միջոցառումների ծրագրի մշակման աշխատանքները (պատասխանատու՝ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ արտաքին գործերի նախարարություն):

Ստորեւ ներկայացվող հաշվետվությունը հիմնականում վերաբերում է վերը նշված միջոցառումների այն կետերին (7.1.-7.3.), որոնց կատարման համար առաջնային պատասխանատու է սահմանված ՀՀ տարածքային կառավարման նախարարության Միգրացիոն գործակալությունը (այսուհետ՝ ՏԿՆ ՄԳ): Նկատի ունենալով մյուս՝ 7.4.-7.6. կետերի տրամաբանական կապվածությունը առաջին երեքի հետ՝ մեր կողմից փորձ կարվի համատոտակի անդրադառնալ նաեւ այդ կետերի կատարման վիճակին, չնայած ՏԿՆ ՄԳ-ն սահմանված չէ որպես դրանց կատարման համար պատասխանատու գերատեսչություն:

I. Մոնիթորինգի ծրագրի խնդիրները

Քանի որ եվրոպական ինտեգրացիան հռչակված է որպես ՀՀ արտաքին քաղաքականության գերակա ուղղություններից մեկը, խիստ կարևոր է, որ ԵՀՔ շրջանակներում նախատեսված գործողություններն իրականացվեն լրջորեն եւ ոչ թե ձեւականորեն ու տան լուրջ ու մնայուն արդյունքներ, որոնք մի կողմից կբարձրացնեն ՀՀ միջազգային քաղաքական վարկը, իսկ մյուս կողմից կարձանագրեն իրական փոփոխություններ Հայաստանի հասարակության գիտակցության մեջ եւ վարքագծում՝ եվրոպական իրավաքաղաքական արժեհամակարգի կողմնորոշման ու յուրացման ուղղությամբ:

Նպաստելու համար ԵՀՔ ԳԾ արդյունավետ իրականացմանը, մշակվել եւ իրականացվում է սույն մոնիթորինգային ծրագիրը, որն իր բնույթով կարելի է կոչել նաեւ նախամոնիթորինգային, քանի որ կոչված է լուծել մի շարք նախապատրաստական խնդիրներ կամ ապահովել ԵՀՔ ԳԾ իրականացման հետագա ողջ ընթացքի ու ազդեցությունների արդյունավետության գնահատման

եւ մոնիթորինգի ամբողջական ու գործուն համակարգի ստեղծման մի շարք կարեւոր նախադրյալներ, մասնավորապէս՝

1. Ճշգրտել "մոնիթորինգ" եւ "գնահատում" հասկացությունների իմաստը ԵՀՔ ԳԾ համատեքստում,
2. ԵՀՔ ԳԾ-ով նախատեսված ոլորտներից յուրաքանչյուրի համար ճշգրտել լուծման ենթակա հիմնախնդիրները,
3. սահմանել այդ հիմնախնդիրների լուծման ուղղությամբ իրականացվող գործողությունների մոնիթորինգի ու գնահատման նպատակները, առաջարկներ ներկայացնել այս ծրագրի հաջորդ փուլերում իրականացվելիք աշխատանքների հիմնական ուղղությունների մասին:

Վերջին կետի առնչությամբ հարկ ենք համարում նշել, որ Ծրագրի հաջորդ փուլի առաջնահերթ իրականացման խնդիրներից են լինելու՝

1. ԳԾ-ով սահմանված միջոցառումների մոնիթորինգի ու գնահատման չափորոշիչներն ու քանակական եւ որակական ցուցիչների մշակումը,
2. ԳԾ-ով սահմանված միջոցառումների մոնիթորինգի ու գնահատման, ինչպէս նաեւ մոնիթորինգի միջոցով ստացվող տեղեկությունների ամփոփման եւ վերլուծությունների մեթոդաբանության մշակումն ու փորձարկումը,
3. մոնիթորինգի ու գնահատման արդյունքների միջոցով եվրախնտեզրման ուղղությամբ Հայաստանի հասարակության հանրային գիտակցության բարելավման եւ քաղաքականության իրականացման գործընթացներում ներքաշված ազգային եւ արտազգային հաստատությունների գործունեության կատարելագործման վրա ազդելու մեխանիզմների մշակումը եւ այլն:

Նշված նախադրյալների ապահովումը ենթադրում է բավականաչափ երկարատեւ եւ բազմափուլ մոնիթորինգային ծրագրի իրականացում, որի առաջին փուլի շրջանակներում էլ ներկայացվում է սույն հաշվետվությունը:

Այս փուլում նախատեսվում է ապահովել վերը նշված նախադրյալներից առաջին երեքը՝

- Ճշգրտել "մոնիթորինգ" եւ "գնահատում" հասկացությունների իմաստը ԵՀՔ ԳԾ համատեքստում,
- ԵՀՔ ԳԾ-ով նախատեսված ոլորտներից յուրաքանչյուրի համար ճշգրտել լուծման ենթակա հիմնախնդիրները,
- սահմանել այդ հիմնախնդիրների լուծման ուղղությամբ իրականացվող գործողությունների մոնիթորինգի ու գնահատման նպատակները:

II. ԵՄ-Հայաստան ԵՀՔ ԳԾ-ի շրջանակներում 2007թ. միջոցառումների ցանկով սահմանված միջոցառումների իրականացման վիճակը

1. Մեթոդաբանական նկատառումներ

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ծրագիրը, որի շրջանակներում ներկայացվում է սույն հաշվետվությունը, ոչ միայն ԵՄ-Հայաստան ԵՀՔ ԳԾ-ի

(այսուհետ՝ ԵՀՔ ԳԾ) շրջանակներում, այլև ընդհանրապես միգրացիոն խնդիրների լուծման ուղղությամբ իրականացվող միջոցառումների մոնիթորինգի առաջին փորձն է՝ նպատակահարմար ենք համարում ներկայացնել այս ոլորտում իրականացվող միջոցառումների արդյունավետության գնահատման եւ մոնիթորինգի իրականացման հետ կապված որոշ մեթոդաբանական խնդիրներ:

Այս ուղղությամբ առաջին եւ ամենակարեւոր խնդիրը ինչպես այս ծրագրի շրջանակներում, այնպես էլ ընդհանրապես **միգրացիայի ոլորտում իրականացվող քաղաքականության ընթացքի եւ արդյունավետության գնահատման ու մոնիթորինգի (այսուհետ՝ ԱԳՄ) հայեցակարգի մշակումն է**, որը ենթադրում է հետեւյալ մեթոդական ու տեխնիկական խնդիրների լուծումը՝

1. միգրացիայի ոլորտում իրականացվող քաղաքականության ԱԳՄ համակարգի նպատակների ու խնդիրների սահմանում, ԱԳՄ իրականացնող սուբյեկտների, նրանցից յուրաքանչյուրի կողմից ԱԳՄ իրականացման առանձնահատկությունների պարզում,
2. այն հիմնախնդիրների շրջանակի ճշգրտում, որոնք պոտենցիալ կերպով կարող են դառնալ ԵՀՔ ԳԾ-ի շրջանակներում իրականացվող միջոցառումների առարկա,
3. այն միջոցառումների ցանկի ճշգրտում եւ սահմանում, որոնց միջոցով այդ հիմնախնդիրները կարող են լուծումներ ստանալ ԵՀՔ ԳԾ-ի շրջանակներում,
4. այդ միջոցառումներից յուրաքանչյուրի արդյունքների ու ազդեցության չափման համար քանակական եւ որակական ցուցիչների (ինդիկատորների) համակարգի մշակում,
5. այդ ինդիկատորների միջոցով միգրացիայի ոլորտում առկա այս կամ այն հիմնախնդրի լուծման ուղղությամբ գործադրված ջանքերի արդյունավետության գնահատման մեթոդաբանության մշակում, այդ թվում՝ մոնիթորինգային տեղեկությունների հավաքման, դրանց ամփոփման, վերլուծության եւ օգտագործման մեթոդներն ու մեխանիզմները եւ այլն:

Նշված մեթոդաբանական խնդիրները ներկա ծրագրի լուծման խնդիրներ չեն եւ բնականաբար չէին կարող մանրամասնորեն լուսաբանված լինել սույն հաշվետվության մեջ: Սրանք ավելի շուտ ներկա ծրագրի շրջանակներում առաջարկվող մեթոդաբանական նախադրյալներ են՝ ԵՀՔ ԳԾ իրականացման ամբողջ ընթացքի համակարգված մոնիթորինգն ու գնահատումն ապահովող շարունակական ծրագրի իրականացման համար:

"Մոնիթորինգ" եւ "գնահատում" հասկացությունների իմաստը ԵՀՔ ԳԾ համատեքստում

Մոնիթորինգ բառը ծագում է լատիներեն *monitor* բառից, որը բառացի նշանակում է հիշեցնող, զգուշացնող: Տարբեր պատմական ժամանակաշրջաններում եւ տարբեր բնագավառներում այն ունեցել է տարբեր

իմաստներ, մասնավորապես՝ ուսուցանել (դաստիարակել), խորհուրդ տալ, առաջարկել, հսկել, վերահսկել, դիտել, դիտարկել, հետեւել, գաղտնադիտել, գաղտնալսել
եւ
այլն:

Այսքան բազմիմաստ լինելով հանդերձ, այնուամենայնիվ ժամանակի ընթացքում կայունացել է այդ հասկացության այն իմաստը, որն արտահայտել է ինչ-որ երեւոյթի, իրադարձութան, գործողութան նկատմամբ հսկողություն, դիտարկում: Դրանից էլ մոնիթորինգ (*monitoring*) հասկացությունը, որի տակ ուղղակիորեն հասկացվում է ինչ-որ մի բանի (երեւոյթի, գործընթացի) հետեւում, դիտարկում, վերահսկում:

Լայն առումով միգրացիոն քաղաքականության բնագավառում մոնիթորինգ ասելով՝ նկատի ունենք բնակչության տեղաշարժին առնչվող քաղաքականությանն ընդհանրապես, կամ միգրացիոն հոսքերում ներքաշված կամ պոտենցիալ կերպով ներքաշման ենթակա խմբերին, տարածքներին, միգրացիոն հոսքերի պետական կարգավորմանն առնչվող խնդիրներին, միգրացիայի երեւոյթի այս կամ այն կողմին առնչվող խնդիրների լուծման ուղղությամբ պետական կառավարման կամ հասարակական այլ սուբյեկտների կողմից վարվող քաղաքականության, դրա շրջանակներում իրականացվող ծրագրերի նկատմամբ որոշակի նպատակներով պլանավորված, նպատակամղված դիտարկման եւ վերահսկման գործունեություն, որն իրականացվում է որոշակի կառույցների կողմից, որոշակի պարբերականությամբ, որոշակի մեթոդներով:

Ավելի նեղ, ընթացակարգային իմաստով, նկատի է առնվում միգրացիոն որեւէ կոնկրետ խնդրի լուծմանն ուղղված որեւէ կոնկրետ հաստատության կողմից իրականացվող կոնկրետ միջոցառման ընթացքը դիտարկելու, ինչպես նաեւ դրա ընթացիկ ցուցանիշների գրանցման գործողությունները: Հետեւաբար մոնիթորինգ իրականացնել նշանակում է որեւէ գործողություն դիտարկման ճանապարհով վերահսկել, պահել հսկողության տակ՝ լիազոր մարմիններին եւ ղեկավար անձանց հաջորդաբար ներկայացվող հստակ հաշվետվությամբ: Մոնիթորինգը նախատեսված է ապահովելու համար նախանշված խնդիրների ու նպատակների իրականացման ճանապարհին եղած առաջընթացի պարբերական հավաստագրումը՝ առկա չափորոշիչների եւ անցած տարիների (ժամանակաշրջանի) փորձի հիման վրա:

Մոնիթորինգը կարելի է դասակարգել մի քանի հիմքերով, մասնավորապես՝

1. ըստ իրականացման պարբերականության,
2. ըստ իրականացնողների (մոնիթորինգի սուբյեկտներ),
3. մեկ այլ մոտեցման համաձայն՝ առանձնացվում են մոնիթորինգի հետեւյալ չորս տեսակները՝
 - ներքին մոնիթորինգ,
 - արտաքին մոնիթորինգ,
 - արտաքին աուդիտ,
 - անկախ մոնիթորինգ,
4. Մոնիթորինգը կարելի է դասակարգել նաեւ ըստ ընդգրկման ծավալի,
5. ըստ ոլորտների:

Գնահատում (estimation) բառի արմատը լատիներեն նշանակում է՝ "պարզել արժեքը կամ նշանակությունը": Դա ուսուցողական եւ գործողությունների մղող

կառավարչական գործիք է, որը միտված է հնարավորինս համակարգված եւ անկողմնակալ վերլուծելու գործունեության համապատասխանությունը, արդյունավետությունը, ազդեցությունը եւ ներգործությունը՝ թե՛ ընթացիկ ծրագրի վիճակի եւ թե՛ ապագա ծրագրային պլանավորման ուղղությամբ:

Գնահատումը ընթացիկ (ավարտված) ծրագրի կամ քաղաքականության մշակման, իրագործման եւ արդյունքների համակարգված վերլուծություն է:

Ծրագրային տեսանկյունից, գնահատումը մի գործընթաց է, որն ուղղված է հնարավորինս համակարգված եւ անաչառորեն վերլուծելու վերահսկման ենթակա գործունեության համապատասխանությունը, արդյունավետությունը, ազդեցությունը եւ ներգործությունը՝ գործունեության իրականացման ծրագրով սահմանված ակնկալվող ընթացիկ եւ վերջնական արդյունքներին համապատասխանության տեսանկյունից: Օրինակ՝ գնահատել ԵՀՔ ԳԾ շրջանակներում միգրացիոն ոլորտին վերաբերող որեւէ միջոցառման արդյունավետությունը նշանակում է պարզել այդ միջոցառման իրականացման հետեւանքով ստեղծված արդյունքի համապատասխանությունը նախապես պլանավորված կամ ակնկալվող արդյունքներին: Ընդ որում, այդ ակնկալվող արդյունքները, որպես կանոն, լինում են երկու խմբի՝

- *արդյունք-միջոցներ* (խնդրի լուծման համար անհրաժեշտ ընդունված իրավական ակտեր, ստեղծված նոր ինստիտուտներ, մշակված մեթոդական եւ տեխնիկական նախադրյալներ, հատկացված ֆինանսատնտեսական նոր միջոցներ եւ այլն),
- *արդյունք-նպատակներ* (միջոցառման արդյունքում քաղաքականության առաջնային թիրախ խմբերի, տվյալ դեպքում՝ միգրացիոն հոսքերի մեջ ներքաշված կամ ներքաշման ենթակա խմբերի վիճակային փոփոխությունները, մասնավորապես՝ էմիգրացիոն հոսքերի եւ հատկապես անօրինական միգրացիայի նվազումը, ռեադմիսիայի միջոցով Հայաստան վերադարձած անձանց թվի աճը, թրաֆիքինգի գոհ դարձած անձանց թվի նվազումը, ՀՀ վերադարձած նախկին էմիգրանտների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավումը, արտերկրում օրինական աշխատանք գտած ՀՀ-ից աշխատանք գտնելու նպատակով էմիգրացված անձանց թվի աճը եւ այլն):

Գնահատումը կառավարչական միջոց է, ինչպես նաեւ կազմակերպական գործընթաց, որը նպատակաուղղված է ընթացիկ գործունեությանը, տարբեր մակարդակների պլանավորումներին, այդ թվում ոլորտային եւ համապետական քաղաքականությունների մշակմանն առնչվող որոշումների ընդունման բարելավմանը: Գնահատման արդյունքները կարող են օգնել նաեւ տվյալ ոլորտում առաջացող երեւոյթների, առկա միտումների զարգացման ուղղությունների կանխատեսման եւ դրանց հնարավոր բացասական հետեւանքների կանխարգելմանն ուղղված որոշումների կայացման համար:

Ավելի պարզ ասած՝ մոնիթորինգը կարող է որպես միջոց ծառայել գնահատման համար կամ գնահատումը կարող է հենվել եւ, որպես կանոն, հենվում է մոնիթորինգային տվյալների վրա: Այս երկու հասկացությունները նպատակ-միջոց-նպատակ պատճառահետեւանքային տրամաբանությամբ շատ սերտորեն փոխկապակցված են միմյանց հետ եւ կառավարման պրակտիկայում, որպես կանոն, հանդես են գալիս որպես մեկ միասնական համակարգ կամ կազմակերպակառավարչական բնույթի միջոցառումների ամբողջություն:

Ուստի այսուհետ մենք այդ երկու հասկացությունները կկիրառենք որպես մեկ-միասնական համակարգ բնորոշող հասկացություն:

Քանի դեռ չկա միգրացիայի ոլորտում իրականացվող քաղաքականության արդյունավետության գնահատման եւ մոնիթորինգի միացյալ համակարգի հայեցակարգ, այդ թվում ձեւավորված չէ նույնիսկ ԵՀՔ ԳԾ իրականացման ընթացքն ու արդյունքները պարբերաբար մոնիթորինգի ենթարկելու միասնական մեթոդաբանություն (մասնավորապես՝ միգրացիայի ոլորտում), մեր կարծիքով՝ այս փուլում ԵՀՔ ԳԾ շրջանակներում ՀՀ կողմից միգրացիայի ոլորտում 2007թ. իրականացվելիք միջոցառումների մոնիթորինգը պետք է կատարել հետեւյալ տեսանկյուններից՝

1. ամբողջականացնել միգրացիոն ոլորտի խնդիրները՝ դասակարգելով դրանք ըստ ընդգրկման մասշտաբների եւ լուծման համար անհրաժեշտ նախադրյալների,
2. պարզել դրանց արտացոլվածությունը ԵՀՔ ԳԾ-ում՝ ցույց տալով այդ փաստաթղթում ընդգրկված չլինելու պատճառները,
3. պարզել ընդգրկվածության կամ արտացոլվածության հստակությունը իրականացման մեխանիզմների հստակության տեսանկյունից,
4. պարզել ԵՀՔ ԳԾ-ում ընդգրկված խնդիրների արտացոլվածությունը այլ ծրագրային փաստաթղթերում եւ պետական ծրագրերում,
5. պարզել 2007թ. միջոցառումների ցանկում ընգրկված միջոցառումների իրականացվածության աստիճանը եւ ժամանակացույցից հետ ընկնելու պատճառները, ինչպես նաեւ այդ միջոցառումներին հաջորդող ժամանակահատվածներում իրականացնելու հնարավորությունները եւ այլն:

Այս նկատառումներով, ստորեւ նախ որոշակի խմբավորմամբ ներկայացվում են, մեր կարծիքով, մեր երկրի համար միգրացիոն ոլորտում կարեւորագույն հիմնախնդիրները, ապա միայն փորձ է արվում վերլուծել ԵՀՔ ԳԾ-ում դրանց արտացոլվածության աստիճանն ու 2007թ. նախատեսված միջոցառումների իրականացման վիճակը:

Սույն հաշվետվության համար կիրառվել են տեղեկությունների հավաքման հետեւյալ մեթոդները:

1. *Փաստաթղթերի ուսումնասիրության* մեթոդը: Ուսումնասիրվել են "Հայաստանի Հանրապետությունում բնակչության միգրացիայի պետական կարգավորման հայեցակարգը", ԵՀՔ ԳԾ ձեւավորման, դրանում ընդգրկված միջոցառումների իրականացման վերաբերյալ ՏԿՆ ՄԳ հաշվետվությունները, ԵՀՔ ԳԾ-ում ընդգրկված խնդիրների լուծման հետ կապված՝ ՄԳ կողմից մշակված դիտողությունները, առաջարկները, այդ հարցերով ՄԳ պետի կողմից տարբեր գերատեսչություններին ուղղված նամակները եւ այլն: 2008թ. փետրվարի 19-ի ՀՀ նախագահական ընտրություններում առաջադրված ՀՀ նախագահի որոշ թեկնածուների նախընտրական ծրագրերը:
2. *Ոչ ստանդարտ հարցազրույցի* մեթոդը: Հարցազրույցներ են իրականացվել ՄԳ պետի, ինչպես նաեւ Միգրացիոն գործակալության այլ պաշտոնյաների հետ:

2. Միգրացիոն ոլորտի հիմնախնդիրները

Միգրացիոն ոլորտի հիմնախնդիրների խմբերը

Միգրացիոն ոլորտի հիմնախնդիրները կարելի է խմբավորել մի քանի չափանիշներով, մասնավորապես՝

1. ըստ դրանց ընդգրկունության՝

1.1. մակրոհիմնախնդիրներ, որոնք բնորոշ են ամբողջ երկրին կամ միգրացիոն հոսքերի մեջ փաստացի ներքաշված կամ պոտենցիալ կերպով ներքաշման ենթակա ողջ համախմբին,

1.2. միկրո կամ լոկալ հիմնախնդիրներ, որոնք բնորոշ են երկրի որեւէ հատվածին կամ միգրացիոն հոսքերի մեջ ներքաշված այս կամ այն խմբին (օրինակ՝ ՀՀ որեւէ մարզին բնորոշ, ՀՀ-ից դուրս եկած էմիգրանտներին կամ ՀՀ վերադարձած, ռեադմիսիայի ենթարկված անձանց կամ աշխատանքային միգրանտներին վերաբերող հիմնախնդիրներ եւ այլն),

2. ըստ այդ հիմնախնդիրների լուծման նախապայմանների, այսինքն՝ այն ենթահամակարգերի, որոնք անհրաժեշտ են այդ հիմնախնդիրներին համակարգված լուծումներ տալու համար: Այդ առումով վերջիններս բաժանվում են հետևյալ խմբերի՝

2.1. քաղաքական հիմնախնդիրներ, այսինքն՝ քաղաքական իշխանության կողմից առկա հիմնախնդիրի գիտակցում, դրանց լուծման քաղաքական կամքի եւ նախաձեռնության դրսեւորում, լուծմանն ուղղված քաղաքական ռազմավարությունների, հայեցակարգերի մշակում, ինչպես նաեւ լուծման համար անհրաժեշտ ներքաղաքական ու արտաքին քաղաքական պայմանների առկայություն եւ այլն,

2.2. օրենսդրական հիմնախնդիրներ, այսինքն՝ հիմնախնդիրներ, որոնք կապված են առկա հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ օրենքների ընդունման եւ դրանց իրականացման համար անհրաժեշտ իրավական մեխանիզմների սահմանման հետ,

2.3. ինստիտուցիոնալ հիմնախնդիրներ, այսինքն՝ հիմնախնդիրներ, որոնք կապված են առկա հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ դրանց կարելորությանը համարժեք իրավասություններ եւ կարողություններ ունեցող պետական կառավարման ինստիտուտների ստեղծման, դրանց առանձնահատուկ իրավասությունների հստակ տարանջատման ու ընդհանրական իրավասությունների իրականացմանն ուղղությամբ համագործակցության հստակ համակարգման եւ արդյունավետ կարգավորման հետ,

2.4. ինֆորմացիոն-տեխնիկական հիմնախնդիրներ, որոնք վերաբերում են հասարակության, ինչպես նաեւ միգրացիոն հիմնախնդիրների լուծման իրավասություններ ունեցող հաստատությունների տեղեկատվական ապահովությանը, մասնավորապես՝

- միգրացիոն հոսքերի մեջ ներքաշվելու հնարավոր հետեւանքների, միգրացիոն նպատակակետ հանդիսացող երկրների

օրենսդրության վերաբերյալ այդ հոսքերի մեջ արդեն ներքաշված կամ պոտենցիալ ներքաշման ենթակա խմբերի իմացության աստիճանի մեծացման հետ կապված հիմնախնդիրներ,

- միգրացիոն հոսքերի ճշգրիտ հաշվառման, անօրինական միգրացիոն հոսքերի տարբերակման եւ վերջիններիս կանխարգելման համար անհրաժեշտ տեղեկատվության համակարգերի ստեղծման հետ կապված հիմնախնդիրներ,
- ՀՀ քաղաքացի հանդիսացող էմիգրանտների հիմնախնդիրների վերաբերյալ օպերատիվ տեղեկություններ ստանալու ու դրանց արագ արձագանքման համակարգի ստեղծման հետ կապված հիմնախնդիրներ եւ այլն:

Հիմնախնդիրների խմբերն ըստ դրանց ընդգրկունության

1. մակրոհիմնախնդիրներ

1.1. ինտենսիվ էմիգրացիոն հոսքերի առկայությունը Հայաստանի Հանրապետությունից (1990-2007թթ., տարբեր փորձագիտական հետազոտությունների համաձայն, Հայաստանից հեռացել եւ այլ երկրներում բնակություն են հաստատել 700 հազարից մեկ միլիոն 400 հազար մարդ),

1.2. աշխատանքային տարիքի բնակչության ինտենսիվ տնտեսական միգրացիոն հոսքերի առկայությունը (գործազրկության հետեւանքով 1996-2001թթ., ըստ պաշտոնական աղբյուրների, ՀՀ արտաքին միգրացիայի միջին տարեկան բացասական մնացորդը կազմել է մոտ 50000 մարդ: Աշխատանքային միգրանտների 86.6 %-ը 21-50 տարեկաններն են),

1.3. ՀՀ-ից էմիգրացիոն հոսքերի պարբերական ինտենսիվացման միտումների առկայությունը (2005-ից արտաքին միգրացիայի միջին տարեկան մնացորդի մեծությունը կրկին դառնում է բացասական՝ հասնելով ավելի քան 12000-ի: 2006թ. առաջին կիսամյակում այդ ցուցանիշը պահպանվել է),

1.4. քաղաքական դրդապատճառներով էմիգրացիոն հոսքերի պարբերական ինտենսիվացում, այսինքն՝ էմիգրացիոն հոսքերի սերտ կապվածություն ներքաղաքական իրավիճակի հետ (ՀՀ-ում տեղի ունեցող ընտրություններից հետո, որպես կանոն, գրանցվում են էմիգրացիոն ինտենսիվ հոսքեր),

1.5. էմիգրացիոն հոսքերում անօրինակ էմիգրանտների մեծ տեսակարար կշիռը (բոլոր հետազոտողների կարծիքով՝ այլ երկրներում բնակություն հաստատած ՀՀ քաղաքացիների թվում շատ փոքր թիվ են կազմում օրինական բնակություն հաստատածները: Այդ իրողության մասին են վկայում նաեւ պաշտոնական տվյալները:

- 2003-04թթ. ՀՀ կառավարությանն առընթեր միգրացիայի եւ փախստականների վարչությունը պաշտոնական հարցումով դիմել էր եվրոպական մի շարք երկրների (այդ թվում՝ Ֆինլանդիային, Բենիլյուքսի երկրներին եւ այլն)՝ պարզելու համար այդ երկրներում բնակչության օրինական կարգավիճակ ստացած ՀՀ քաղաքացիների մասին թվի մասին տվյալներ: Արդյունքում

ստացվել էին ընդամենը մի քանի տասնյակ մարդու մասին տվյալներ:

- ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի (ՓԳՀ) կողմից ՀՀ կառավարությանը պարբերաբար փոխանցվող տեղեկատվության համաձայն՝ 1995-2005թթ. եվրոպական 23 երկրներում, ինչպես նաև ԱՄՆ-ում, Կանադայում ու Ավստրալիայում ապաստանի ստացման հայտ են ներկայացրել ՀՀ ավելի քան 73 հազար քաղաքացիներ, այսինքն՝ ՀՀ-ից դուրս եկած քաղաքացիների ընդհանուր թվի 5-10 %-ը: Եթե անգամ ապաստանի հայցի ներկայացման փաստը դիտենք որպես միգրացիոն կարգավիճակը լեգալացնելու քայլ, ապա, միեւնույն է, նրանցից շատ քչերն են ստացել օրինական բնակության կարգավիճակ:

1.6. Հայաստանից դուրս եկող միգրացիոն հոսքերի ծավալները՝ մասնավորապես անօրինական միգրանտի կարգավիճակում հայտնված ՀՀ քաղաքացիների թիվը ճշգրտորեն պարզելու տեղեկատվական որևէ համակարգի բացակայությունը,

1.7. Էմիգրացիոն-իմիգրացիոն գործընթացների վերահսկողության հստակ մեխանիզմների բացակայությունը,

1.8. ՀՀ սահմանային կառավարման համակարգի անկատարությունը՝ օրինական մուտքն ու ելքը հեշտացնող եւ անօրինական մուտքն ու ելքը դժվարացնող մեխանիզմների բացակայությունը,

1.9. անօրինական էմիգրացիոն հոսքերի ձեւավորմանը նպաստող բազմապիսի պատճառների առկայությունը եւ այլն,

2. միկրո կամ լոկալ հիմնախնդիրներ

2.1. Այլ երկրներում գտնվող ՀՀ քաղաքացիների (ՀՀ-ից էմիգրանտների) հիմնախնդիրները՝

1. աշխատանք գտնելու դժվարությունները,
2. ապրուստի միջոցների հայթայթման դժվարությունները,
3. իրավունքների պաշտպանության եւ սոցիալական ծառայություններից օգտվելու դժվարությունները,
4. մշակութային հաղորդակցության եւ ինտեգրացիայի դժվարությունները, հայրենիք վերադառնալու դժվարությունները,
5. թրաֆիքինգի զոհ դառնալու եւ հանցագործ միջավայրերի մեջ ներքաշվելու վտանգները եւ այլն:

2.2. Միգրացիոն հոսքերի մեջ ներքաշված եւ ռեադմիսիայի, դեպորտացիայի միջոցով կամ կամավոր կերպով այլ երկրներից ՀՀ վերադարձած քաղաքացիների հիմնախնդիրները՝

1. աշխատանք գտնելու դժվարությունները,
2. բնակարանային խնդիրներ,
3. սոցիալական ապահովության խնդիրներ,
4. կրթական խնդիրներ,

5. վերինտեգրման խնդիրներ (երկար ժամանակով Հայաստանից դուրս անօրինական միգրանտի կարգավիճակում եղած եւ հայրենիք վերադարձած ՀՀ քաղաքացիների ռեինտեգրացիայի կազմակերպումը):

Հիմնախնդիրների խմբերն ըստ լուծման նախապայմանների

1. Օրենսդրական բնույթի հիմնախնդիրներ

1. Առ այսօր ընդունված չեն՝

1.1. "Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ Հայաստանի Հանրապետությունից ելքի եւ Հայաստանի Հանրապետություն մուտքի մասին",

1.2. "Իմիգրացիայի մասին",

1.3. "Արտագնա աշխատանքների կազմակերպման մասին" ՀՀ օրենքները: 2000 թվականից հետո ՀՀ կառավարությանն առընթեր Միգրացիայի եւ փախստականների վարչությունը (ներկայումս՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարության Միգրացիոն գործակալությունը՝ ՄԳ) նախաձեռնել էր նշված օրենքների նախագծերի մշակման աշխատանքները, սակայն ինչ-ինչ նկատառումներով այդ օրենքների ընդունումը հանվել է ՀՀ կառավարության օրակարգից:

2. Վերը նշված ակնհայտ բացերից զատ՝ ՀՀ միգրացիոն ոլորտի օրենսդրության բացերի վերաբերյալ փորձագետները նշում են նաեւ մի շարք այլ բացեր, մասնավորապես՝

2.1. փախստականների եւ ապաստան հայցողների կարգավիճակի շնորհման նկատմամբ վերահսկողության մեխանիզմների անհստակությունը,

2.2. տուրիստական, աշխատանքի տեղավորման, ծանոթությունների, մոդելների եւ նման այլ բյուրոների գործունեության արտոնագրման հարցերի չկարգավորվածությունը,

2.3. ՀՀ Քրեական օրենսգրքում անօրինական միգրացիայի դեմ պայքարի հարցերի չկարգավորվածությունը,

2.4. երկաթուղային տրանսպորտով երթեւեկող ուղեւորների տոմսերի վաճառքի ժամանակ ուղեւորների անձի իդենտիֆիկացիայի խնդիրը (տրանսպորտային ուստիկանության ներկայացուցիչների կարծիքով՝ ցանկալի է, որ գոնե միջպետական երթուղիների տոմսերը վաճառվեն անձը հաստատող փաստաթղթերով),

2.5. հստակ կարգավորված չեն ռեադմիսիայի կազմակերպման խնդիրները,

2.6. թերի են կարգավորված օտարերկրյա քաղաքացիների իրավական կարգավիճակի հետ կապված իրավահարաբերությունները:

2. Ինստիտուցիոնալ բնույթի հիմնախնդիրներ

1. Միգրացիայի կարգավորման իրավասություն ունեցող մարմինների համագործակցության մեխանիզմների անհատակությունը,
2. միգրացիոն հոսքերի հստակ եւ տարբերակված հաշվառման մեխանիզմների անկատարությունը,
3. անօրինական միգրացիայի դեմ պայքարի ոլորտում այլ երկրների հետ համագործակցության կատարյալ համակարգի բացակայությունը,
4. երկրից դուրս գնացած անձանց մասին տեղեկություններ ստանալու մեխանիզմների անկատարությունը,
5. ՀՀ-ի կողմից արտերկրում իր քաղաքացիների իրավունքների ու օրինական շահերի արդյունավետ պաշտպանության մեխանիզմների բացակայությունը,
6. քաղաքականության իրականացման գործընթացների արդյունավետ համակարգման մեխանիզմների ու ավանդույթների բացակայությունը,
7. արտերկրում անօրինական հիմքերով գտնվող ՀՀ քաղաքացիների վերադարձի (ռեադմիսիա) կազմակերպումը,
8. ՀՀ-ում միգրացիայի ոլորտում կառավարության լիազոր պետական մարմնի կարգավիճակի անհամապատասխանությունը ոլորտի հիմնախնդիրների կարելորդության աստիճանին (այդ հաստատության կարգավիճակն ու իրավասությունները ցածր են ոլորտի հիմնախնդիրների կարելորդության համեմատ) եւ այլն:

3. Ինֆորմացիոն-տեխնիկական բնույթի հիմնախնդիրներ

1. ՀՀ-ից սկիզբ առնող էմիգրացիոն հոսքերի պոտենցիալ նպատակային երկրներ օրինականորեն մուտք գործելու եւ աշխատանք գտնելու կարգի ու պայմանների մասին, ինչպես նաեւ ապօրինի մուտք գործելու հնարավոր հետեւանքների մասին բնակչությանը տեղեկացվածության ցածր աստիճանը,
2. ՀՀ միգրացիոն իրավիճակի մոնիթորինգի եւ վերլուծության իրականացման համար անհրաժեշտ տվյալների փոխանակումն ապահովող տեղեկատվական համակարգի եւ տվյալների բազայի բացակայությունը,
3. ՀՀ միգրացիոն գործընթացների պետական կարգավորման քաղաքականության արդյունավետ իրականացմանը նպաստող հասարակական կարծիքի չձեւավորվածությունը,
4. միգրացիոն հոսքերի մեջ ներքաշվելու հնարավոր հետեւանքների, միգրացիոն նպատակակետ հանդիսացող երկրների օրենսդրության վերաբերյալ այդ հոսքերի մեջ արդեն ներքաշված կամ պոտենցիալ ներքաշման ենթակա խմբերի իմացության աստիճանի մեծացման հետ կապված հիմնախնդիրներ,
5. միգրացիոն հոսքերի ճշգրիտ հաշվառման, անօրինական միգրացիոն հոսքերի տարբերակման եւ վերջիններիս կանխարգելման համար անհրաժեշտ տեղեկատվության համակարգերի ստեղծման հետ կապված հիմնախնդիրներ,
6. ՀՀ քաղաքացի հանդիսացող էմիգրանտների հիմնախնդիրների վերաբերյալ օպերատիվ տեղեկություններ ստանալու ու դրանց արագ

արձագանքման համակարգի ստեղծման հետ կապված հիմնախնդիրներ եւ այլն:

4. Քաղաքական բնույթի հիմնախնդիրներ

Քաղաքական բնույթի հիմնախնդիրներ, այսինքն՝ քաղաքական իշխանության կողմից առկա հիմնախնդրի գիտակցում, դրանց լուծման քաղաքական կամքի եւ նախաձեռնության դրսևորում, լուծմանն ուղղված քաղաքական ռազմավարությունների, հայեցակարգերի մշակում, ինչպես նաև լուծման համար անհրաժեշտ ներքաղաքական ու արտաքին քաղաքական պայմանների առկայություն եւ այլն: Այս առումով գերակա են դառնում քաղաքական հետեւյալ քայլերը՝

1. արտերկրում գտնվող ՀՀ քաղաքացիների՝ հայրենիք վերադառնալու գործընթացների խրախուսում,
2. ծնունդ առնող անօրինական միգրացիոն հոսքերի կանխարգելում,
3. արտերկրում անօրինական կարգավիճակով գտնվող ՀՀ քաղաքացիների ՀՀ վերադարձի եւ ՀՀ-ում ռեինտեգրացիայի ապահովում,
4. ՀՀ-ի հետ բնակչության միգրացիոն փոխանակություն ունեցող պետությունների հետ իրավահավասար համագործակցության եւ շահերի փոխշահավետ համաձայնեցման ապահովում, շահագրգիռ պետությունների հետ անօրինական կերպով այնտեղ գտնվող ՀՀ քաղաքացիների վերադարձի նպատակով ռեադմիսիոն պայմանագրերի կնքում,
5. ՀՀ վերադարձած անձանց ռեինտեգրացիային աջակցելու նպատակով միջազգային կազմակերպությունների եւ օտարերկրյա պետությունների հետ համագործակցության խորացում,
6. ՀՀ-ից թրաֆիքինգի կանխարգելում, այդ երեւույթից տուժած անձանց պաշտպանության մեխանիզմների մշակում, նրանց բարոյահոգեբանական վերականգնում, ՀՀ բնակչության շրջանում թրաֆիքինգի կանխարգելմանն ուղղված տեղեկատվական քարոզարշավների իրականացում,
7. հարկադիր միգրանտների դեպի Հայաստան հնարավոր զանգվածային հոսքերի կանխատեսում եւ դրանց կանոնակարգմանն ուղղված միջոցառումների իրականացում:

3. Միգրացիայի ոլորտի հիմնախնդիրների արտացոլվածությունը ԵՄ-Հայաստան ԵՀՔ ԳԾ-ում

Միգրացիայի ոլորտի հիմնախնդիրներն արտացոլված են ԵՀՔ ԳԾ-ի "Ընդհանուր նպատակներ եւ գործողություններ" գլխի 4.5.1. (Համագործակցություն սահմանների կառավարման գործում) ու 4.5.2. ("Միգրացիայի խնդիրներ" (օրինական եւ անօրինական միգրացիա, ռեադմիսիա, վիզա, ապաստան)) ենթազույններում: Միգրացիոն որոշ խնդիրներ էլ (մասնավորապես՝ թրաֆիքինգի դեմ պայքարը) արտացոլված են 4.5.3 ("Պայքար կազմակերպված հանցագործության, թրաֆիքինգի, թմրամիջոցների փոխադրման եւ փողի լվացման դեմ") ենթազույնում:

4.5.1. Ենթագլխում նախատեսվում է ակտիվացնել սահմանային համագործակցությունը Հայաստանի, ԵՄ անդամ պետությունների եւ Հայաստանի հարեւան երկրների հետ, որն ինքնին օգտակար կարող է լինել միգրացիոն տարաբնույթ հիմնախնդիրների լուծման համար: Այդ ուղղությամբ նախատեսվում է Հարավային Կովկասի երկրներում իրականացնել տեխնիկական աջակցության ծրագիր, որը կօգնի զարգացնել այդ երկրների իրավապահների միջեւ համագործակցությունը անօրինական միգրացիոն հոսքերի, թրաֆիքինգի երեւոյթների կանխարգելման եւ այլ հարցերում:

Սույն հաշվետվությունը կազմելիս մեզ համար, սակայն, առավել մեծ հետաքրքրություն են ներկայացնում 4.5.2. Ենթագլխում արձանագրված դրույթները, մասնավորապես՝

1. *"Զարգացնել համագործակցությունը միգրացիոն խնդիրների շուրջ"* ենթավերնագրի տակ նախատեսվում են մի շարք կարեւորագույն միջոցառումներ, որոնք իրենց ընդգրկուն ձեւակերպումներով թույլ են տալիս ակնկալել, որ դրանց լուծման միջոցով կարելի է լուծել միգրացիոն ոլորտի ցանկացած խնդիր: Այնտեղ մասնավորապես նախատեսված են հետեւյալ ընդհանրական բնույթի միջոցառումները՝
 - *մշակել եւ սկսել կիրառել համապարփակ, ամբողջական ու հավասարակշռված ազգային գործողությունների ծրագիր միգրացիայի եւ ապաստանի խնդիրների վերաբերյալ*, այսպիսի միջոցառման նախատեսումն արդեն երաշխիք է. ԵՄ-Հայաստան ԵՀՔ շրջանակներում կարելի է ակնկալել մեր երկրի միգրացիոն ոլորտի բոլոր (այդ թվում՝ ե՛ւ մակրո, ե՛ւ լոկալ հիմնախնդիրների) համակարգային լուծում,
 - *օժանդակել աշխատանքային միգրացիայի կազմակերպման գործում*. թերեւս այս հիմնախնդիրը հանդիսանում է մեր երկրի ամենասուր միգրացիոն հիմնախնդիրներից մեկը եւ հարցի նման դրվածքը թույլ կտա ԵՄ-ի հետ համագործակցությունից ակնկալել նաեւ այս խնդրի համակողմանի լուծում, որը կշոշափի ինչպես արդեն երկրից աշխատանք գտնելու նպատակով հեռացած, այնպես էլ այդպիսի մտադրություններ ունեցող ՀՀ բազմահազար քաղաքացիների շահերը,
 - *տեղեկատվության փոխանակում եւ հնարավոր համագործակցություն տարանցիկ միգրացիայի հարցերում*. այս դրույթի առկայությունն ինքնին վկայում է, որ ուշադրության կենտրոնում են թրաֆիքինգի, ինչպես նաեւ անօրինական միգրացիոն հոսքերի հետ առնչվող բոլոր խնդիրները,
 - *տվյալների էլեկտրոնային բազայի ստեղծում՝ միգրացիոն հոսքերը վերահսկելու համար*. նման դրույթի առկայությունը վկայում է, որ ԵՀՔ ՔԾ-ն կարող է հնարավորություն ընձեռել միգրացիոն ոլորտի տեխնիկական բնույթի շատ խնդիրների լուծման համար,
 - *հնարավորինս օգտագործել ԵՀ առկա համայնքային ծրագրերը, ներառյալ AENEAS-ը եւ դրա հաջորդները՝ ապաստանին ու միգրացիային առնչվող գործողությունները սատարելու նպատակով*. այս դրույթը թույլ կտա լուծել ինչպես ՀՀ-ի կողմից ապաստան ստացած անձանց ինտեգրացիայի, այնպես էլ

երկարատեւ Էմիգրացիայից վերադարձած ՀՀ քաղաքացիների
ռեինտեգրացիայի խնդիրները:

2. *"Ընդլայնված երկխոսություն միգրացիոն խնդիրների, այդ թվում՝ անօրինական միգրացիայի կանխարգելման եւ վերահսկման, սեփական քաղաքացիների, ապատրիդների ու երրորդ երկրների քաղաքացիների ռեադմիսիայի շուրջ"* ենթավերնագրի տակ նախատեսվում են մի շարք կարեւորագույն միջոցառումներ, որոնք նույնպես երաշխիք են, որ դրանց հետեւողական իրականացման արդյունքում լուծումներ կստանան ՀՀ միգրացիոն ոլորտի բազմաթիվ կարեւորագույն հիմնախնդիրներ, մասնավորապես՝
 - *տեղեկատվության եւ լավագույն փորձի փոխանակում միգրացիային ու ապաստանին առնչվող խնդիրների (մուտք երկիր, կեցություն, ինտեգրում, ժամանակավոր պաշտպանություն, EURODAC համակարգ, ապաստան հայցողների ընդունման պայմաններ, անօրինական միգրանտների կալանավորում) եւ անօրինական միգրացիայի վերաբերյալ: Զարցի նման դրվածքը թույլ է տալիս ակնկալել, որ ԵՄ-Հայաստան համագործակցության արդյունքում լուծումներ կստանան Հայաստանից դուրս եւ դեպի Հայաստան միգրացիոն հոսքերի արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ ինֆորմացիոն-տեխնիկական խնդիրները:*
 - *Ռեադմիսիոն հարցերի շուրջ երկխոսություն նախաձեռնել ԵՄ-ի մակարդակով, ինչը կարող է հանգեցնել ԵՀ-Հայաստան ռեադմիսիայի համաձայնագրի կնքմանը. փորձի եւ փորձաքննության փոխանակում նմանատիպ համաձայնագրի գործնական հետեւանքների վերաբերյալ: Մինչեւ ռեադմիսիայի մասին ԵՀ համաձայնագրի բանակցությունների ավարտը՝ ընդլայնել գործնական համագործակցությունը ԵՄ անդամ պետությունների հետ: Այս դրույթի շրջանակներում կարող են լուծում ստանալ ՀՀ-ից եվրոպական երկրներ Էմիգրացված անօրինական միգրանտների ռեադմիսիայի հետ կապված բոլոր խնդիրները:*
 - *Զարգացնել համագործակցությունը միջազգային կազմակերպությունների ու ծագման, տրանզիտի եւ վերջնակետի հիմնական երկրների համապատասխան գործակալությունների հետ՝ միգրացիոն գործընթացները կառավարելու համար: Այս դրույթն իր մեջ պարունակում է անօրինական միգրացիոն հոսքերի կանխարգելման համար անհրաժեշտ բազմաթիվ խնդիրների լուծման հնարավորություններ:*
 - *Վերադարձած/հայրենադարձած անձանց ռեինտեգրացիայի աջակցությանն ուղղված միջոցառումների մշակում եւ իրականացում: Սա շատ կարեւոր է ՀՀ վերադարձած անձանց ռեինտեգրացիայի հետ կապված խնդիրների լուծման համար:*
3. *"Ձեռնարկել քայլեր փախստականների եւ ներքին տեղահանված անձանց պաշտպանության ազգային համակարգերի արդիականացման համար՝ միջազգային չափանիշների համաձայն, որը կլինի ինքնաբավարար եւ կառաջարկի ինտեգրացիայի հնարավորություն՝ չափանիշներին համապատասխանող անձանց համար"* ենթավերնագրի տակ

նախատեսվում են մի շարք կարելու ազդեցություններ, որոնց հետևողական իրականացման արդյունքում Հայաստանը կունենա միջազգային իրավունքի սկզբունքների հիման վրա գործող ապաստանի տրամադրման համակարգ: Միեւնույն ժամանակ Հայաստանի առջեւ բացվում են մեծ հնարավորություններ փախստականների ու ներքին տեղահանված անձանց իրավական, սոցիալական խնդիրների լուծման ուղղությամբ: Այս ուղղությամբ ԵՀՔ ԳԾ-ում նախատեսվում է՝

- 1951թ. Ժնևի Կոնվենցիայի եւ 1967թ. Արձանագրության սկզբունքների կիրառում, ապաստանի ու փախստականների վերաբերյալ ազգային օրենսդրության բարելավում՝ միջազգային եւ ԵՄ չափանիշներին համապատասխան,
- կիրառել ապաստանի հայցերի վերաբերյալ ստանդարտ հայեցակարգեր՝ միջազգային եւ ԵՄ չափանիշներին համապատասխան,
- ամրապնդել ՏԿՆ ՄԳ վարչական կարողությունները,
- բարելավել փախստականների եւ ներքին տեղահանված անձանց պաշտպանությունն ու ցուցաբերվող աջակցությունը՝ մասնավորապես նրանց ինքնաբավարարությունը եւ ինտեգրումն ապահովելու համար (հավանաբար կենտրոնանալով գյուղական շրջաններում գտնվող առավել խոցելի փախստականների եւ ժամանակավոր կացարաններում բնակվող անձանց վրա): Հնարավոր գործողությունները՝ ինքնագրավածության եւ փոքր բիզնեսի քաջալերում, ժամանակավոր կացարաններում գտնվող անձանց բնակարանային պայմանների բարելավում:

4. *"Անձանց տեղաշարժի հեշտացում"* ենթավերնագրի տակ նախատեսվում են միջոցառումներ, որոնք շատ կարելու են միգրացիոն հոսքերի կարգավորման համար անհրաժեշտ ինֆորմացիոն-տեխնիկական խնդիրների լուծման առումով: Այս առումով նախատեսվում է՝

- տեղեկատվության փոխանակում վիզաների վերաբերյալ,
- համագործակցություն ճամփորդական փաստաթղթերի ու վիզաների անվտանգությունը բարելավելու հարցում՝ միջազգային ստանդարտներին համապատասխան, ներառյալ անձնագրերում կենսաչափական հատկանիշների ներդրումը,
- ԳՀՀ-ի գործող մեխանիզմների շրջանակներում երկխոսության հաստատում միգրացիոն հարցերի շուրջ, ներառյալ անօրինական միգրացիայի կանխումը եւ դրա դեմ պայքարը, սեփական, երրորդ երկրի քաղաքացիների ու քաղաքացիություն չունեցող անձանց ռեադմիսիան եւ վիզային հարցերը:

Ամփոփելով ԵՀՔ ԳԾ-ում միգրացիայի ոլորտի հիմնախնդիրների արտացոլվածության վիճակը՝ կարող ենք արձանագրել հետևյալը՝

ա) ԵՀՔ ԳԾ-ում ամրագրված դրույթների մեծ մասի շատ ընդհանրական ձևակերպումների շնորհիվ կարելի է ասել, որ *քանակական* առումով այդ փաստաթղթում, այսպես թե այնպես, արտացոլված են Հայաստանի միգրացիոն ոլորտի բոլոր հիմնախնդիրները,

բ) *ձեական-տրամաբանական* առումով այդ հիմնախնդիրներն ու դրանց լուծման համար սահմանված միջոցառումները արտացոլված են շատ

անհամաչափ. որոշ հիմնախնդիրներ եւ միջոցառումներ ներկայացված են շատ ընդհանրական, իսկ որոշներն էլ մեկ կամ մի քանի աստիճան մասնավորեցված են՝ մինչեւ կոնկրետ մեխանիզմի մակարդակ: Միեւնույն դասին դասված միջոցառումներից որոշներն իրենց մեջ ներառում են նաեւ թվարկած այլ միջոցառումներ կամ միեւնույն ժամանակամիջոցում կատարման ենթակա որոշ միջոցառումների իրականացումն ուղղակիորեն անհնար կլինի առանց մի այլ խմբի միջոցառումների իրականացման: Մի խոսքով՝ միջոցառումների մեծ մասը, անկախ իրենց ձեւակերպումներից, միմյանց հետ գտնվում են սերտ պատճառահետեւանքային կապի մեջ:

Նման իրավիճակում, ինչպես ԳԾ միջոցառումների արդյունավետ իրականացման համար ընդհանրապես, այնպես էլ առանձին տարիների կատարման համար նախատեսված միջոցառումների ցանկերի կատարման համար դրանք իրականացնողների առջեւ բավականաչափ դժվար խնդիր է կանգնում. ԵՀՔ ԳԾ հիման վրա մշակել **միգրացիոն ոլորտի հիմնախնդիրների լուծման մանրամասն եւ ամբողջական ազգային գործողությունների ծրագիր** (այսուհետ՝ Ազգային ծրագիր), որի առկայության պարագայում միայն հնարավոր կլինի ԳԾ ժամանակացույցին համապատասխան արդյունավետ լուծումներ տալ Հայաստանի միգրացիոն ոլորտի բոլոր սուր խնդիրներին: Ազգային ծրագրի մշակումը թույլ կտա լուծել հետեւյալ տեխնիկական խնդիրները՝

1. հաղթահարել ԳԾ-ում սահմանված միջոցառումների տրամաբանական անհամարժեքությունը,
2. ապահովել այդ միջոցառումների համապատասխանությունը Հայաստանի միգրացիոն ոլորտի խնդիրներին: Յուրաքանչյուր հիմնախնդիր Ազգային ծրագրում պետք է ունենա իր մասշտաբներին, սրությանն ու առանձնահատկություններին համարժեք միջոցառումներ, որոնք հիմնված կլինեն համագործակցության կողմերի՝ ԵՄ-ի եւ Հայաստանի իրական հնարավորությունների վրա,
3. ապահովել միգրացիոն հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ նախադրյալների ողջ համալիրը՝ քաղաքական, օրենսդրական, ինստիտուցիոնալ, ինֆորմացիոն-տեխնիկական եւ այլն,
4. ապահովել Ազգային ծրագրով նախատեսված բոլոր միջոցառումների արդյունքների չափելիությունը (մոնիթորինգի եւ գնահատման համակարգ):

Առանց նշված խնդիրների լուծման հնարավոր չի լինի արդյունավետորեն իրականացնել միգրացիայի ոլորտում ԵՄ-Հայաստան ԵՀՔ շրջանակներում Հայաստանի ստանձնած պարտավորությունները: Միեւնույն ժամանակ, հնարավոր չի լինի նաեւ իրականացնել դրանց կատարման քիչ թե շատ լուրջ մոնիթորինգ ու գնահատում:

4. Միգրացիայի ոլորտի հիմնախնդիրների արտացոլվածությունը Հայաստանի Հանրապետության "Բնակչության միգրացիայի պետական կարգավորման հայեցակարգում"

Հայաստանի Հանրապետությունում "Բնակչության միգրացիայի պետական կարգավորման հայեցակարգ" (այսուհետ՝ Հայեցակարգ) առաջին անգամ

ընդունվել է 2000 թվականին: 2004թ., միգրացիոն իրավիճակի փոփոխության հետ կապված, ՀՀ կառավարությունն ընդունեց նոր Հայեցակարգ (ՀՀ կառավարության 25.06.2004թ. թ.24 արձանագրային որոշում):

Այդ Հայեցակարգով Հայաստանի Հանրապետության միգրացիոն իրավիճակը ընդհանուր առմամբ գնահատվել է բարդ, եւ որպես բարդության վկայություն՝ արձանագրվել է ՀՀ միգրացիոն ոլորտում հետեւյալ հիմնախնդիրների առկայությունը՝

1. արտաքին միգրացիայի բացասական մնացորդի միջին տարեկան մեծությունը գերազանցում է բնակչության բնական աճի ցուցանիշներին,
2. արտաքին միգրացիոն հոսքերը ձեւավորող գործոնների շարքում սկսում են գերակայել ընտանիքների վերամիավորման նպատակով կատարվող տեղաշարժերը, ինչի արդյունքում էմիգրացիոն հոսքերում գերակշռում են մշտական մեկնողները, այդ թվում կանայք եւ անչափահաս երեխաները,
3. շարունակվում է "ուղեղների" բարձր որակավորում ունեցող, միջազգային աշխատաշուկայում մրցունակ մասնագետների արտահոսքը դեպի զարգացած երկրներ,
4. սոցիալ-տնտեսական զարգացման տարածքային տարբերությունների պայմաններում պահպանվում են վարչատարածքային տարբեր միավորների բնակչության արտաքին միգրացիոն, այդ թվում նախելառաջ էմիգրացիոն ակտիվության զգալի տարբերությունները, որոնք իրենց հերթին ոչ միայն չեն նպաստում տարաբնակեցման համակարգի անհամամասնությունների մեղմացմանը, այլեւ, որպես կանոն, ուղեկցվում են դրանց խորացմամբ,
5. ՀՀ միգրացիոն իրավիճակում շարունակում է զգալի դերակատարում ունենալ ժամանակավոր աշխատանքային էմիգրացիայի երեւույթը. դրա գույգ բաղադրամասերն էլ՝ կարճաժամկետ, սեզոնային եւ տեւական կամ անորոշ ժամկետով աշխատանքային ուղեւորությունները, որպես կանոն, կրելով չկարգավորվող, տարերային բնույթ, հիմնականում ընթանալով մուտքի երկրների էմիգրացիոն եւ աշխատանքային օրենսդրությունների խախտումներով,
6. արտերկրներում օրինական աշխատանքի հնարավորությունների սահմանափակությունը եւ տեղեկատվության պակասը նպաստում են այնպիսի անցանկալի երեւույթների առաջացմանը, ինչպիսիք են անօրինական միգրացիան եւ մարդկանց անօրինական փոխադրումներն ու վաճառքը (թրաֆիքինգ),
7. արդիական են մնում 1988-92թթ. Ադրբեջանից բռնագաղթված փախստականների, ինչպես նաեւ նախկին ԽՍՀՄ այլ տարածքներից բռնի տեղահանվածների սոցիալ-տնտեսական եւ հոգեւոր-մշակութային ինտեգրացիայի հիմնախնդիրները եւ այլն:

Ելնելով վերը նշված խնդիրներից՝ Հայեցակարգը ՀՀ միգրացիոն գործընթացների պետական կարգավորման գերակա խնդիրներ է հռչակել հետեւյալները:

1. ՀՀ-ում էմիգրացիոն-էմիգրացիոն գործընթացների վերահսկողության ապահովում: Բնակչության արտաքին միգրացիան վերահսկող "դարպասի" սահմանային կառավարման գործող համակարգի

կատարելագործում՝ դրա համապատասխանեցում միջազգային չափանիշներին: Այս հիմնախնդիրը մասնակիորեն արտացոլված է նաև ԵՀՔ ԳԾ-ում, այդ թվում՝ ընդգրկված է հենց 2007թ. միջոցառումների ցանկում (7.2. ենթակետ):

2. ՀՀ քաղաքակիրթ ինտեգրում միջազգային աշխատաշուկային: Աշխատանքային էմիգրացիայի երեւոյթի օրենսդրական կանոնակարգում եւ պետական նպատակային վերահսկում: Աշխատանքային էմիգրանտների իրավունքների եւ օրինական շահերի պետական պաշտպանության իրականացում: ՀՀ աշխատաշուկայում ՀՀ քաղաքացիների կողմից ազատ աշխատատեղերի զբաղեցման առաջնահերթ իրավունքի ապահովում: Այս խնդիրը եւս արտացոլված է ԳԾ-ում՝ հետեւյալ ընդհանուր ձեւակերպմամբ. "օժանդակել աշխատանքային էմիգրացիայի կազմակերպման գործում":
3. ՀՀ-ից ծնունդ առնող անօրինական էմիգրացիայի կանխարգելում, արտերկրներում անօրինական կարգավիճակում գտնվող ՀՀ քաղաքացիների վերադարձին եւ ՀՀ-ում նրանց ռեինտեգրացիային աջակցում: Այս հիմնախնդիրը բավականաչափ լայնորեն ընդգրկված է ԳԾ-ում՝ մի քանի միջոցառումների տեսքով:
4. ՀՀ-ից մարդկանց անօրինական փոխադրումների եւ վաճառքի (թրաֆիքինգ) կանխարգելում, այդ երեւոյթից տուժած անձանց պաշտպանության մեխանիզմների մշակում: Այս խնդրի առումով կոնկրետ միջոցառումներ են սահմանված 2007թ. միջոցառումների ցանկում, մասնավորապես՝ 7.4.-7.5. եւ 7.8. ենթակետերը:
5. Օտարերկրյա քաղաքացիներին եւ քաղաքացիություն չունեցող անձանց հումանիտար նկատառումներով ՀՀ կողմից տրամադրվող պաշտպանության համակարգի հետագա կատարելագործում: ՀՀ-ում երկարաժամկետ բնակություն հաստատած փախստականների եւ հարկադիր էմիգրանտների ինտեգրումն ապահովող պայմանների ստեղծում: Այս հիմնախնդիրն ամենալայն արտացոլումն ունի ԳԾ-ում: Որպես ԵՄ կողմից առավել կարելորված ու հրատապ խնդիր՝ այն ընդգրկված է նաև 2007թ. միջոցառումների ցանկում (7.3. ենթակետ):
6. Հին ու նոր սփյուռքի գաղթօջախների հետ կառուցողական փոխհարաբերությունների պահպանում եւ զարգացում, հայրենադարձության երեւոյթը խրախուսող միջոցառումների մշակում ու իրականացում:
7. Դեպի Հայաստան հարկադիր էմիգրանտների հնարավոր զանգվածային հոսքերի կանխատեսման, իսկ ծագումով հայերի դեպքում նման հոսքերի կանխարգելմանն ուղղված միջոցառումների մշակում եւ իրականացում:
8. ՀՀ էմիգրացիոն իրավիճակի մոնիթորինգի եւ վերլուծության իրականացման համար անհրաժեշտ տվյալներն ապահովող տեղեկատվական բանկի ստեղծում: Այս խնդիրը եւս կարելորվել է ԳԾ-ում եւ որպես առավել հրատապ խնդիր՝ դրա լուծմանն ուղղված կոնկրետ միջոցառում է սահմանվել նաև 2007թ. միջոցառումների ցանկում (7.2. ենթակետ):
9. ՀՀ ազգային անվտանգության եւ երկրի կայուն զարգացման պահանջներին համապատասխանող ներքին էմիգրացիոն գործընթացների ուղղորդում:

10. ՀՀ-ում միգրացիոն գործընթացների պետական կարգավորման քաղաքականության արդյունավետ իրականացմանը նպաստող հասարակական կարծիքի ձևավորում:

Վերոշարադրյալ խնդիրներից մի քանիսը՝ մասնավորապես 6-7 եւ 9-10-րդ կետերում նշված խնդիրները, որեւէ կերպ չեն արտացոլվել ԳԾ-ում, եւ դա օբյեկտիվ ու բնական է, որովհետեւ այդ կետերում նշված խնդիրները գլխավորապես վերաբերում են Հայաստան-Սփյուռք հարաբերություններին, ինչպես նաեւ ներազգային կայունության ու զարգացման ապահովմանը: Հետեւաբար բնական է, որ այդ խնդիրների լուծման գործում Եվրամիությունը դժվար թե դրսևորեր մեծ շահագրգռություն: Այդ խնդիրների լուծումները ցանկալի է նախատեսել այլ՝ զուտ ներազգային եւ ներպետական ծրագրերով՝ բնականաբար օգտագործելով ԵՀՔ ԳԾ իրականացման արդյունքները:

5. Միգրացիայի ոլորտի հիմնախնդիրների արտացոլվածությունը ՀՀ նախագահի 2008թ. փետրվարի 19-ի ընտրություններում առաջադրված թեկնածուների նախընտրական ծրագրերում

Օգտվելով պատեհ առիթից եւ կարելորելով ՀՀ նախագահի առաջիկա ընտրությունների նշանակությունը ՀՀ հետագա քաղաքական եւ սոցիալ-տնտեսական զարգացման ընթացքի վրա՝ փորձել ենք նաեւ ներկայացնել միգրացիոն ոլորտի հիմնախնդիրների արտացոլվածությունը ՀՀ նախագահի 2008թ. փետրվարի 19-ի ընտրություններում առաջադրված որոշ թեկնածուների նախընտրական ծրագրերում:

Հավելված 1-ում աղյուսակային տեսքով ներկայացված են նախագահի ինը թեկնածուներից հինգի եւ ՀՀ Ազգային Ժողովում ներկայացված "Ժառանգություն" կուսակցության մոտեցումները այդ խնդիրների լուծման ուղղությամբ:

6. ԵՀՔ ԳԾ-ով նախատեսված 2007թ. ընթացքում իրականացվելիք առաջնայնությունների ու միջոցառումների կատարման վիճակը

2007 թվականի ընթացքում իրականացվելիք առաջնայնությունների եւ միջոցառումների ցանկի 7-րդ՝ **Միգրացիայի եւ ներքին գործերի ոլորտներում համագործակցության ամրապնդում** բաժնում ներկայացված են ԵՀՔ ԳԾ շրջանակներում ՀՀ կառավարության 2007թ. ընթացքում իրականացնելիք միջոցառումները, մասնավորապես՝

7.1. մշակել միգրացիայի եւ ապաստանի խնդիրների ազգային գործողությունների ծրագիր (պատասխանատու՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարություն),

7.2. ստեղծել տվյալների էլեկտրոնային բազա՝ միգրացիոն հոսքերը վերահսկելու նպատակով (պատասխանատուներ՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարություն եւ ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն),

7.3. բարելավել ապաստանին ու փախստականներին առնչվող ազգային

օրենսդրությունը եւ ապահովել վերջինիս պատշաճ իրականացումը (պատասխանատու՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարություն),

7.4. նախաձեռնել համագործակցություն բիոմետրիկ անձնագրերի ներդրման ուղղությամբ (պատասխանատու՝ ՀՀ կառավարությանն առընթեր Ոստիկանություն),

7.5. իրականացնել շարունակական համագործակցություն մուտքի վիզաների անվտանգության ապահովման ուղղությամբ (պատասխանատու՝ ՀՀ կառավարությանն առընթեր Ոստիկանություն),

7.6. նախաձեռնել թրաֆիքինգի գոհերի պաշտպանության, օգնության եւ վերականգնողական միջոցառումների ծրագրի մշակման աշխատանքներ (պատասխանատու՝ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ արտաքին գործերի նախարարություն):

Ստորեւ մենք ներկայացնելու ենք այն միջոցառումների վիճակը, որոնց կատարման համար որպէս պատասխանատու գերատեսչություն է սահմանված ՀՀ տարածքային կառավարման Միգրացիոն գործակալությունը (այսուհետ՝ ՄԳ): Մեր ուսումնասիրություններից պարզվեց, որ այդ միջոցառումների իրականացման առումով առկա է հետեւյալ վիճակը՝

1. Միգրացիայի եւ ապաստանի խնդիրների ազգային գործողությունների ծրագրի մշակումը, որը սահմանված էր 7.1. կետով, օբյեկտիվ պատճառներով չի կատարվել:

Չկատարման վերաբերյալ պատասխանատու գերատեսչությունը՝ ՄԳ-ն, այն կարծիքին է, որ միգրացիայի եւ ապաստանի խնդիրների ազգային գործողությունների ծրագիր մշակելու համար անհրաժեշտ է միգրացիոն քաղաքականության համապարփակ փաստաթուղթ, որը պետք է հստակեցնի միգրացիայի ոլորտի բոլոր ենթաօլորտների խնդիրները եւ սահմանի դրանց գերակայություններն ու լուծման հերթականությունը: Միայն այդպիսի փաստաթղթի մշակումից հետո է հնարավոր մշակել միգրացիայի եւ ապաստանի խնդիրների ազգային գործողությունների ծրագիր, որը կներառի նաեւ այդ գործողությունների իրականացման մեխանիզմների ամբողջությունը:

Որպէս Հայաստանի միգրացիոն քաղաքականության համապարփակ ծրագրային փաստաթուղթ՝ ըստ էության, պետք է ծառայի միգրացիայի ոլորտի համար մշակված եւ ընդունված հայեցակարգը, որը ՀՀ կառավարության կողմից հաստատվել է 2004թ. հունիսին: *Այդ փաստաթուղթը, սակայն, ըստ ՄԳ-ի, վերանայման կարիք ունի. մի կողմից այն Եվրամիության երկրներում ընդունված մոտեցումներին համապատասխանեցնելու, մյուս կողմից՝ ապաստանի վերաբերյալ հարցերը նրանում ընդգրկելու տեսանկյուններից: Բացի այդ, հայեցակարգը չունի իր կիրարկումն ապահովող ծրագիր:*

Վերը նշված պահանջներին համապատասխանող համապարփակ քաղաքական ծրագրային փաստաթուղթ մշակելու համար ՄԳ-ն ունի նմանատիպ աշխատանքների կատարման եվրոպական փորձի յուրացման կարիք: Դրա համար նպատակահարմար է, որ միգրացիայի եւ ապաստանի ոլորտում ծրագրերի մշակմանը աջակցելու հարցում այլ երկրներին օգնած Եվրամիության մասնագետները ժամանեն Հայաստան եւ մշակվելիք ծրագրի կառուցվածքի, բովանդակության ու այլ հարցերի մասին հայկական կողմին անհրաժեշտ խորհրդատվության տրամադրեն: Եվրամիության մասնագետների հետ համատեղ աշխատանքը հնարավորություն կտա հարստացնել այս ոլորտում քաղաքականություն մշակող եւ իրականացնող մեր մասնագետների

գիտելիքները եւ լրացուցիչ փորձ ձեռք բերել միգրացիոն ոլորտի ռազմավարական նշանակություն ունեցող ծրագրերի կազմման գործում:

Իր այս մոտեցման մասին ՄԳ-ն, ինչպես ԵՀՔ ԳԾ մշակման փուլում, այնպես էլ 2007թ. միջոցառումների ցանկի հաստատումից հետո բազմիցս տեղեկացրել է ՀՀ կառավարությանը, ՀՀ ՏԿ եւ ՀՀ արտաքին գործերի նախարարներին, ԵՄ-Հայաստան ԵՀՔ ԳԾ իրականացման աշխատանքների համակարգման իրավասություններ ստանձնած ՀՀ առևտրի եւ տնտեսական զարգացման նախարարությանը, ինչպես նաև միջազգային իրավասու կառույցներին:

Այս ուղղությամբ ՄԳ մոտեցումները ընկալում են գտել Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) կողմից, որի արդյունքում այդ կազմակերպության Տեխնիկական օգնության կենտրոնից 2007թ. Հայաստան է ժամանել մեկ փորձագետ եւ ՄԳ ղեկավարության հետ քննարկել է այդ փաստաթղթի մշակման հետ կապված խնդիրները: Այս քննարկումների արդյունքում որոշվել է 2008թ. մարտի 31-ից ապրիլի 4-ը ՀՀ միգրացիոն ոլորտի պատասխանատուներին գործուղել Շվեդիա՝ այդ ոլորտի համապարփակ քաղաքական ծրագրային փաստաթղթերի մշակման հարցերով վերապատրաստման նպատակով: Սակայն ՄԳ պաշտոնյաների կարծիքով՝ այս վերջին ձեռնարկումը բավարար չէ նշված խնդիրը պատշաճ կերպով լուծելու համար:

2. Միգրացիոն հոսքերը վերահսկելու նպատակով տվյալների էլեկտրոնային բազայի ստեղծման ուղղությամբ, որը նախատեսված է 7.2. կետով, ՄԳ պետ Գ. Եզանյանի ՀՀ Առևտրի եւ տնտեսական զարգացման նախարար Ն. Երիցյանին ուղղված նամակում (10.01.2008թ.) մասնավորապես նշվում է. "Հաշվետու ժամանակաշրջանում այս ուղղությամբ որեւէ նոր քայլ չի կատարվել: Հիշեցման կարգով հարկ եմ համարում նշել, որ հարցը վերջին անգամ քննարկվել է 2007թ.-ի օգոստոսի 8-ին՝ ՀՀ արտաքին գործերի նախարարությունում կազմակերպված հանդիպման ընթացքում, որին մասնակցել են ՀՀ արտաքին գործերի նախարարության, ազգային անվտանգության ծառայության, ազգային վիճակագրական ծառայության եւ միգրացիոն գործակալության ներկայացուցիչները: Հանդիպման արդյունքում եզրակացվել է, որ ներկա դրությամբ միգրացիայի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության հավաքումը հնարավոր է իրականացնել "միգրացիոն քարտերի" միջոցով, եւ որոշվել է քննարկման դնել այդ քարտերի ներդրման հարցը":

ՄԳ մասնագետների կարծիքով՝ այդ հարցի արմատական լուծումը հայեցակարգային առումով սերտորեն կապված է առաջին խնդրի՝ Միգրացիայի եւ ապաստանի խնդիրների ազգային գործողությունների ծրագրի մշակման հետ, քանի որ տրամաբանորեն կազմում է վերջինիս մի մասը եւ, ըստ էության, հանդիսանում է արդյունավետ միգրացիոն քաղաքականության վարման համար տեղեկատվության ապահովման միջոց կամ մեխանիզմ:

3. Ապաստանին եւ փախստականներին առնչվող ազգային օրենսդրության բարելավման 7.3. ենթակետով սահմանված միջոցառման իրականացման ուղղությամբ առկա է հետեւյալ վիճակը. ՄԳ եւ ՄԱԿ ՓԳՀ մասնագետների համագործակցությամբ մշակվել է "Փախստականների եւ ապաստանի մասին" ՀՀ նոր օրենքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ), որը 2007թ. վերջին ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը: Վերջինիս կողմից հավանության արժանանալուց հետո այն ներկայացվելու է ՀՀ Ազգային Ժողովի հաստատմանը:

Նախագծով առաջարկվել են հետեւյալ փոփոխությունները՝

1. օրինագիծը համապատասխանեցվել է ՄԱԿ-ի "Փախստականի կարգավիճակի վերաբերյալ" 1951թ. Կոնվենցիայի եւ այդ Կոնվենցիայի 1967թ. Արձանագրության պահանջներին, մասնավորապես՝
 - 1.1. հարազատ մնալով միջազգային իրավունքի այդ փաստաթղթերի տերմինաբանությանը՝ Նախագծում ավելացվել են դրանց ոգուց բխող մի շարք նոր հասկացությունների սահմանումներ,
 - 1.2. ապաստան հայցողների, փախստականների եւ ՀՀ-ում ապաստան ստացած եւ ապաստան չստացած անձանց իրավունքներն ու պարտականությունները սահմանելիս հիմնվել են այդ փաստաթղթերով սահմանված իրավունքների այն նվազագույն շրջանակի վրա, որոնց ապահովումը՝ որպես պետական պարտավորություն, ստանձնել են Կոնվենցիային միացած երկրները, այդ թվում՝ ՀՀ-ն,
2. ընդլայնվել է օրենքի կարգավորման շրջանակը եւ առարկան,
3. Նախագծում ներմուծվել են նոր առանցքային հասկացություններ,
4. փոփոխվել է օրենքի ընդհանուր կառուցվածքը եւ ձեւաչափը, մասնավորապես՝ առանձին գլուխներով ներկայացված են՝
 - 4.1. օրենքում կիրառվող առանցքային հասկացությունները եւ օրենքի կարգավորման ենթակա իրավահարաբերությունները;
 - 4.2. ապաստան հայցողների եւ փախստականների բոլոր իրավունքները, դրանց հիմքը, ինչպես նաեւ պետական մարմինների կողմից այդ իրավունքների հարգման սկզբունքը,
 - 4.3. ոչ միայն փախստականների հարցերով լիազոր մարմնի, այլեւ ՀՀ-ում ապաստանի հարցերով իրավասու մյուս պետական մարմինների, ինչպես նաեւ ՄԱԿ ՓԳՀ լիազորությունները,
 - 4.4. ապաստանի տրամադրման հետ կապված բոլոր ընթացակարգերը;
 - 4.5. Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր պաշտպանության տրամադրման կարգը,
 - 4.6. անցումային դրույթներ, որոնք կարգավորում են օրենքի առնչությունները 1988-1992 թթ. Հայաստանի Հանրապետություն բռնազաղթված անձանց հետ:

Ամփոփում եւ եզրակացություններ

Այսպիսով՝ սույն հաշվետվությունը կազմելիս մենք ՀՀ-ԵՄ ԵՀՔ ԳԾ-ի շրջանակներում միգրացիայի ոլորտի հիմնախնդիրների լուծման ուղղությամբ իրականացվող գործողությունների մոնիթորինգի խնդիրը դիտարկել են հետեւյալ առումներով՝

1. ընդհանրապես, միգրացիայի ոլորտում մոնիթորինգի ենթակա խնդիրների ամբողջականության եւ հստակության,
2. այդ հիմնախնդիրների լուծման ուղղությամբ նախատեսված գործողությունների արդյունավետության եւ մոնիթորինգի իրականացման մեթոդաբանական նախադրյալների առկայության,
3. ԵՀՔ ԳԾ-ում, 2007թ. ՄԾ-ում, Հայաստանի Հանրապետության "Բնակչության միգրացիայի պետական կարգավորման հայեցակարգում",

ինչպես նաև ՀՀ նախագահի 2008թ. փետրվարի 19-ի ընտրություններում առաջադրված թեկնածուների նախընտրական ծրագրերում այդ խնդիրների արտացոլվածության,

4. 2007թ. ՄԾ-ում նախատեսված միջացառումների կատարվածության:

Առաջին խնդրի առումով այսօր, մեր կարծիքով, կարիք կա հստակեցնելու միգրացիայի ոլորտի հիմնախնդիրները, ինչը թույլ կտա ճշտորեն սահմանել այդ խնդիրների բնույթն ու դրանց լուծման առաջնահերթությունները: Դրա համար նախ պետք է հնարավորինս ամբողջացնել այդ խնդիրների համախումբը եւ դրանք խմբավորել որոշակի հիմքերով: Այդ նկատառումներով մենք փորձել ենք՝

1. հնարավորինս լայնորեն ներկայացնել ՀՀ միգրացիոն ոլորտի հիմնախնդիրները՝ բոլորովին չհավակնելով դրանք հայտարարել ամբողջական,
2. կատարել այդ հիմնախնդիրների որոշակի խմբավորում հետեւյալ հիմքերով՝

ա) ըստ դրանց ընդգրկունության՝ բաժանելով վերջիններս երկու խմբի՝

- մակրոհիմնախնդիրներ,
- միկրո կամ լոկալ հիմնախնդիրներ,

բ) ըստ այդ հիմնախնդիրների լուծման նախադրյալների՝ բաժանելով դրանք չորս խմբի՝

- քաղաքական նախադրյալներ,
- օրենսդրական նախադրյալներ,
- ինստիտուցիոնալ նախադրյալներ,
- ինֆորմացիոն-տեխնիկական նախադրյալներ:

Երկրորդ խնդրի առումով պարզվեց, որ ներկայումս համարյա ամբողջությամբ բացակայում է միգրացիոն ոլորտում առկա խնդիրների լուծման ուղղությամբ իրականացվող քաղաքականության արդյունավետության գնահատման եւ մոնիթորինգի համակարգը՝ ոչ միայն ԵՀՔ ԳԾ շրջանակներում նախատեսված գործողությունների առումով, այլ ընդհանրապես: Այդպիսի համակարգի ստեղծման համար հրատապ խնդիր է դառնում վերջինիս մեթոդաբանական նախադրյալների ստեղծումը: Նշված նախադրյալների ապահովումը ենթադրում է բավականաչափ երկարատեւ եւ բազմափուլ մոնիթորինգային ծրագրի իրականացում, որի առաջին փուլի շրջանակներում (իմա՝ սույն ծրագրում), նկատի ունենալով ժամանակային սղության գործոնը, հնարավոր է շատ քիչ մեթոդաբանական նախադրյալներ ստեղծել՝

- ճշգրտել "մոնիթորինգ" եւ "գնահատում" հասկացությունների իմաստը ԵՀՔ ԳԾ համատեքստում,
- սահմանել այդ հիմնախնդիրների լուծման ուղղությամբ իրականացվող գործողությունների մոնիթորինգի ու գնահատման նպատակները, առաջարկներ ներկայացնել այս ծրագրի հաջորդ փուլերում իրականացվելիք աշխատանքների հիմնական ուղղությունների մասին, մասնավորապես, ծրագրի հաջորդ փուլերում առաջնահերթ իրականացման խնդիրներից են դառնում հետեւյալ խնդիրները՝

ա) ԳԾ-ով սահմանված միջոցառումների մոնիթորինգի ու գնահատման չափորոշիչներն ու քանակական եւ որակական ցուցիչների մշակումը,

բ) ԳԾ-ով սահմանված միջոցառումների մոնիթորինգի ու գնահատման, ինչպես նաեւ մոնիթորինգի միջոցով ստացվող տեղեկությունների ամփոփման եւ վերլուծությունների մեթոդաբանության մշակումն ու փորձարկումը,

գ) մոնիթորինգի ու գնահատման արդյունքների միջոցով եվրաինտեգրման ուղղությամբ Հայաստանի հասարակության հանրային գիտակցության բարելավման եւ քաղաքականության իրականացման գործընթացներում ներքաշված ազգային եւ արտազգային հաստատությունների գործունեության կատարելագործման վրա ազդելու մեխանիզմների մշակումը եւ այլն:

Երրորդ խնդրի կամ ԵՀՔ ԳԾ-ում, 2007թ. ՄԾ-ում, ՀՀ "Բնակչության միգրացիայի պետական կարգավորման հայեցակարգում", ինչպես նաեւ ՀՀ նախագահի 2008թ. փետրվարի 19-ի ընտրություններում առաջադրված թեկնածուների նախընտրական ծրագրերում այդ խնդիրների արտացոլվածության առումով առկա է հետեւյալ վիճակը՝

1. ԵՄ-Հայաստան ԵՀՔ ԳԾ-ում ՀՀ միգրացիոն խնդիրները ներկայացված են շատ ընդգրկուն ձեւակերպումներով, որը թույլ է տալիս փաստել, որ քանակական առումով ընգրկված են համարյա բոլոր հիմնախնդիրները, քանի որ այդպիսի ընդգրկուն ձեւակերպումների տակ ցանկության դեպքում կարելի է ենթադրել միգրացիոն ոլորտի ցանկացած խնդիր: Միեւնույն ժամանակ, դրանք ձեւական-տրամաբանական առումով ներկայացված են շատ անհամաչափ (ընդհանրացման շատ տարբեր աստիճաններով), հաճախ նույնիսկ չի պահպանվել դրանց պատճառահետեւանքային կապվածությունը եւ պոտենցիալ լուծումների տրամաբանական հերթագայությունը: Այս հանգամանքն առաջնային խնդիր է դարձնում ինչպես ԳԾ-ի լրամշակումն ընդհանրապես, այնպես էլ դրա հիման վրա յուրաքանչյուր տարվա համար մշակվելիք ՄԾ-ների լուրջ մասնագիտական փորձաքննությունների ապահովումը մասնավորապես:
2. Հայաստանի Հանրապետության "Բնակչության միգրացիայի պետական կարգավորման հայեցակարգում" նշված խնդիրների մեծ մասը ընդհանրական ձեւակերպումներով արտացոլված է ԵՀՔ ԳԾ-ում: Վերջինիս մեջ օբյեկտիվորեն տեղ չեն գտել այդ խնդիրներից մի քանիսը, մասնավորապես նրանք, որոնք գլխավորապես վերաբերում են Հայաստան-Սփյուռք հարաբերությունների, ինչպես նաեւ ներազգային կայունության ու զարգացման ապահովմանը: Հետեւաբար բնական է, որ այդ խնդիրների լուծման գործում Եվրամիությունը դժվար թե դրսևորեր մեծ շահագրգռություն:
3. ՀՀ նախագահի 2008թ. փետրվարի 19-ի ընտրություններում առաջադրված թեկնածուների նախընտրական ծրագրերում այդ խնդիրների արտացոլվածությունը պարզելու համար ուսումնասիրվել են առաջադրված ինը թեկնածուներից հինգի, ինչպես նաեւ ՀՀ ԱԺ-ում խմբակցություն ունեցող, սակայն սեփական թեկնածու չառաջադրած "Ժառանգություն" կուսակցության նախընտրական ծրագրերը: Այս ծրագրերում ՀՀ միգրացիոն հիմնախնդիրները արտացոլված են՝

- հիմնականում սոցիալ-տնտեսական, Հայաստան-Սփյուռք, արտաքին հարաբերությունների եւ ժողովրդագրական քաղաքականությունների ենթատեքստերում,
- բավականաչափ հպանցիկ, շատ անհամաչափ, հաճախ առանց բուն հիմնախնդրի եւ դրա լուծման մեխանիզմների տարբերակումով:

Չորրորդ խնդրի՝ 2007թ. ՄԾ-ում նախատեսված միջացառումների կատարվածության առումով առկա է հետեւյալ վիճակը:

1. Միգրացիայի եւ ապաստանի խնդիրների ազգային գործողությունների ծրագրի մշակումը, որը սահմանված էր 7.1. կետով, օբյեկտիվ պատճառներով չի կատարվել, քանի որ վերջինիս մշակման համար պատասխանատու գերատեսչության պնդմամբ նախ պետք է մշակվի միգրացիոն քաղաքականության համապարփակ փաստաթուղթ, որը պետք է հստակեցնի միգրացիայի ոլորտի բոլոր ենթաոլորտների խնդիրները եւ սահմանի դրանց գերակայություններն ու լուծման հերթականությունը: Միայն այդպիսի փաստաթղթի մշակումից հետո է հնարավոր մշակել միգրացիայի եւ ապաստանի խնդիրների ազգային գործողությունների ծրագիր, որը կներառի նաեւ այդ գործողությունների իրականացման մեխանիզմների ամբողջությունը:
2. Միգրացիոն հոսքերը վերահսկելու նպատակով տվյալների էլեկտրոնային բազայի ստեղծումը եւս, որը նախատեսված է 7.2. կետով, չի իրականացվել նախորդ կետում նշված պատճառով:
3. Մասնակիորեն իրականացվել է ապաստանին եւ փախստականներին առնչվող ազգային օրենսդրության բարելավման 7.3. ենթակետով սահմանված միջոցառումը, մասնավորապես մշակվել է "Փախստականների եւ ապաստանի մասին" ՀՀ նոր օրենքի նախագիծ, որը 2007թ. վերջին ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը: Վերջինիս կողմից հավանության արժանանալուց հետո այն ներկայացվելու է ՀՀ Ազգային Ժողովի հաստատմանը:

#	<i>Նախընտրական ծրագրի սուբյեկտը</i>	<i>Միգրացիոն հիմնախնդրի նկարագրությունը</i>	<i>Հիմնախնդրի լուծման ուղին կամ մեխանիզմները</i>
1	Վահան Հովհաննիսյան	Սոցիալ-տնտեսական քաղաքականություն 1. Բնակչության սոցիալ-տնտեսական վատ վիճակով պայմանավորված բացասական երեւոյթները	1.Սոցիալ-տնտեսական կարգերի ակտիվ գործադրումը կապահովի աղքատության մակարդակի շեշտակի կրճատում ու տարածքային համաչափ զարգացում, ժողովրդագրական իրադրության բարելավում՝ ծնելիության մակարդակի

		աճ, մահացության մակարդակի նվազեցում, կյանքի տեւողության ավելացում, արտագաղթի կասեցում եւ ներգաղթի խրախուսում:
	Հայաստան-Սփյուռք 2. Սփյուռքի հայրենադարձության խթանումը	2.Սփյուռքից Հայաստան ներգաղթի համալիր ծրագրի մշակումն ու իրագործումը:
2	Վազգեն Մանուկյան	
	Գ/ Արտաքին հարաբերություններ 1. Բանակցությունների արդյունքները պետք է ԼՂՀ-ի բնակչության անվտանգության հատուկ երաշխիքներ ստեղծեն, պայմաններ ապահովեն նրա սոցիալ-տնտեսական բնականոն զարգացման, փախստականների եւ բռնի տեղահանվածների վերաբնակեցման լիարժեք հնարավորություն ստեղծելու համար:	1.1. Խնդրի լուծման կայունության երաշխիքը էապես կախված է նաեւ հակամարտող կողմերի ժողովրդավարության աստիճանից: 1.2. ՀՀ դեսպանությունների միջոցով ապահովել արտերկրում գտնվող մեր հայրենակիցների իրավունքների լիարժեք պաշտպանությունը:
	2. Դեմոգրաֆիական խնդիրը Նպատակը զանգվածային արտագաղթի եւ ծնելիության կտրուկ անկման պատճառով ստեղծված իրավիճակի արմատական շտկումն է, զանգվածային ներգաղթի եւ երիտասարդ ընտանիքների ամրապնդմանն ուղղված պետական համալիր ռազմավարության հռչակումն ու գործադրումը:	2.1. Օրինակելի է Ռուսաստանի այժմյան փորձը: Օրենսդրորեն պետք է տեղայնացնել ՌԴ-ում գործող օրենքը: Անհրաժեշտ է շարունակաբար բարձրացնել յուրաքանչյուր երեխայի ծննդի դիմաց տրվող պետական ֆինանսական միջոցները՝ հաշվի առնելով մեր բյուջեի հնարավորությունները:
3	Արման Մելիքյան	
	-Ադրբեջանահայ փախստականների կրած նյութական ու բարոյական վնասների փոխհատուցումը:	-Առաջարկել ԼՂՀ-ին որպես ադրբեջանահայ փախստականների կրած նյութական ու բարոյական վնասների մասնակի փոխհատուցում վերջիններիս տրամադրել ազատագրված

		տարածքները՝ սեփականության իրավունքով:	
	-ազատագրված տարածքների թերթնակեցվածությունը,	-նպաստել ազատագրված տարածքների բնակեցմանն ու տնտեսապես շահավետ յուրացմանը,	
	-բնակչության նյութապես անապահով շերտերի՝ հաշմանդամների, փախստականների, ծայրահեղ աղքատների սոցիալական վատ պայմանները:	-աջակցել բնակչության նյութապես անապահով շերտերի՝ հաշմանդամների, փախստականների, ծայրահեղ աղքատների սոցիալական պայմանների բարելավմանը եւ ապահովել նրանց լիարժեք մասնակցությունը հասարակական կյանքին:	
4	Մերժ Սարգսյան	Մշտական ուշադրության առարկա կհանդիսանա հեռավոր եւ սահմանամերձ շրջաններից բնակչության արտագաղթի կանխումը: Այդ շրջաններից բնակչության արտահոսքի հիմնական պատճառը աշխատատեղերի բացակայությունը կամ նեղ մասնագիտացումն է, ցածր սոցիալական ակտիվությունը, որը հանգեցնում է սոցիալական անտարբերության:	Գիտակցելով դա՝ ցուցաբերվելու է համալիր մոտեցում Հայաստանի ողջ տարածքի զարգացման խնդրին:
5	Լեւոն Տեր-Պետրոսյան	"Վերագոյալ դրախտի" երազանքը Մարդիկ այսօր Հայաստանում ընդամենը երազում են ...Հարկադրված չլինել արտագնա աշխատանքի մեկնելու՝ թեկուզ ժամանակավորապես լքելով իրենց ընտանիքները, չանհանգստանալ պանդխտաձների ճակատագրով, չտառապել	Նորմալ երկրի ուրվանկարը՝ քաղաքական լեզվով - ակտիվ մասնակցություն տեռորիզմի, թմրաբիզնեսի, փողի լվացման, մարդկանց ապօրինի առևտրի (թրաֆիքինգ) դեմ միջազգային հանրության կողմից հայտարարված անհաշտ պայքարին:

	<p>կարոտախտով, ինչը հատկապես բացասաբար է անդրադառնում երեխաների հոգեբանության եւ դաստիարակության վրա:</p> <p>Հայաստանը ճամփաբաժանի առջեւ</p> <p>...Անգամ պաշտոնական տվյալների համաձայն՝ արտագաղթը ոչ միայն չի դադարում, այլև շարունակում է պահպանվել տարեկան շուրջ 25.000 մարդու սահմաններում: Վերացել է մարդկանց բնական կապվածությունը հայրենի հողին: Հայրենիքը, տունը, նույնիսկ ընտանիքը լքելու երեւոյթը դարձել է առօրյա ու սովորական:</p>	
<p>6 "Ժառանգություն" կուսակցություն</p>	<p>Հետամուտ լինել հարեւան եւ այլ երկրներից տեղահանված ու Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակություն հաստատած փախստականների ինտեգրմանը հասարակության մեջ:</p>	<p>Հատուկ ուշադրություն դարձնել աղետի ենթարկված գոտու վերականգնմանը եւ սահմանամերձ գյուղերի զարգացմանը:</p>

*Վարդան Գեւորգյան
"Հայաստանում ԵՀՔ ԳԾ
մոնիթորինգ" ծրագրի փորձագետ*

ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի քաղաքական դիրքորոշումներն ու տնտեսական քաղաքականությունն այսօր ուղղված են Եվրոպական ինստիտուտներին ինտեգրվելու եւ Եվրոպական շուկաներ մուտք գործելու նպատակին: Հայաստանի եւ ԵՄ միջեւ Գործընկերության եւ համագործակցության համաձայնագիրը (ԳՀՀ) ուժի մեջ է մտել 2000 թվականի հուլիսի 1-ից: ԳՀՀ-ի առանցքային նպատակը Հայաստանում շուկայական տնտեսության ձևավորումն է: Այս նպատակին հասնելու համար պետք է մշակվի եւ իրականացվի "խաղի կանոնների" փաթեթ՝ օրենքներ, կանոնակարգեր, վարքագծի նորմեր եւ փորձ:

2006թ. մարտի 23-ին ՀՀ կառավարությունը հաստատեց ԳՀՀ-ից իրականացման նպատակով Ազգային ծրագիրը, որ ընդունմամբ էլ ՀՀ կառավարությունը պարտավորվում է իրականացնել մի շարք բարեփոխումներ, որոնք նպատակ ունեն հզորացնել երկրի ընդհանուր զարգացումը եւ ճանապարհ հարթել դեպի Եվրամիություն՝ օգտագործելով ԵՄ անդամակցության մեթոդաբանությունը:

2006թ. նոյեմբերի 14-ին Եվրոպական հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության հետ կնքել է Եվրոպական հարեւանության քաղաքականության (ԵՀՔ) շրջանակներում գործողությունների ծրագիր (ԳԾ), որի հիման վրա հետագայում մշակվեց տարեկան միջոցառումների ծրագիրը:

ՀՀ կառավարությունը 2007թ. հուլիսի 19-ին N 927-Ն որոշմամբ հաստատել է այդ նույն թվականի հունիսի 26-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի եւ Եվրոպական հարեւանության քաղաքականության իրականացման շրջանակներում Հայաստանի Հանրապետություն - Եվրոպական Միություն գործողությունների ծրագրով նախատեսված՝ 2007 թվականի ընթացքում իրականացվելիք առաջնայնությունների եւ միջոցառումների ցանկը:

Փաստացի 2007թ. միջոցառումների ծրագրով էլ սկսվել է ԵՀՔ ԳԾ իրականացումը:

Համաձայն Շրջակա միջավայրի պահպանության առաջին ազգային Գործողությունների ծրագրի՝ ՀՀ բնապահպանական հիմնական պրոբլեմներն ու խնդիրները հետեւյալն են:

Հիմնական խնդիրները

- Բնական ռեսուրսների գերշահագործում (ներառյալ ջրային պաշարների սպառումը, հողի էռոզիան եւ կենսաբազմազանության աղքատացումը, չհիմնավորված ու չհամակարգված անտառօգտագործման եւ այլ պատճառներով),
- առանձին ոլորտներին ներհատուկ պրոբլեմներ (ներառյալ օդի, հողի եւ ջրերի աղտոտումը),
- բնապահպանական առողջապահական պրոբլեմներ:

Քաղաքականության խնդիրները

- Բնապահպանական թույլ հաստատություններ եւ վարչական համակարգ,
- բնապահպանական թույլ կարգաբերական եւ օրենսդրական դաշտ,
- դիտանցի եւ գործադրման ոչ լիարժեքություն,
- բնապահպանական համակցված կառավարման բացակայություն:

Կայուն զարգացման եւ բնապահպանական ոլորտի հիմնախնդիրներին ԵՀՔ ԳԾ-ում մեծ տեղ չէ հատկացված, եւ ներկայացված են ընդհանրական ձեւակերպումներով, իսկ լուծման ուղիներում շեշտադրումն արված է առավելապես Օրենսդրական եւ Քաղաքականության համապատասխանեցմանը, Բնստիտուցիոնալ կարողություններին, որոնք էլ հենց ԵՄ անդամակցության մեթոդաբանության հենասյուններն են եւ պատշաճ ձեւով իրականացնելու դեպքում կարող են ապահովել շրջակա միջավայրի կայուն կառավարումն ու պահպանությունը:

Չնայած այն հանգամանքին որ դեռեւս լուծված չեն Եվրամիության ինտեգրմանն ուղղված՝ ՀՀ եւ Եվրոպական համայնքների եւ դրանց անդամ պետությունների միջեւ գործընկերության եւ համագործակցության մասին Համաձայնագրի իրականացման 2006-2009թ.թ. ազգային ծրագրի կատարման համար հատկացվող ֆինանսավորման հարցերը, այնուամենայնիվ ՀՀ բնապահպանության նախարարության կողմից կատարվել է որոշակի աշխատանք ծրագրի կատարման ուղղությամբ:

Սույն հաշվետվությունը ներկայացնում է ՀՀ-ում ԵՀՔ ԳԾ Կայուն զարգացման եւ բնապահպանական ոլորտում նախատեսված միջոցառումների կատարման ընթացքը: Դրանք ԵՀՔ ԳԾ արտացոլված են 4.3 Տնտեսական եւ սոցիալական բարեփոխումներ, աղքատության նվազեցում եւ կայուն զարգացում (Կայուն զարգացման խթանում մասով) եւ 4.6 Համագործակցություն հատուկ բնագավառներում, ներառյալ տրանսպորտը, էներգետիկան եւ բնապահպանությունը (4.6.4. Բնապահպանություն) բաժիններում:

Կայուն զարգացման խթանում

- մշակել Կայուն զարգացման ազգային ռազմավարությունը,
- ստեղծել վարչական կառույցներ եւ ընթացակարգեր՝ ապահովելու համար կայուն զարգացման ռազմավարական ծրագրավորումը եւ շահագրգիռ մարմինների գործունեության համակարգումը,
- քայլեր ձեռնարկել՝ բարելավելու բնապահպանական խնդիրների ինտեգրացումը քաղաքականության այլ ոլորտներում:

1992թ.-ից սկսած՝ համաշխարհային այս գործընթացը մեծ թափ է առել եւ Կայուն զարգացման տեսությունը դարձել է ընդհանրական մի գաղափար, որի շուրջ միավորվում են թե՛ պետությունները, թե՛ ամենատարբեր ուժերն ու խմբերը: Տարածաշրջանային ու ազգային մակարդակներում մշակվում եւ իրականացվում են կայուն զարգացման հայեցակարգեր եւ ռազմավարություններ, ստեղծվել են կայուն զարգացման ազգային կամ տեղական խորհուրդներ, միջազգային ցանցեր: Այն արտացոլվել է օրենսդրության մեջ (Եվրամիությունը ընդունել է Կայուն զարգացման տարածաշրջանային ռազմավարությունը, որը դառնում է ԵՄ երկրների համար կայուն զարգացման օրենսդրական դաշտ: Կայուն զարգացումը սահմանադրական նորմ է դարձել, 12 երկրի համար, որոնք 1992թ.-ից հետո

ընդունել են սահմանադրության նոր տարբերակներ՝ դրանցում ներառելով ԿԶ սկզբունքները: Շվեդիայում նույնիսկ ստեղծվել է ԿԶ նախարարություն): Այս տեսությունը ներմուծվել է գիտության եւ կրթության բնագավառ (Յոհաննեսբուրգում 2005-2015թթ.-ը հռչակվեց "Հանուն կայուն զարգացման կրթության տասնամյակ"): Ի դեպ, ԿԶ ուղղությամբ կատարված գործունեությունն ամփոփվում է ամենամյա ՄԱԿ-ի Կայուն զարգացման հանձնաժողովում, որը վարում է նա եւ Հազարամյակի նպատակների գործընթացը:

Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը, մասնակցելով այս գործընթացներին, ստորագրել է բոլոր ընդունված փաստաթղթերը, միացել կոնվենցիաներին եւ պարտավորվել երկրի զարգացումը կողմնորոշել ԿԶ ուղով: ՀՀ-ն միացել է նաեւ "Արեւելք-Արեւմուտք Համաեվրոպական էկոլոգիական համագործակցություն հանուն կայուն զարգացման" ծրագրին եւ նույն պարտավորություններն է ստանձնել "Եվրոպա՝ նոր հարեւաններ" ծրագրի շրջանակներում:

Մինչ այսօր ԿԶ ոլորտում իրականացվող գործունեությունը առավել ակտիվ իրականացվում է հասարակայնության (հասարակական կազմակերպությունների) նախաձեռնությամբ եւ կայուն զարգացման սկզբունքները նպատակաուղղված կերպով վերջերս են ընդգրկվում կառավարության ռազմավարական ծրագրերում:

Ձեւավորվել է ԿԶ ոչ կառավարական խորհուրդը, մշակվել եւ հրատարակվել է ՀՀ կայուն զարգացման հայեցակարգը (որի հիմնական մոտեցումներն ու սկզբունքները հաստատվել են Ազգային համաժողովի կողմից եւ մտել են "Ռիո+10" ՀՀ ազգային զեկույց), հրատարակվել են "Դեպի կայուն քաղաքներ" ձեռնարկը, բազմաթիվ այլ ձեռնարկներ, կազմակերպվել սեմինարներ, գիտաժողովներ, կլոր սեղաններ Ազգային ժողովում, Սահմանադրական դատարանում, գիտական հաստատություններում եւ այլն:

2002թ.-ին ՀՀ-ում ստեղծվեց Կայուն զարգացման ազգային խորհուրդ, պետական եւ հասարակական սեկտորի ներկայացուցիչների կազմով (սակայն այն դեռեւս չի գործում, արդարության համար պետք է նշել, որ բազմիցս հասարակական կազմակերպությունները նախաձեռնել են նրա գործարկման գործընթացը, սակայն ինչ-ինչ պատճառներով այն կանգ է առել):

ՀՀ համայնքների միությունը ակտիվ մասնակցում է համայնքների ԿԶ միջազգային գործընթացին:

Հանրապետությունում չկան տեղական խորհուրդներ (բացառությամբ Հրազդան քաղաքի, որը Կոտայքի մարզպետարանի, Հրազդանի քաղաքապետարանի եւ Հանուն կայուն զարգացման ասոցիացիայի համատեղ ջանքերով ընդգրկվել է Կայուն քաղաքների միջազգային ցանցում), չի մշակվել ԿԶ ազգային ռազմավարություն: Չհաջողվեց ՀՀ Սահմանադրության փոփոխված տարբերակում ընդգրկել "կայուն զարգացումը"՝ որպես սահմանադրական նորմ, եւ Եվրամիությանը ազգային զեկույց ներկայացնելիս ՀՀ-ն ստիպված է նշել, որ կայուն զարգացման ոլորտում ինստիտուցիոնալ փոփոխություններ դեռեւս չեն իրականացվել եւ ԵՄ-ՀՀ ԵՀՔ ԳԾ հավելվածի 4.3 Կայուն զարգացման խթանում մասով ստանձնած պարտավորություններում առաջընթաց չկա: Սակայն քայլեր են ձեռնարկվել՝ բարելավելու բնապահպանական խնդիրների ինտեգրացումը քաղաքականության այլ ոլորտներում՝ մասնավորապես կրթական ոլորտում: ՀՀ Կառավարության

հավանությանն է արժանացել "ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի ռազմավարությունը հանուն կայուն զարգացման կրթության ոլորտում", որն ընդունվել է Վիլնյուսում 2005թ.-ին: Մշակված է նաև ցուցանիշների համակարգ, համաձայն որի՝ երկրները պետք է պատրաստեն ազգային զեկույցներ տվյալ ոլորտում իրականացված գործունեության վերաբերյալ:

Այս հարցում, ինչպես եւ ԿԶ ցուցանիշների ասպարեզում ՀՀ մասնագետները գրանցել են բավականին առաջընթաց, քանի որ 1994թ.-ից Երեւանի պետական համալսարանի աշխարհագրական եւ քիմիական ֆակուլտետներում դասավանդվում է կայուն զարգացման տեսության եւ պրակտիկային նվիրված դասընթաց, կա "Երկրաբնապահպանություն" դասընթացը, որն իր ծրագրում տեղ է հատկացնում Կայուն զարգացման տեսությանը, եւ ԵՊՀ մագիստրատուրայում, որպես պարտադիր առարկա՝ դասավանդում են "Մարդկային զարգացման հիմունքներ" դասընթացը:

"Կայուն մարդկային զարգացման" ասոցիացիան ԵՊՀ-ի հետ համատեղ հրատարակել է ձեռնարկ բուհերի համար, որն օգտագործվել է ԱՊՀ երկրների մի շարք բուհերի կողմից: Կազմակերպվել են բազմաթիվ ազգային ու ռեգիոնալ գիտաժողովներ, սեմինարներ, կլոր սեղաններ եւ այլն: Ասոցիացիան հրատարակել է եւս 24 գիրք եւ ամսագիր, որոնք օգտագործվում են կայուն զարգացմանը նվիրված դասընթացներում ֆորմալ եւ ոչ ֆորմալ կրթական համակարգերում: Վերջին տարիներին նման դասընթացներ կարդացվում են ՀՀ մի շարք ԲՈՒՀ-երում:

4.6.4 Բնապահպանություն

Միջոցներ ձեռնարկել բնապահպանության լավ կառավարման համար անհրաժեշտ պայմաններն ապահովելու համար եւ սկսել դրանց կիրառումը՝

- *ուժեղացնել վարչական կառույցները եւ ընթացակարգերը՝ բնապահպանությանը առնչվող խնդիրների ռազմավարական ծրագրավորումը, ինչպես նաեւ համապատասխան մասնակիցների միջեւ համակարգումն ապահովելու նպատակով,*
- *սահմանել ընթացակարգեր բնապահպանական տեղեկատվության մատչելիության եւ հասարակայնության մասնակցության վերաբերյալ՝ այդ թվում կիրառելով Օրհուսի կոնվենցիան,*
- *պատրաստել կանոնավոր հաշվետվություններ շրջակա միջավայրի վիճակի մասին,*
- *ամրապնդել շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցության գնահատման կառույցներն ու գործառնությունները,*
- *ստեղծել հաղորդակցական ռազմավարություններ բնապահպանության քաղաքականության առավելությունների մասին, աջակցել քաղաքացիական հասարակության դերակատարներին եւ տեղական իշխանություններին:*

ՀՀ բնապահպանության նախարարությունում բնապահպանության լավ կառավարում ապահովելու համար կատարվել են կառուցվածքային որոշ փոփոխություններ: Փոփոխությունների արդյունքում տարանջատվել են

քաղաքականության մշակման եւ իրականացման գործառույթները եւ դրանց համար պատասխանատու ստորաբաժիններն ու կազմակերպությունները:

ՀՀ կառավարության որոշմամբ բնապահպանության նախարարության աշխատակազմի հիդրոօդերեւութաբանության եւ շրջակա միջավայրի մոնիթորինգի գործակալությունը վերակազմակերպվել է օդերեւութաբանության եւ մթնոլորտի աղտոտվածության մոնիթորինգի բաժնի՝ նախարարության աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանման կարգավիճակով, անտառների պահպանության, պաշտպանության, վերարտադրության եւ օգտագործման գործառույթներն իրականացնող "Հայանտառ" պետական փակ բաժնետիրական ընկերությունը ՀՀ կառավարության որոշմամբ վերակազմակերպվել է "Հայանտառ" պետական ոչ առևտրային կազմակերպության եւ տեղափոխվել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության ենթակայության տակ՝ անտառների նկատմամբ վերահսկողության գործառույթները թողնելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությանը, ստեղծվել է "Հիդրոերկրաբանական մոնիթորինգի կենտրոն" պետական ոչ առևտրային կազմակերպությունը, որը գործում է ՀՀ բնապահպանության նախարարության ենթակայությամբ, "Թափոնների ուսումնասիրության կենտրոն" պետական ոչ առևտրային կազմակերպությունը, որը գործում է ՀՀ բնապահպանության նախարարության ենթակայությամբ:

Օրհուսի Կոնվենցիայի վավերացումից ի վեր ՀՀ-ում սկիզբ է դրվել գործընթացի, որն իրականացվող բոլոր պետական նշանակության ծրագրերում ապահովելու է տեղեկատվության մատչելիության եւ հանրային իրազեկման խնդիրների ներառումը:

Անցկացվել են բազմաթիվ միջոցառումներ, որոնց նպատակներից է եղել հանրային իրազեկության բարձրացումը. այդ գործընթացում մեծ ակտիվություն են ցուցաբերում բնապահպանական հասարակական կազմակերպությունները: Ստեղծվել են հասարակական դաշինքներ, որոնք ակտիվ մասնակցում են բնապահպանական ոլորտում տարվող քաղաքականության մշակման գործընթացին եւ իրենց ուժերի չափով պայքարում զանազան խախտումների, անօրեն գործունեության դեմ:

ՀՀ նախարարությանն առընթեր գործում են մի շարք ինտերնետային կայքեր, որոնք պարունակում են բնապահպանական տեղեկատվություն: Մշակվել եւ հրատարակվել են համապատասխան նյութեր թե՛ հասարակական կազմակերպությունների, թե՛ պետական մարմինների կողմից:

ԵԱՀԿ-ի հայաստանյան գրասենյակի աջակցությամբ Երևանում եւ ՀՀ չորս մարզերում ստեղծվել են Հասարակական բնապահպանական տեղեկատվության կենտրոններ (Օրհուս կենտրոններ. եւս երեքը նախատեսվում է): Կոնվենցիայի քարտուղարություն է ներկայացվել Օրհուսի Կոնվենցիայի դրույթների իրականացման վերաբերյալ 2-րդ Ազգային Զեկույցը: Այն ընդունվել է Քարտուղարության կողմից եւ ներկայացվելու է Կոնվենցիայի Կողմերի 3-րդ հանդիպմանը, որը կայանալու է 2008թ հունիսին Ռիգայում (Լատվիա):

Միջոցներ ձեռնարկել շրջակա միջավայրի վատթարացումը կանխարգելելու, մարդու առողջության պաշտպանության եւ բնական ռեսուրսների բանական օգտագործման ուղղությամբ՝ Յոհաննեսբուրգի գազաթաժողովի

շրջանակներում ձեռք բերված պայմանավորվածություններին համապատասխան

- մշակել օրենսդրություն եւ հիմնական ընթացակարգեր ու ապահովել բնապահպանության համակարգի առանցքային ոլորտների պլանավորումը՝ ներառելով մասնավորապես բնապահպանական ազգային գործողությունների ծրագրում սահմանված ոլորտները (հստակեցնել բնագավառները, դրանք, օրինակ, կարող են ընդգրկել օդի որակը, ջրի որակը, թափոնների կառավարումը եւ բնության պաշտպանությունը),
- ամրապնդել վարչական կարողությունները, ներառյալ թույլտվությունների հատկացման, ինչպես նաեւ իրականացման եւ վերահսկման համար,
- շարունակել մշակել եւ իրականացնել առկա ազգային ծրագրերը եւ նախագծերը կենսաբազմազանության եւ հատուկ հսկվող տարածքների, ջրային ռեսուրսների ինտեգրացված կառավարման, թափոնների կառավարման, անապատացման ոլորտներում:

ՀՀ կառավարությունը պարտավորվել է իրականացնել մի շարք բարեփոխումներ, որոնք նպատակ ունեն հզորացնել երկրի ընդհանուր զարգացումը եւ ճանապարհ հարթել դեպի Եվրամիություն՝ օգտագործելով ԵՄ անդամակցության մեթոդաբանությունը:

Բնապահպանական քաղաքականության ուղղություններն ամրագրված են Հայաստանի Հանրապետության օրենսդրական ակտերով եւ իրականացվում են համապատասխան ինստիտուցիոնալ հզորությունների միջոցով: Բնապահպանության ոլորտում ՀՀ կողմից տարվող քաղաքականությունը հիմնականում ձեւավորվել է միջազգային պայմանագրերի պահանջների հիման վրա եւ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, միջազգային պայմանագրերն ունեն բարձրագույն իրավաբանական ուժ: ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերը հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են, եւ եթե դրանցում սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են պայմանագրի նորմերը: Միջազգային պայմանագրերի նորմերը ենթակա են անմիջական կիրառման Հայաստանի Հանրապետությունում:

ՀՀ-ն ստորագրել-վավերացվել է շուրջ 17 միջազգային եւ տարածաշրջանային կոնվենցիաներ, որոնց անդամակցում է: Մասնավորապես անդամակցել է Կլիմայի փոփոխության Կիոտոյի արձանագրությանը, Օրհուսի կոնվենցիային, Լանդշաֆտների Եվրոպական կոնվենցիային, Եվրոպայի վայրի բնության եւ բնական միջավայրի պահպանության մասին Բեռնի կոնվենցիային եւ այլն: Հայաստանում բնապահպանական խնդիրներում բացի Բնապահպանության նախարարությունից ներգրավված են մի շարք այլ նախարարություններ, ինչպիսիք են Ֆինանսների եւ Էկոնոմիկայի, Առողջապահության, Գյուղատնտեսության, Ներքին գործերի, Արդարադատության եւ Պետական եկամուտների նախարարությունները:

Վերջին տարիներին Հայաստանը զգալի առաջընթաց է ունեցել իր օրենսդրական դաշտը Եվրոպական միասնական շուկայի նորմերին համապատասխանեցնելու հարցում:

Հայաստանի Հանրապետության բնապահպանության բնագավառը կանոնակարգող օրենսդրությունը սկսել է ձևավորվել 1991թ.: Այս տարիների ընթացքում ընդունվել են 27 օրենսգրքեր եւ օրենքներ ու դրանց կիրարկումն ապահովող բազմաթիվ ենթաօրենսդրական ակտեր, իսկ 2000թ. հետո ընդունված օրենսգրքերից եւ օրենքներից 6-ն ընդունվեցին 90-ական թվականներին ընդունված օրենքների փոխարեն եւ ԵՄ-Հայաստան օրենսդրությունների մոտարկման շրջանակներում: Այս կոնտեքստում ընդունվեցին նոր ՀՀ հողային օրենսգիրքը, ՀՀ ջրային օրենսգիրքը, "Ընդերքի մասին" ՀՀ օրենսգիրքը, ՀՀ անտառային օրենսգիրքը, ինչպես նաեւ մշակվել են "Բնապահպանական ֆոնդի մասին" ՀՀ օրենքի, "Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին" ու "Բնապահպանական փորձաքննության մասին", "Օգոնային շերտը քայքայող նյութերի մասին", "Կենդանի վերափոխված օրգանիզմների գործածության մասին" ՀՀ նոր օրենքների նախագծերը: Ինչպես նաեւ 1996թ. սեպտեմբերի 24-ի "Աղտոտման ինտեգրացված կանխման եւ հսկողության մասին" Խորհրդի թիվ 96/61/EC դիրեկտիվի դրույթների ապահովման շրջանակներում՝ "Բնապահպանական օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ ինքնահսկում իրականացնելու մասին" ՀՀ օրենքների նախագիծը:

Հայաստանի Հանրապետության օրենսդրական հիմնական բացերից մեկը բնապահպանության ոլորտի ընդհանուր քաղաքականության շրջանակների օրենսդրական կարգավորումն է, որը կերաշխավորեր շրջակա միջավայրի առանձին բաղադրիչների համալիր կառավարումը եւ կապահովեր միջազգային պայմանագրերով ամրագրված ընդհանուր բնույթ կրող այնպիսի խնդիրների լուծման միասնական մոտեցումները, ինչպիսին են քաղաքականության, ծրագրերի, ռազմավարությունների ու գեկոյցների մշակումը, կայուն զարգացումը, կայուն կառավարումը, կայուն օգտագործումը (պահպանումը), ստանդարտների, մեթոդների ու նորմատիվների կիրառումը, տեխնոլոգիաների փոխանցումը, փոխանակումն ու կիրառումը, մոնիտորինգի եւ ուսումնասիրությունների իրականացումը, տեղեկատվության հավաքը, ներկայացումն ու փոխանակումը եւ այլն:

Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունը մշակում եւ իրականացնում է Շրջակա միջավայրի պահպանության ու բնական ռեսուրսների օգտագործման բնագավառի պետական քաղաքականությունը: Մշակվել (վերանայվել/վերանայման փուլում են), հրապարակվել եւ իրականացման փուլում են "Շրջակա միջավայրի պահպանության գործողությունների ազգային ծրագիրը", "Սեւանա լճի էկոլոգիական հավասարակշռության վերականգնման ծրագիրը", "Աղբատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը", "Կոռուպցիայի դեմ պայքարի ծրագիրը", "Հազարամյակի մարտահրավերներ ծրագիրը", "Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության ապահովմանն ուղղված ՀՀ բնապահպանության նախարարության գործունեության հիմնական ուղղությունների նախագիծը" եւ այլն:

Աշխատանքներ են տարվել առանձին ոլորտներում (մշակվել են շրջակա միջավայրի ոլորտների գործողությունների ծրագրեր եւ ռազմավարություններ անապատացման, կենսաբազմազանության եւ հատուկ պահպանվող գոտիների,

օգոնային շերտը քայքայող նյութերի, ինտեգրացված ջրային ռեսուրսների կառավարման եւ կայուն օրգանական աղտոտիչների վերաբերյալ):

Բնականաբար, նշվածը կարող է խոսել այն հանգամանքի մասին որ ՀՀ-ն չի թերանում իր միջազգային պարտավորություններում, նա ակտիվ անդամակցում է զանազան կոնվենցիաների, արձանագրությունների, կատարում բնապահպանական ոլորտի օրենսդրական փոփոխությունները, սակայն նշված առաջընթացը լոկ փաստաթղթային բնույթ է կրում, ցավոք իրականությունն այլ է. անընդհատ ոտնահարվում եւ խախտվում են թե՛ միջազգային կոնվենցիաները, թե՛ օրենքները, որի հետեւանքով էլ ՀՀ-ում առկա են բնապահպանակա լուրջ հիմնախնդիրներ:

Բնապահպանության հարցերում համագործակցության բարելավում

- *կլիմայի փոփոխության վերաբերյալ Կիոտոյի արձանագրությամբ եւ ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայով սահմանված դրույթների կենսագործում,*
- *ապահովել ակտիվ մասնակցություն Եվրամիության Ջրային նախաձեռնության ծրագրի մաս կազմող Արեւելյան Եվրոպայի, Կովկասի եւ Կենտրոնական Ասիայի ենթածրագրում,*
- *վավերացնել Շրջակա միջավայրի մասին ՄԱԿ-Եվրոպական տնտեսական հանձնաժողովի (ECE) շրջանակներում համապատասխան կոնվենցիաները,*
- *սահմանել հարեւան պետությունների հետ տարածաշրջանային սերտ համագործակցության հնարավորությունները մասնավորապես ջրային ոլորտում,*
- *հնարավոր մասնակցություն Եվրոպական բնապահպանական գործակալության առանձին ծրագրերում:*

Հայաստանի Հանրապետությունը 1991թ. անկախ պետություն հռչակվելուց ի վեր ակտիվորեն ներգրավվել է բնապահպանության ոլորտի գլոբալ եւ տարածաշրջանային գործընթացներում եւ համագործակցում է կառույցների (**GEF, WB, EU, USAID, UNECE, UNDP, UNEP, UNIDO, Council of Europe, OECD, OSCE, GWP, REC, BSEC WHO**) եւ օտարերկրյա պետությունների հետ:

ՀՀ-ն անդամակցում է 16 գլոբալ (Կլիմայի փոփոխության Կիոտոյի Արձանագրությունը, Օրհուսի կոնվենցիան, Լանդշաֆտների Եվրոպական կոնվենցիային, Եվրոպայի վայրի բնության եւ բնական միջավայրի պահպանության մասին Բեռնի կոնվենցիային եւ այլն) եւ 11 տարածաշրջանային միջազգային բազմակողմանի բնապահպանական համաձայնագրերին: Ներկայումս քննարկվում են եւս մի շարք համաձայնագրերին միանալու խնդիրները:

ՀՀ-ն, ակտիվորեն ընդգրկվելով Եվրոպայի տարածաշրջանի բնապահպանական գործունեությանը, ընդլայնել է իր մասնակցությունը Եվրոպական խոշորագույն բնապահպանական գործընթացներին, ինչպիսիք են **"Շրջակա միջավայրը Եվրոպայի համար", "Շրջակա միջավայր եւ առողջություն", "Կրթություն հանուն կայուն զարգացման"**:

Հայաստանը, ակտիվ մասնակցելով բազմաթիվ համաժողովների նախապատրաստական գործընթացներին եւ հիմնական քաղաքական փաստաթղթերի մշակմանը՝ մասնավորապես Բելգրադյան համաժողովին,

որդեգրել է ընդունած որոշումները որպես ուղեցույց՝ երկրի հետագա տարիների բնապահպանական ոլորտում գործունեություն ծավալելու համար: Հայաստանը ակտիվացրել է նաև մասնակցությունը մի շարք տարածաշրջանային նախաձեռնությունների իրագործմանը՝ **ԵՄ Ջրային նախաձեռնություն, Շրջակա միջավայր եւ անվտանգություն**: Նախապատրաստվում են նշված ոլորտի համագործակցության ուղղությունների զարգացման շուրջ Տաեքսի ծրագրերով սեմինարների եւ այլ աշխատանքների ձեռնարկումները: Մշակվել եւ ներկայացվել է նաև *TWINNING* ծրագրի հայտը:

Հայաստանի համար Կիոտոյի Արձանագրությանն անդամակցելը բացում է հեռանկարներ տնտեսության շատ ոլորտներում (հատկապես էներգետիկայում), գյուղատնտեսության եւ անտառտնտեսության կայուն կառավարման, անտառվերականգնման եւ անտառապատման, թափոնների վերամշակման ծրագրերում շահավետ միջազգային համագործակցություն իրականացնելու համար: Հաստատվել են Կիոտոյի արձանագրության Մաքուր զարգացման մեխանիզմների հետեւյալ նախագծերը՝ 1. "Արգիչի" ՓՀԷԿ-ի ՄՁՄ նախագիծը, 2. "Ջրագոր" ՓՀԷԿ-ի ՄՁՄ նախագիծը, 3. շարունակվել են Նուբարաշենի աղբավայրից մեթանի օգտահանման ՄՁՄ նախագծի համակարգման աշխատանքները, 4. Լուսակերտի թոչնաբուծական ֆաբրիկայի կենսագազի օգտահանման ՄՁՄ նախագիծը հաստատվել է ՄՁՄ միջազգային գործադիր մարմնի կողմից, ընթացքում են նաև եւս 7 նախագիծ:

Իրականացվում են "Օզոնային շերտը քայքայող նյութերի փոխարինում" ծրագրի աշխատանքները: Արդյունաբերական սառնարաններ արտադրող ՍԱԳԱ գործարանում եւ աերոզոլներ արտադրող "Երկենցաղքիմ" գործարանում տեղադրվել են օզոնասնվտանգ նյութերով աշխատող հոսքագծեր:

Հատուկ նշանակություն է տրվում տարածաշրջանային համագործակցությանը **Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի** գործունեության շրջանակներում:

Շարունակվում է փոխգործակցությունը առանձին երկրների հետ, որոնց թվում են Վրաստանը, Ռուսաստանի Դաշնությունը, Ուկրաինան, Իրանի Իսլամական Հանրապետությունը, Գերմանիայի Դաշնությունը, ԱՄՆ-ն, Ճապոնիան, Շվեդիան եւ այլն:

ՀՔ ԳԾ-ով նախատեսված՝ 2007թ. ընթացքում իրականացվելիք առաջնայնությունների ու միջոցառումների կատարման վիճակը

2007 թվականի ընթացքում իրականացվելիք առաջնայնությունների եւ միջոցառումների ցանկի 21 Բնապահպանությանն առնչվող խնդիրների ծրագրավորում բաժնում ներկայացված են ԵՀՔ ԳԾ շրջանակներում ՀՀ կառավարության 2007թ. ընթացքում իրականացվելիք միջոցառումները, մասնավորապես՝

21.1 մշակել շրջակա միջավայրի պաշտպանության գործողությունների 2-րդ ազգային ծրագիրը,

21.2 ընդունել ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի ռազմավարական էկոլոգիական գնահատման արձանագրության կիրարկման ազգային ռազմավարությունը,

21.3 մշակել ընդերքի եւ հանքային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման ռազմավարությունը,

21.4 պատրաստել տեղեկանք Կիոտոյի արձանագրության իրականացման, ներառյալ Մաքուր զարգացման մեխանիզմի ծրագրերի նախապատրաստմանն ու իրականացմանն ուղղված քայլերի վերաբերյալ:

Ստորև տրված է այն միջոցառումների վիճակը, որոնց կատարման համար որպես պատասխանատու գերատեսչություն է սահմանված ՀՀ Բնապահպանության նախարարությունը:

1. Շրջակա միջավայրի պաշտպանության գործողությունների 2-րդ ազգային ծրագրի մշակում / մշակվել է, եւ նախագիծը տրվել է Կառավարություն՝ հաստատման:

1998թ. ՀՀ կառավարության կողմից հավանության էր արժանացել Շրջակա միջավայրի պահպանության գործողությունների առաջին ազգային ծրագիրը (ՇՄՊԳԱԾ-1): Այն ՀՀ առաջին բնապահպանական ռազմավարական շրջանակային պլանային փաստաթուղթն էր, որը հասցեագրեց բնապահպանական խնդիրները, մշակեց գործողությունների համալիր ծրագիր՝ դրանք լուծելու համար:

Ընդհանուր առմամբ կարելի է ասել որ ՇՄՊԳԱԾ-1-ի իրականացումը ապահովվել է տարբեր տոկոսաչափերով: Նշանակալի արդյունքներ են գրանցվել բնապահպանական օրենսդրության եւ կարգավորման բնագավառներում, բնագավառային ռազմավարությունների եւ զարգացման ծրագրերի մշակման ու իրականացման մասով: Մշակվել են Ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման ծրագիր, Կենսաբազմազանության ռազմավարություն եւ գործողությունների ծրագիր, Անապատեցման դեմ պայքարի ազգային գործողությունների ծրագիր, Ազգային անտառային քաղաքականություն ու ռազմավարություն եւ այլն: Իրականացված մի շարք ռազմավարական եւ պիլոտային ծրագրերը համահունչ են ՀՀ կառավարության ռազմավարական նպատակներին, այդ թվում Աղքատության հաղթահարման ազգային ծրագրի նպատակներին:

ՇՄՊԳԱԾ-2-ի նախապատրաստման անհրաժեշտությունը պայմանավորված է ՇՄՊԳԱԾ 1-ի ընդունումից մինչեւ օրս տեղի ունեցած փոփոխություններով, ոչ միայն բնապահպանության այլ նաեւ տնտեսական, սոցիալական ոլորտներում: Բնության պահպանությունը դինամիկ է, իսկ ՇՄՊԳԱԾ 1-ը՝ որպես շրջանակային ռազմավարական փաստաթուղթ, չէր նախատեսում դրա պարբերաբար թարմացումը:

ՇՄՊԳԱԾ-2-ը հասցեագրում է բնապահպանական ներկայիս խնդիրները, նախատեսում այն ժամանակահատվածը, երբ այդ խնդիրները կիրականանան, այդ խնդիրներն իրականացնելու ռազմավարական մոտեցումները եւ այլն:

ՇՄՊԳԱԾ-2-ը նախատեսում է առավել համակարգված դարձնել բնապահպանության ոլորտում առկա եւ առաջիկա բնագավառային ռազմավարություններն ու գործողությունների ծրագրերը, անդրադառնալ ինչպես հայտնի, այնպես էլ նոր բացահայտված խնդիրների լուծմանը՝ հաշվի առնելով բնապահպանության ոլորտում ՀՀ միջազգային պարտավորությունները:

2. Ընդունել ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի ռազմավարական էկոլոգիական գնահատման արձանագրության կիրարկման ազգային ռազմավարությունը

Ազգային ռազմավարության նախագիծը մշակվել է 2005թ., եւ ԵՄ-Հայաստան օրենսդրական դաշտի մոտարկման հետ կապված՝ դեռ չի ընդունվել, այն ընդգրկվել է ՀՀ բնապահպանության նախարարության 2008 թվականի գերակա խնդիրներում:

3. Մշակել ընդերքի եւ հանքային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման ռազմավարություն

Մշակվել եւ այժմ լրամշակման փուլում է գտնվում "Հայաստանի Հանրապետության ընդերքի ազգային քաղաքականությունը եւ զարգացման ռազմավարությունը", որը ռազմավարական (հայեցակարգային) նշանակություն ունի:

4. Պատրաստել տեղեկանք Կիոտոյի արձանագրության իրականացման, ներառյալ Մաքուր զարգացման մեխանիզմների ծրագրի նախապատրաստմանն ու իրականացմանն ուղղված քայլերի վերաբերյալ

Համապատասխան տեղեկանքը պատրաստվել է, որտեղ տրված է Կիոտոյի արձանագրության իրականացման, ներառյալ Մաքուր զարգացման մեխանիզմների ծրագրի նախապատրաստմանն ու իրականացմանն ուղղված քայլերի վերաբերյալ, նշենք, որ ընթացքի մեջ են եւ (ՄՁՄ) հաստատված՝

1. Նուբարաշենի կոշտ կենցաղային թափոնների՝ աղբավայրից կենսագազի օգտահանման եւ էլեկտրաէներգիայի ստացման ՄՁՄ նախագիծը,
2. Լուսակերտի թոչնաբուծական ֆաբրիկայում կենսագազի գործարանի ՄՁՄ նախագիծը,
3. լիազոր մարմնի (խորհրդի) կողմից հաստատվել է եւ "Եղեգիս փոքր ՀԷԿ"-ի ՄՁՄ նախագիծը,
4. "Ցեմենտի արտադրության տեխնոլոգիական գործընթացի օպտիմալացում եւ էներգախնայողական տեխնոլոգիաների ներդրում" Հրազդանի ցեմենտի գործարանում,
5. "Մինթետիկ կաուչուկի արտադրությունում բնական գազի փոխարինում բուտադիենով" Նաիրիտ գործարանում:

*Լիլիթ Սարգսյան
"Հայաստանում ԵՀՔ ԳԾ
մոնիթորինգ" ծրագրի փորձագետ*